

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ**

ԱՐՍԵՆ ՀՐԱՆՏԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՏԱՐԱՃՔՆԵՐԻ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՐ ԱՏԱԿԱԳՃԱՅԻՆ ԻՆՊԻՐՆԵՐԸ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԸ .00.01 - «Ճարտարապետությունը» մասնագիտությունը
ճարտարապետության թեկնածուի գիտականաստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝
ճարտարապետության թեկնածու, պրոֆեսոր
Ա. Ա. Ալոյան

ԵՐԵՎԱՆ 2016

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ	4
ԳԼՈՒԽ1. ՏԱՐԱԾՔԻ ՔԱՂԱՔԱՃԻՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ	11
1.1. ՔԱՂԱՔԱՃԻՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՃԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	11
1.2. ՔԱՂԱՔԱՃԻՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ	25
1.2.1. Հայաստանի Հանրապետությանը 25	
1.2.2. Արտերկիր 33	
1.3. ՏԱՐԱԾՔԻ ՔԱՂԱՔԱՃԻՆԱԿԱՆ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ	40
1.3.1. Քաղաքային ձևաբանությանը 42	
1.3.2. Տարածքային սիստեմ 45	
1.3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր 54	
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՍՏ ԱՌԱՋԻՆ ԳԼԽԻ	58
ԳԼՈՒԽ2. ԱՐԺԵՔ ՁԵՎԱՎՈՐՈՂ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ	60
2.1. ՔԱՂԱՔԱՃԻՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՏԱՐԵՐԻ, ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ	60
2.1.1. Տարրեր 62	
2.1.2. Կապեր 66	
2.2. ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ.....	73
2.3. ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ.....	89
2.3.1. Հիմնական կառուցվածքահատակագծային տարրեր 90	
2.3.2. Փողոցատրանսպորտային ցանց 93	
2.3.3. Համակարգում և համադրում 97	
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՍՏ ԵՐԿՐՈՐԴ ԳԼԽԻ	99
ԳԼՈՒԽ3. ՔԱՂԱՔԱՃԻՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼ ԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	102
3.1. ՏԱՐԱԾՔԻ ՔԱՂԱՔԱՃԻՆԱԿԱՆ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԸ	102

3.2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՅ ԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒ ԹՅՈՒՆԸ	106
3.2.1. Ընթացակարգեր	106
3.2.2. Տարածական և անավորման փաստաթղթերի մշակման և փորձաքննություն գործընթացը	111
3.2.3. Քաղաքային տարածքների քաղաքաշինական կանոնակարգման և րացուցիչ պայմանները	114
3.3. ՔԱՂԱՔԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ	117
3.3.1. Քաղաքացիական հասարակություն	117
3.3.2. Կառուցվածքային և հորինվածքային հանգույցներ	119
3.3.3. Համալիր համապարփակ մոդել	123
ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՍՏ ԵՐՐՈՐԴ ԳԼԽԻ	127
ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	129
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ	132
ՀԱՎԵԼ ՎԱՃԵՐ	143

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը

Երևանի քաղաքաշինական զարգացման ներկայացված մանրագրում, երբ հիմնականում առաջնորդվելով մեծածավալ ներդրումային ծրագրերով՝ քաղաքը կառուցապատվում և կերպափոխվում է արագ տեմպերով, առաջանում է տարաբնույթ տարածքների՝ մասնավորապես առանձին կառուցվածքահատակագծային հանգույցների քաղաքաշինական արժեքը բնորոշող ճարտարապետանախագծային գործոնները բազմակողմանիորեն հաշվի առնելու անհրաժեշտություն:

Չաճախ չհիմնավորված քաղաքաշինական միջամտության են ենթարկվում քաղաքի պատմականորեն ձևավորված տարածքները, ինչի արդյունքում խախտվում են կարևոր կառուցվածքահատակագծային հանգույցները, վերացվում են մշակութային և պատմական արժեքներ կայացնող ճարտարապետական հուշարձաններ: Գործընթացը հանգեցնում է քաղաքի տարածքների որակական և քանակական կերպափոխման և քաղաքաշինական արժեքի նվազմանը:

01.08.2003թ.-ի «ՀՀ պետական քաղաքաշինական կադաստր» I-2.03-03 ՀՀԾՆ-ի համաձայն՝ տարածքի քաղաքաշինական արժեքը հասարակության կողմից տարածքի վիճակին և դրա օգտագործմանն առաջադրվող որոշակի պահանջները բավարարելու՝ տվյալ տարածքի հնարավորության չափն է, իսկ գործող «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» 30-01-2014 ՀՀԾՆ-ը սահմանում են դրա ձևավորման վրա ազդող գործոնները: Գործնականում տարածքի քաղաքաշինական արժեքը որոշվում է փորձագիտական գնահատման միջոցով, որը չունենալով հստակ հաշվարկային մեթոդաբանություն՝ ոչ միշտ է օբյեկտիվ: Ակնհայտ է, որ քաղաքի հետագա ճարտարապետահատակագծային զարգացման կանոնակարգման և քաղաքաշինական գործունեության կառավարման նպատակով անհրաժեշտ է տարածքի քաղաքաշինական արժեքի որոշման մեխանիզմների կատարելագործում, ինչպես նաև նոր մեթոդների և գործիքակազմի ներդրում:

Երևանում քաղաքաշինական բարձրարժեք տարածքների պահպանման խնդրի արդիականության մասին է վկայում 2013թ. «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի ընդունումը: Դրա հիմնական նպատակն է՝ իրավական հենքի ստեղծման միջոցով նախանշել Երևանի զարգացման ընթացքում փոքր կենտրոնի բարձրարժեք ճարտարապետական կերպարի միասնականության, կառուցապատման գեղագիտական միջավայրի կատարելագործման, առողջ և գրավիչ կենսամիջավայրի ձևավորման ապահովումը՝ խնդրո առարկա տարածական գոտու առանձնահատկություններից բխող հատուկ և լրացուցիչ պայմանների ու սահմանափակումների ամրագրման միջոցով: Հայեցակարգի համաձայն՝ «Փոքր կենտրոն»-ի և դրա անմիջական ազդեցության (բուժերային) գոտիների սահմաններում ընդգրկված տարածքն անհրաժեշտ է առանձնացնել որպես ազգային կարևորություն ունեցող քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ, որի սահմանագծերը նախատեսվում է սահմանել ՀՀ կառավարության որոշմամբ:

Վերջին տարիներին ՀՀ կառավարության որոշումներով Երևան քաղաքում առաջնահերթության կարգով՝ որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ են առանձնացվել հանրապետական նշանակության միջարք վարչական շենքեր և համալիրներ: Սահմանվել են նաև քաղաքամերձ համայնքների հետ սահմանակից հատվածներում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացման հնարավորությունները: Տարածքի քաղաքաշինական արժեքը հաշվի է առնվում նաև տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման գործընթացում: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ նշված կարգավորման միջոցները բավարար չեն քաղաքաշինական բարձրարժեք տարածքների պահպանումը լիարժեքորեն ապահովելու համար:

Միջարք երկրներում կարևորվում է քաղաքաշինական բարձրարժեք տարածքների պահպանման և զարգացման հարցը, որը կարգավորվում է օրենքով սահմանված կարգով: Դեռևս 1962 թ.-ից Ֆրանսիայի քաղաքներում կառավարության կողմից առանձնացվում

են «Պահպանվող սեկտորներ» (Secteur Sauvegarde), որոնց զարգացման և կառուցապատման համար սահմանվում են օրենսդրական և ֆինանսական կարգավորման մեխանիզմներ: Դանիայում գործող «Միջավայրում ճարտարապետական արժեքի տեղեկագիրը» (Survey of the Architectural Value in the Environment – SAVE) շինությունների կամ համալիրների պահպանման նպատակով դրանց գնահատման մեթոդակարգ է: «Ազգային կարևորության տարածքներ և նախագծեր» (Spaces and Projects of National Importance – SAPONI) նախաձեռնության նպատակը Շվեյցարիայի տարածքային նախագծման ապագա մարտահրավերների ուսումնասիրությունն ու տարածքային զարգացման հեռանկարների մշակումն է:

Երևանի ճարտարապետության և քաղաքաշինության վերաբերյալ ուսումնասիրություններ կատարել են Յ.Խալ պախչյանը, Մ.Գասպարյանը, Ա.Նիկոյանը [1], Է.Յարությունյանը՝ քաղաքի պատմական զարգացման վերաբերյալ, Ս.Թովմասյանը՝ տարածական պլանավորման հիմնահարցերի առնչությամբ, Ա.Ալոյանը [2], Ս.Քալաշյանը, Ն.Պետրոսյանը և Չ.Մամյանը [3]՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման խնդիրների վերաբերյալ, Յու.Սաֆարյանը [4], Գ.Ռաշիդյանը [5] և Կ.Ազատյանը առանձին քաղաքային հանգույցների ճարտարապետության վերաբերյալ, Ս.Օհանյանը [6], Յ.Առուստամյանը և Կ.Բերբերյանը [7]՝ քաղաքի կենտրոնի քաղաքաշինական խնդիրների և քաղաքային միջավայրի պահպանման և արդիականացման վերաբերյալ: Ընդհանուր առմամբ խոշոր քաղաքների ձևավորման և քաղաքաշինական զարգացման վերաբերյալ ուսումնասիրությունները տեղ են գտել Կ.Լինչի, Վ.Գլադիչևի, Ա.Գուտնովի աշխատություններում: Քաղաքի հատակագծային կառուցվածքի և կենսագործունեության միջև կապի ուսումնասիրություններ կատարել են Վ.Կրիստալերը, Բ.Յիլլերը, Ջ.Յանսենը, Մ.Բետտին, Բ.Ջիանգր, Ա.Տյորները և ուրիշները:

Այդուհանդերձ, կատարված ուսումնասիրություններում տարածքի քաղաքաշինական արժեքը չի դիտարկվել որպես առանձին ուսումնասիրության առարկա: Տվյալ հետազոտությունն անդրադառնում է քաղաքի նախագծման և կառուցապատման

գործընթացներում տարածքի քաղաքաշինական արժեքի հաշվի առնման, գնահատման և ներդրման միջոցների մշակմանը:

Յեռագոտության նախակետ` Երևանի քաղաքաշինական բարձրարժեք տարածքների զարգացման միտումների և առանձնահատկությունների ուսումնասիրության հիման վրա, մշակել մոտեցումներ և տալ համապատասխան առաջարկություններ տարածքների քաղաքաշինական արժևորման մեթոդների կատարելագործման, կանոնակարգման և ռեգեներացման ուղղությամբ:

Յեռագոտության հիմնական խնդիրներն են.

- դուրս բերել քաղաքաշինական բարձրարժեք տարածքների ժամանակակից առանձնահատկությունները և զարգացման արդի միտումները Յայաստանում և արտերկրում,
- ուսումնասիրել քաղաքաշինական բարձրարժեք տարածքների բաղադրիչները, կազմավորման հիմնական օրինաչափությունները և պայմանները, արդիականացման և զարգացման հիմնական գործոնները և չափանիշները,
- բացահայտել քաղաքաշինական բարձրարժեք տարածքների փոխակերպման օրինաչափությունները Երևանի զարգացման տարբեր փուլերում,
- մշակել տարածքի քաղաքաշինական արժեքի գնահատման չափանիշներ և քանակական արժևորման հաշվարկային մեթոդներ,
- տալ քաղաքաշինական բարձրարժեք տարածքների ճարտարապետահատակագծային կանոնակարգման և կայուն զարգացման գիտականորեն հիմնավորված առաջարկություններ:

Յեռագոտության մեթոդիկան.

- Գրականության, արխիվային և նախագծային նյութերի, օրենսդրական և նորմատիվային ակտերի ուսումնասիրություն և վերլուծություն, արտերկրի և տեղական փորձի ուսումնասիրություն, համեմատական վերլուծություններ, բնապայման հեռագոտություն,
- Յամակարգային վերլուծություն,

- Տրամաբանական և մաթեմատիկական մոդելներին մշակում:

Չեռազոտության առարկան ներառում է երևանի քաղաքաշինական բարձրարժեք տարածքների ճարտարապետահատակագծային խնդիրները, դրանց արժևորման և պահպանման միջոցները:

Չեռազոտության սահմաններն ընդգրկում են երևանի ամբողջ տարածքը՝ 19-րդ դարի կեսից մինչ օրս ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև տվյալ ոլորտում միջազգային փորձը:

Չեռազոտության գիտական նորույթը

Սահմանվել են տարածքի քաղաքաշինական արժեքի համալիր գնահատման չափանիշները, դրանց հիմնական բնութագրերը և գնահատման ամբողջական համակարգը:

Մշակվել և առաջարկվել է երևանի տարածքների քաղաքաշինական արժեքի համալիր գնահատման մեթոդաբանություն՝ իլրումն գործող փորձագիտական գնահատման մեթոդի:

Մեթոդաբանության կիրառմամբ կազմվել է երևանի տարածքների քաղաքաշինական արժեքի քարտեզ: Ելնելով դրանից՝ առաջարկվել են լրացուցիչ քաղաքաշինական և օրենսդրական կարգավորման միջոցներ:

Առաջարկվել են տարածքի քաղաքաշինական արժեքի որոշման համալիր գնահատման մեթոդաբանության կիրառման ուղղություններ քաղաքի նախագծման և կառուցապատման գործընթացներում:

Պաշտպանության են ներկայացվում.

- տարածքի քաղաքաշինական արժեքի գնահատման մեթոդաբանությունը,
- երևանի տարածքների դասակարգումն ըստ քաղաքաշինական արժեքի,
- քաղաքաշինական բարձրարժեք տարածքների պահպանման և զարգացման մեթոդները,
- գիտականորեն հիմնավորված առաջարկներ և հանձնարարականներ քաղաքաշինական բարձրարժեք տարածքների

քաղաքաշինական և օրենսդրական կարգավորման մեթոդների կատարելագործման վերաբերյալ :

Աշխատանքի գործնական նշանակությունը

Հետազոտությունը կարող է հիմք հանդիսանալ տեղական ինքնակառավարման

մարմինների կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության և երևանի զարգացման ընթացքում տարածքի քաղաքաշինական արժեքի պահպանման և աճի ապահովման համար :

Ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել ինչպես երևան քաղաքի նախագծային փաստաթղթերի մշակման գործընթացում այնպես էլ համալսարանական դասախոսություններում : Ուսումնասիրության արդյունքները ներդրված են ՃՀԱՀ-ի «Ճարտարապետություն» մասնագիտության մագիստրական ուսումնական ծրագրում, որպես «Գիտության տեսություն և գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանություն» առարկայի բաղկացուցիչ մաս :

Աշխատանքի փորձառականությունը

Աշխատանքի հիմնական դրույթները քննարկվել են «Ճարտարապետության և շինարարության արդի հիմնախնդիրները» 7-րդ միջազգային գիտագործնական գիտաժողովում 2015թ. (Ֆլորենցիա), ՃՀԱՀ-ի Ճարտարապետության տեսություն, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման և վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնում 2015, 2016 թթ.:

Հրատարակումներ

Ատենախոսության թեմայով հրատարակված է 5 գիտական հոդված :

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է տեքստային և գրաֆիկական մասերից՝ ներկայացված մեկ հատորով : Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 133 էջ՝ ներածություն, երեք գլուխ, եզրակացություններ, հրատարակված աշխատանքների և 107 անուն

օգտագործված գրականության ցանկ: Գրաֆիկական մասը բաղկացած է 28 պատահից, որոնք ներառում են գծագրեր, գրաֆիկներ, լուսանկարներ, սխեմաներ, աղյուսակներ (Չավելված 1):

**ԳԼՈՒԽ 1. ՏԱՐԱԾՔԻ ՔԱՂԱՔԱԶԻՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ**

1.1. ՔԱՂԱՔԱԶԻՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդի քաղաքաշինական պրակտիկայում տարածական պլանավորման և օրենսդրական փաստաթղթերի մշակման համար առանցքային դեր ունի տարածքի քաղաքաշինական արժեքը, սակայն երևանի կառուցապատման արդի միտումները վկայում են գործնականում դրա գործոնների, հաշվարկման մեթոդների և կիրառման միջոցների ոչ լիարժեքության մասին:

Ուստի անհրաժեշտ է ուսումնասիրել տարածքի քաղաքաշինական արժեքի հայրենական սահմանումները, դրանցով ամրագրված արժեք ձևավորող գործոնները, ինչպես նաև արտերկրի քաղաքաշինական նախագծման ուղղությունները՝ դրանց հիմնադրույթներում առկա քաղաքաշինական արժեքի բաղադրիչների դուրսբերման նպատակով (Հավելված 2, նկ.2):

«Տարածքի քաղաքաշինական արժեք» հասկացությունը .

Վերլուծվել են «տարածքի քաղաքաշինական արժեք» հասկացությունը և դրա կիրառման առանձնահատկությունները հայրենական քաղաքաշինական պրակտիկայում: 01.08.2003թ.-ի «ՀՀ պետական քաղաքաշինական կադաստր» I-2.03-03 ՀՀԾՆ-ի համաձայն՝ տարածքի քաղաքաշինական արժեքը հասարակության կողմից տարածքի վիճակին և դրա օգտագործմանն առաջադրվող որոշակի պահանջներ բավարարելու՝ տվյալ տարածքի հնարավորության չափն է [8, էջ 2]: «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» 30-01-2014 ՀՀԾՆ-ը ամրագրում է տարածքի քաղաքաշինական արժեքի գործոնները: Ըստ այդ գործոնների՝ սահմանված են տարածքների տարբեր քաղաքաշինական արժեքավորության գոտիներ՝ բարձր, միջին և ցածր, որոնց համար, ըստ քաղաքի բնակչության քանակի, ամրագրված են բնակչության թույլատրելի նվազագույն խտությունները [9]:

30-01-2014 ՀՀԾՆ-ի համաձայն՝ տարածքի քաղաքաշինական արժեքը ձևավորվում է՝ հաշվի առնելով.

- հողի արժեքը,
- ինժեներական և տրանսպորտային մայրուղային ցանցերի խտությունը,
- հասարակական նշանակություն ունեցող օբյեկտներով հագեցվածությունը,
- տարածքի ինժեներական նախապատրաստումը,
- ներդրումային գրավչությունը:

Նշված գործոններով գնահատման արդյունավետությունը բացահայտելու նպատակով կատարվել է Երևանի տարածքների բնապայման ուսումնասիրություն և արժևորում:

ՀՀ կառավարության 24.12.2003թ.-ի «ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» հ.1746-Ն որոշման համաձայն՝ Երևանի հողերի տարածագնահատման գոտիների քանակը ինն է [10]: Գոտիների սահմանների նախագծման համար հստակ ամրագրված հաշվարկային մեթոդի բացակայությունը ենթադրում է, որ դրանք ձևավորված են պայմանական բաժանումների հիման վրա: Գոտիների սահմանները հիմնված են քաղաքի կենտրոնից տարածքի հեռացվածության վրա, և հաշվի չի առնված փողոցային ցանցի յուրաքանչյուր հանգույցի քաղաքաչինական պոտենցիալը:

Ըստ ինժեներական և տրանսպորտային մայրուղային ցանցերի խտության գործոնի՝ դիտարկվել են, դիցուք Ազատության և Կոմիտասի պողոտաների և Սայաթ-Նովա-Տերյան փողոցների խաչմերուկները: Առաջինը բազմամակարդակ փողոցային հանգույց է, իսկ երկրորդը՝ վերջինիս համեմատ ավելի ցածր թողունակությամբ փողոցային խաչմերուկ: Այնինչ Սայաթ-Նովա-Տերյան փողոցներին հարող տարածքում հողի արժեքը և ներդրումային գրավչությունը ավելի բարձր են: Ուստի ինժեներական և տրանսպորտային մայրուղային ցանցերի միայն խտության գնահատումը բավարար չէ փողոցային ցանցի որոշակի հանգույցի քաղաքաչինական արժեքի գնահատման համար:

Ըստ հասարակական նշանակության օբյեկտներով տարածքի հագեցվածության՝ դիտարկվել են քաղաքի երկու տարբեր՝

Սեբաստիա և Յալաբյան փողոցների քաղաքաշինական արժեքը: Առաջինի պարագայում տարածքը կառուցապատված է տարատեսակ հասարակական նշանակության օբյեկտներով, որոնք հիմնականում մանրածախ առևտրի կրպակներ են, ինչը փաստում է տարածքի հագեցվածությունը հասարակական նշանակության օբյեկտներով: Երկրորդի պարագայում առկա են չորս քաղաքաշինական արժեք ձևավորող օբյեկտ՝ Մարգահամերգային համալիրը, Կիևյան կամուրջը, Թումո կենտրոնը և Յրագդանի կիրճը: Կիևյան կամուրջը և քաղաքաշինական դոմինանտ Մարգահամերգային համալիրն ինքնին արժևորում են տարածքը՝ հանդիսանալով ճարտարապետական հուշարձան: Թումո կենտրոնի պարագայում առկա է քաղաքի համար եզակի գործառույթի շենք, ինչը բարձրացնում է շենքի և հարակից տարածքի դերը քաղաքի համար: Դիտարկենք նաև հետիոտնային-առևտրային փողոց Ֆիրդուսը: «Որպես կոմերցիոն կենտրոն այն Երևանի ամենաաշխույժ առևտրային կետերից է, սակայն քանի որ դրա առաջացման գործընթացը չի եղել պլանավորված, այն զուրկ է ճարտարապետական և քաղաքաշինական լուծումներից, իսկ առևտրական միջավայրի կազմակերպման և բարենպաստ պայմանների ապահովման տեսակետից այն ներկայանում է ամենացածր մակարդակով» [11, էջ 79]: Ուստի տարածքը կարող է կառուցապատված լինել հանգույցի սպասարկման համար ոչ պիտանի կամ ցածր կարգավիճակով կամայական գործառույթների մի խումբ օբյեկտներով՝ ստեղծելով հասարակական նշանակության օբյեկտների հագեցվածություն, սակայն իր գործառույթի կամ որակի պատճառով չներկայացնել քաղաքաշինական արժեք: Նկատենք նաև, որ բարձր կարգավիճակով նույնիսկ եզակի օբյեկտի առկայությունը նպաստում է տարածքի արժևորմանը: Յետևաբար, հասարակական նշանակության օբյեկտների հագեցվածությունը ոչ միշտ է ենթադրում քաղաքաշինական բարձր արժեք:

Տարածքի ինժեներական նախապատրաստումը տարածքում բնակչության կենսագործունեության կազմակերպման համար տարրական պահանջներից մեկն է, ուստի դրա բացակայությունը ենթադրում է քաղաքաշինական ցածր արժեք, այնինչ դրա

առկայ ությունը դեռևս չի ենթադրում տարածքի քաղաքաշինական բարձր արժեքը:

Տարածքի ներդրումային գրավչությունը պայմանավորված է դրա բարձր քաղաքաշինական արժեքով, ուստի բարձր ներդրումային գրավչությունը որպես գործոն դիտարկելուց զատ անհրաժեշտ է դուրս բերել նաև ներդրումային գրավչության առաջացման պատճառները:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ըստ սահմանված գործոնների՝ քաղաքային տարածքների գնահատումը լիարժեք չի արտահայտում տարածքի քաղաքաշինական արժեքը: Չնայած քաղաքային տարածքների արժեք ձևավորող գործոնների առկայությանը՝ դրանց ցանկը լիարժեք չէ, ինչպես նաև առկա չէ ըստ դրանց տարածքի գնահատման համապատասխան համալիր մեթոդաբանություն: Արդի պայմաններում տարածքի քաղաքաշինական արժեքը որոշվում է փորձագիտական գնահատման միջոցով, սակայն հստակեցված չէ դրա հաշվարկի եղանակը: Ուստի խնդիրը պահանջում է կանխավ սահմանել տարածքի քաղաքաշինական արժեք ձևավորող գործոնների և արժեքի բաղադրիչների լիարժեք ցանկը հետո միայն մշակել ըստ դրանց գնահատման մեթոդաբանությունը:

Տարածքի քաղաքաշինական արժեքը արտերկրի նախագծային արակտիկայում. Վերլուծության արդյունքում առանձնացվել են արդի արակտիկայում քաղաքաշինական բարձրարժեք տարածքների ձևավորման համար անհրաժեշտ պայմանները և գործոնները: Այդ նպատակով ուսումնասիրվել են քաղաքաշինական նախագծման արտերկրի տեսությունը և փորձը, ինչի հիման վրա արտածվել են դրանց հիմնական սկզբունքները, դրույթները և ամրագրված ուղղությունները: Արտերկրի քաղաքաշինական նախագծման գերակա տեսությունների ամրագրած սկզբունքները կարող են հիմք հանդիսանալ քաղաքաշինական արժեքի նոր գործոնների սահմանման համար: Բացահայտվել է, որ նախագծային մի շարք տեսություններում ամրագրված գործոնները ընդհանուր են ինչպես իրար, այնպես էլ գործող 30-01-2014 ՅՅԾՆ-ի հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կայուն զարգացման ապահովումը

ամրագրված է արդի գրեթե բոլոր նախագծային տեսություններում, այն ընդունվել է գերակամյունների նկատմամբ:

Ուսումնասիրված նախագծային տեսություններ են.

- «Կայուն զարգացում» (Sustainable development),
 - «Կոմպակտ քաղաք» (Compact city),
 - «Խելացի աճ» (Smart growth),
 - «Նոր քաղաքաշինություն» (New urbanism):

«Կայուն զարգացում». Ներկայիս քաղաքաշինական նախագծման գրեթե բոլոր ուղղությունների հիմնախնդիրը կայուն զարգացման ապահովումն է: Այն ենթադրում է սոցիալական, տնտեսական և միջավայրային կայունություն: Կայուն զարգացման առաջին սահմանումը գալիս է Բռունտլանդի հանձնաժողովի գեկոլյցից 1987թ.-ին, որի համաձայն դա «զարգացում է, որը բավարարում է ներկայիս պահանջները առանց զիջելու ապագա սերունդների պահանջները բավարարելու կարողությունները» [12]: Հայեցակարգը հետագայում ունեցել է գործնական զարգացում Ռիո դե Ժանեյրոյում 1992թ.-ին կայացած Շրջակա միջավայրի համաշխարհային գիտաժողովում, որի արդյունքներն են «21» և «21 տեղային» օրակարգերը: Դրանցից վերջինս հետագայում ընդունվել է բազմաթիվ երկրների կողմից:

ԵՄ-ում կայուն զարգացման կարևորության մասին է վկայում «Հողօգտագործման և տրանսպորտի քաղաքականությունների նախագծում և հետազոտում` ուղղված քաղաքաշինական կայունության բարձրացման» գիտական նախագիծը (PROPOLIS - Planning and Research of Policies for Land Use and Transport for Increasing Urban Sustainability): Նախագծի նպատակը քաղաքաշինական ռազմավարությունների գնահատումն է և դրանց հեռանկարային ազդեցությունների բացահայտումը Եվրոպայի տարբեր երկրների քաղաքներում: Ծրագրի իրագործման համար կազմվել է մեթոդաբանությունների շրջանակ, որը ներառում է համալիր հողօգտագործման, տրանսպորտի և շրջակա միջավայրի մոդելներ, ինչպես նաև դրանց գնահատման և ներկայացման համակարգեր [13]:

«Կոմպակտ քաղաք». 1990-ականներին Եվրոպական միությունը «Կոմպակտ քաղաք»-ի կառուցվածքը համարեց կայուն զարգացման

միջոց: Դա հիմնավորվում էր այն եզրահանգումներով, որ կոմպակտ քաղաքային կառուցվածքը կհանգեցնի ավտոմեքենաներից կախվածության նվազման և սոցիալական ենթակառուցվածքների և հասարակական սպասարկման կազմակերպման արդյունավետության բարձրացմանը [14]: Այնինչ արտերկրի նախագծային փորձի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քաղաքի կոմպակտության և կայուն զարգացման միջև կապը կարող է լինել թույլ կամ սահմանափակ փոխկապակցված, իսկ երբեմն՝ նաև հակադարձ կապ [15]:

«Կոմպակտ քաղաքը» քաղաքաշինական նախագծման հայեցակարգ է, որը նախատեսում է բնակավայրերի համեմատաբար բարձր խտություն և խառը հողօգտագործում: Այն հիմնված է հասարակական տրանսպորտի արդյունավետ համակարգի և ըստ հայեցակարգի ջատագովների՝ քաղաքային այնպիսի կառուցվածքի վրա, որը խթանում է հետին տնային շարժումը և հեծանվի օգտագործումը, ինչպես նաև նպաստում է եներգիայի սպառողականության և միջավայրի աղտոտման նվազմանը:

«Կոմպակտ քաղաքի» տեսություն հիմնական սկզբունքներն են՝

1. բնակատեղերի և աշխատավայրերի բարձր խտություն,
2. խառը հողօգտագործում,
3. հողօգտագործման փոքրաբջիջ կառուցվածք (տարատեսակ ծառայությունների մատչելիություն և հողային բջիջների համեմատաբար փոքր չափեր),
4. սոցիալական և տնտեսական փոխհարաբերությունների ավելացում,
5. սահմանակից զարգացում (որոշ բջիջներ կարող են լինել ազատ),
6. Տեսողաբար ընկալելի սահմաններով առանձնացված քաղաքաշինական զարգացում,
7. քաղաքային ենթակառուցվածքներ, հատկապես կոյուղի և ջրատարներ,
8. բազմատեսակ տրանսպորտային միջոցներ,
9. հասանելիություն բարձր մակարդակ՝ տեղային/շրջանային,

10. Փողոցային ցանցի կապակցվածության բարձր մակարդակ (ներքին/արտաքին), ներառյալ մայթերը և հեծանվող ինները,
11. անջրանցիկ մակերեսների բարձր տոկոս,
12. բաց տարածությունների ցածր տոկոս,
13. նախագծման և հողօգտագործման միասնական կառավարում,
14. պետության բավարար կարողություն քաղաքային հաստատության ներքին և ենթակառուցվածքների ֆինանսավորման համար:

«ԽԵԼ ԱՅԻ ԱՃ». 1990թ.-ականների Ամերիկայում ձևավորված և լայն տարածում ստացած քաղաքաշինության զարգացման տեսությունն է, որը նպատակառոշված է քաղաքի աճի ուղղորդմանը դեպի էներգաարդյունավետությունը [16]: Համաձայն ԱՄՆ Միջավայրի պահպանության գործակալության (ՄՊԳ) (U.S. Environmental Protection Agency)՝ «ԽԵԼ ԱՅԻ ԱՃ» զարգացում է, որը ծառայում է տնտեսությանը, համայնքին և միջավայրին [17]:

Շնորհիվ ՄՊԳ ֆինանսավորման՝ «ԽԵԼ ԱՅԻ ԱՃ» սկզբունքները լայն տարածում գտան ԱՄՆ-ում ինչպես օրենսդրական, այնպես էլ քաղաքաշինական և տարածքային նախագծման բնագավառներում: Դրա մասին է վկայում 1990-ականների կեսերին Ամերիկյան նախագծային ասոցիացիայի (American Planning Association) կողմից մեկնարկած «ԽԵԼ ԱՅԻ ԱՃ» նախագիծը, որի արդյունքն էր 1997թ. «ԽԵԼ ԱՅԻ ԱՃ օրենսդրական ուղեցույցը. նախագծային կանոնադրության և փոփոխության կառավարման մոդել»: Նույն տարում Բնական ռեսուրսների պահպանության խորհուրդը (Natural Resource Defence Council) և Վերգետնյա տրանսպորտի ռազմավարական նախագիծը (Surface Transportation Policy project) հրատարակեցին «ԽԵԼ ԱՅԻ ԱՃի գործիքակազմը», որը ընձեռում էր կոմպակտ աճի, խառը հողօգտագործման և տրանզիտային ուղղորդված զարգացման տիպային հայեցակարգեր: ԽԵԼ ԱՅԻ ԱՃի կարևորության մասին է վկայում նաև ԱՄՆ Մերիլ Ենդ Նահանգի կողմից ընդունված «ԽԵԼ ԱՅԻ ԱՃի և շրջակա միջավայրի պահպանության» օրենքը: Այն խրափուսում էր լքված վարելահողերի վերամշակումը, բնականությանը աշխատատեղիս մոտ վայրերում, ենթակառուցվածքների կենտրոնացումը առաջնային

անհրաժեշտության ներդրումային տարածքներում, գյուղական հողերի պահպանությունը և աշխատատեղերի ստեղծման վարկերի տարածքային կենտրոնացումը: Այդուհետ խելացի աճի ծրագրերը խրախուսվեցին տարբեր կազմակերպությունների կողմից՝ սկսած ԱՄՆ «Տնաշինարարների ազգային ասոցիացիայից» (National Association of Home Builders) մինչ Սիեռապուլաբը [17]:

Առկա են «խելացի աճ» տեսություն ամրագրված սկզբունքների տարատեսակ սահմանումներ, սակայն դրանք հիմնականում հետևյալն են.

- խառը հողօգտագործում,
- շենքերի կոմպակտ դիզայնի արժևորում,
- բնակելի ֆունկցիոնալ տեսակային բազմազանություն և ընտրության հնարավորություն,
- հետիոտնային հասանելի թաղամասեր,
- յուրօրինակ, գրավիչ թաղամասերի խրախուսում,
- բաց տարածությունների, գյուղական բնապատկերների և կրիտիկական միջավայրային տարածությունների պահպանություն,
- զարգացում՝ ուղղորդված դեպի գոյություն ունեցող համայնքը,
- երթևեկության միջոցների տեսակային բազմազանություն,
- զարգացման որոշումների կանխատեսելիություն, արդարամտություն և արդյունավետություն,
- ծրագրվող որոշումներում համայնքի և շահառուի համագործակցության խրախուսում:

«Նոր քաղաքաշինություն». քաղաքաշինական նախագծման շարժում է, որը առաջ է եկել ԱՄՆ-ում 1980թ.-ականներին: Ըստ 1996թ. կազմավորված Նոր քաղաքաշինության կոնգրեսի՝ շարժումն ուղղված է ընդդեմ քաղաքային սահմանների անհիմն ընդարձակման, ռասայական և սոցիալական տարբեր ոլորտների մեկուսացման, միջավայրի աղավաղման, գյուղատնտեսական հողերի կորստին և քաղաքի կառուցապատված ժառանգության էրոզիային [18]:

Քաղաքային ժառանգությունն տերմինը առաջին անգամ օգտագործվել է Իտալիայում 1930-ական թվականներին: Այն

հետագայում հիմք է հանդիսացել Ֆրանսիայի «Պահպանվող սեկտորների» քաղաքականության մշակման համար:

«Նոր քաղաքաշինության» տեսության ամրագրած սկզբունքներն են.

- հետիոտնային հասանելիություն,
- կապակցվածություն,
- բազմաֆունկցիոնալություն և բազմազանություն,
- բնակելի ֆունդի տեսակային բազմազանություն,
- որակյալ ճարտարապետություն և քաղաքաշինական դիզայն,
- ավանդական թաղամասային կառուցվածք,
- խտության ավելացում,
- «խելացի» երթևեկություն,
- կայուն զարգացում,
- կյանքի որակի ապահովում [19]:

Յետիոտնային հասանելիություն. Ենթադրում է առավելագույն քանակի հաստատությունների առկայություն տասը րոպե հետիոտնային շարժման սահմաններում: Տվյալ դրույթը ամրագրում է նաև պահանջներ քաղաքային տարածքների կառուցապատման և բարեկարգման նկատմամբ՝ տարածքը հետիոտնի համար ավելի գրավիչ դարձնելու նպատակով: Դրանցից են շենքերի տեղակայումը փողոցների մոտ, մայթերին ծառերի, փողոցներում կայանատեղիների առկայություն, նեղ և ցածր արագության փողոցներ, մեքենաներից ազատ հետիոտնային փողոցներ:

Կապակցվածություն. Փողոցային ցանցի փոխկապակցվածությունը նոսրացնում է երթևեկությունը և հեշտացնում հետիոտնային շարժումը, ուստի քաղաքի փողոցային ցանցը պետք է ներկայացնի նեղ փողոցների, պուրակների և նրբանցքների հիերարխիա: Յետիոտնային շարժման բարձրորակ ցանցը և հասարակական տիրույթի առկայությունը զբոսանքը դարձնում են ավելի հաճելի:

Բազմաֆունկցիոնալություն և բազմազանություն. Խանութների գրասենյակների, բնակարանների և տների առկայությունը տեղանքում: Ֆունկցիոնալ բազմազանություն

թաղամասերի և շենքերի ներսում: Մարդկային ֆոնդի տարիքային, եկամտային, մշակութային և ռասայական բազմազանություն:

Բնակելի ֆոնդի տեսակային բազմազանություն. Տարբեր տեսակների, չափերի և արժեքի բնակելի ֆոնդի առկայություն և հետիոտնային մատչելիության սահմաններում:

Որակյալ ճարտարապետական և քաղաքաշինական դիզայն. Շեշտադրում գեղեցկությունը, էսթետիկային, հարմարավետությունը, համայնքի ներսում հասարակական հաստատությունների տեղակայմանը: Մարդկային մասշտաբի ճարտարապետությունը և գեղեցիկ շրջակայքը սնում են մարդկային հոգին:

Ավանդական թաղամասային կառուցվածք. Ենթադրում է կենտրոնի նկատելիություն և սահմանների ընկալում, կենտրոնում հասարակական տարածքների տեղակայում, որակյալ հանրային տիրույթի կարևորություն, հասարակական ազատ տարածքներ նախագծված քաղաքացիական արվեստի ոճով, տասը բոլոր հետիոտնային հասանելիության սահմաններում բազմառեսակ հաստատությունների առկայություն:

Տրանսեկտ նախագծում. Առավելագույն խտություն քաղաքի կենտրոնում և խտության աստիճանաբար նվազում դեպի սահմանները: Տրանսեկտ նախագծման մոտեցումն ինտեգրում է միջավայրային բնապահպանական հարցերը համայնքների նախագծման որոշումում: Այն միաձուլում է բնական և մարդածին միջավայրերը:

Խողջանակալի աղբյուրում. Շենքերի, բնակատեղիների, խանութների և սպասարկման օբյեկտների իրար մոտ տեղակայումը նպաստում է հետիոտնային շարժման հեշտությունը, սպասարկման ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և խթանում է բնակության համար առավել հարմարավետ և հաճելի տարածքի ստեղծմանը: «Նոր քաղաքաշինություն» սկզբունքները կիրառվում են բոլոր տեսակի խտության բնակավայրերում սկսած փոքր գյուղատիպ քաղաքներից մինչև մեծերը:

Ինչպիսի երթևեկություն. Քաղաքները և թաղամասերը կապող բարձր որակի գնացքների ցանցի առկայություն: Հետիոտնի համար մատչելի դիզայն, որը խթանում է հեծանվի, անվաչ մոլշկների,

սկուտերների առավել լայն օգտագործումը և ընդունումը գբոսանքը՝ որպես առօրյա փոխադրման միջոց:

Կայուն գարգացում. Կայուն գարգացումը նախատեսում է միևնույն ազդեցությունն շրջակա միջավայրի վրա, Էկոարդյունավետ տեխնոլոգիաների կիրառում, բնական համակարգերի արժևորում, Էներգաարդյունավետություն, վառելիքի նվազ ծախս, տեղային արտադրության ավելացում, հետիոտնային շարժման գարգացում և երթևեկության նվազեցում:

Կյանքի որակի ապահովում. Վերոնշյալ սկզբունքների կիրառումը կհանգեցնի բնակության համար նպաստավոր վայրերի ստեղծմանը՝ բարելավելով կյանքի որակը:

Արտերկրի քաղաքաշինական նախագծման փորձը ի հայտ է բերում նաև գբոսանքին առնչվող քաղաքային որակներ, որոնք ազդում են մարդու կողմից միջավայրի ընկալման և տարածության մեջ անհատի կողմնորոշման վրա: Ըստ 2005թ. «Զբոսանքին առնչվող քաղաքային որակների բնորոշում և գնահատում» գեկոլյցի, դրանք են՝ տեսարժանությունը, ընթեռնելիությունը, պարփակությունը, մարդկային մասշտաբը, թափանցիկությունը, կապակցվածությունը, կառուցվածքային հագեցվածությունը և համահունչությունը [20]: Դիտարկենք դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը:

Տեսարժանություն (Imageability). տարածքի որակ է, որը դարձնում է այն յուրօրինակ, ճանաչելի և հիշարժան: Տարածքն ունի բարձր տեսարժանություն, երբ որոշակի ֆիզիկական տարրեր կամ դրանց միացություններն ու շարժություններն են գրավում, արթնացնում են զգացմունքներ և ստեղծում են տպավորություններ:

Ընթեռնելիություն (Legibility). առնչվում է տարածքում մարդու կողմնորոշման և տարածքի ընդհանուր ընկալման ունակությանը: Տարածքի ընթեռնելիությունն ավելանում է նրանում առկա կողմնորոշիչ տարրերի շնորհիվ:

Պարփակություն (Enclosure). արտահայտում է փողոցների կամ այլ հասարակական տարածքների՝ շենքերի, պատերի, ծառերի և այլ տարրերի արտահայտվածության աստիճանը: Այն տարածքները որոնցում ուղղաձիգ տարրերի բարձրությունը համաչափ է տարածության լայնությանը, ձևավորում են սենքին բնորոշ որակ:

Մարդկային մասշտաբ (Human Scale). մարդկային մասշտաբը վերաբերում է ֆիզիկական տարրերի չափին, տեքստուրային, որոնք համապատասխանում են մարդու համաչափություններին և տեղաշարժման արագությանը: Շենքերի տարրերը, սալահատակի մշակվածքը, փողոցի ծառերը և կահավորումը, այս ամենը նպաստում են մարդկային մասշտաբի տարածության կազմավորմանը:

Թափանցիկություն (Transparency). արտահայտում է մարդու՝ փողոցի եզրից այն կողմ հասարակական գործառույթների տեսանելիության և ընկալելիության աստիճանը: Թափանցիկությանը նպաստող տարրերը ներառում են պատերը, պատուհանները, դռները, ցանկապատները, լանդշաֆտը և դեպի միջթաղային տարածություններ բացվածքները:

Կապակցվածություն (Linkage). առնչվում է շենք-փողոց, շենք-շենք, տարածք-տարածք, կամ փողոցի մի կողմը մյուս կողմին կապող ֆիզիկական և տեսողական կապերին: Ծառերի շարքերը, շենքերի պրոյեկցիաները ստեղծում են կապեր: Կապերը կարող են առաջանալ փողոցների երկայնական ուղղությամբ և փողոցին ուղղահայաց ուղղություններով:

Կառուցվածքային հագեցվածություն (Complexity). վերաբերում է տարածքի տեսողական հագեցվածությանը: Կառուցվածքային հագեցվածությունը կախված է ֆիզիկական տարրերի բազմատեսակությունից, շենքերի տեսակային և ճարտարապետական հորինվածքի բազմազանությունից, փողոցային կահավորումից, ցուցանակներից և մարդկային գործունեությունից:

Չամահնչություն (Coherence). առնչվում է տեսողական կանոնակարգվածությանը: Չամահնչության աստիճանը կախված է քաղաքային տարածքի մասշտաբից, տեսակից, շենքերի կանոնակարգվածությունից, լանդշաֆտից, փողոցային կահավորումից, սալահատակի նյութատեսակից և այլ ֆիզիկական տարրերից:

«2բոսանքին առնչվող քաղաքային որակների բնորոշում և գնահատում» գեկույցը սահմանում է նաև հետիոտնային ցանցի նախագծման վեց հիմնական չափանիշները, որոնք են՝ կապակցվածություն, այլ ռեժիմների հետ կապ, փոքրամասշտաբ

հողօգտագործման համակարգեր, ապահովություն, ուղու որակ և ուղու բովանդակություն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին շրջանի քաղաքաշինական նախագծման արտերկրի ուղղությունները կարելի է բաժանել երկու հիմնական տեսակի՝ կոմպակտ և փռված հատակագծային կառուցվածքների: Միևնույն ժամանակ քաղաքաշինական զարգացման ուսումնասիրված տեսությունները դրսևորում են ընդհանրություններ՝ իրենց հիմնական խնդիրներում և նպատակներում: Դրանք ուղղված են կայուն զարգացմանը, գործառնությանը հագեցվածությունը, հետիոտնային հասանելիությանը, որով հնարավոր է ապահովել բնակության համար բարենպաստ քաղաքային տարածքների ձևավորումը:

ՀՀ-ում գործող նորմերով սահմանված տարածքի քաղաքաշինական արժեքի գործոնների կազմի լրամշակման և «տարածքի քաղաքաշինական արժեք» հասկացության շրջանակների ընդլայնման նպատակով կատարվել է քաղաքաշինական նախագծման արտերկրի պրակտիկայում առկա և ՀՀ-ում սահմանված չափորոշիչների համեմատական վերլուծություն: Վերլուծությունը կատարվել է գործոնների արտածման, դրանց համեմատական դիտարկման, ըստ ընդհանրությունների խմբավորման և ընդհանուր համեմատական վերլուծության մեթոդներով:

Տարածքի քաղաքաշինական արժեքի տեղային սահմանված գործոնների և արտերկրի նախագծային ուղղությունների համեմատական դիտարկումն ի հայտ է բերում մի շարք ընդհանրություններ դրանցով ամրագրված զարգացման ուղղությունների միջև: ՀՀ-ում քաղաքաշինական արժեքի ձևավորման համար անհրաժեշտ գործառնության բազմազանությունը, փողոցային ցանցի խտությունը և մատչելիությունը բնորոշ են նաև «Նոր քաղաքաշինություն», «Կոմպակտ քաղաք», «Խելացի աճ» ուղղություններին: Եթե ըստ 30-01-2014 ՀՀԾՆ-ի՝ փողոցային ցանցի մասով, սահմանված է ինժեներական և տրանսպորտային մայրուղային ցանցերի խտություն, ապա ըստ «Նոր քաղաքաշինության» ուղղության՝ սահմանված է փողոցային ցանցի կապակցվածություն, ըստ «Կոմպակտ քաղաք» տեսության՝

փողոցային ցանցի բարձր խտություն: Գործառույթային բազմազանության մասով նույն ՀՀԾՆ-ով սահմանված է հասարակական նշանակության օբյեկտներով հագեցվածությունը, ըստ «Նոր քաղաքաշինություն» տեսության՝ բազմաֆունկցիոնալություն և բազմազանություն, ըստ «Կոմպակտ քաղաք» տեսության՝ խառը հողօգտագործում (Հավելված 2, նկ. 1):

Միևնույն ժամանակ, արտերկրի նախագծման ուսումնասիրված ուղղություններն ի հայտ են բերում գործոններ, որոնք տարածքում ձևավորում են բնակության համար նպաստավոր պայմաններ, և որոնք հնարավոր է ամրագրել ՀՀ-ում գործող նորմերում՝ տարածքի քաղաքաշինական արժեքի որոշման գործոնների ցանկում:

Կայուն զարգացման, հետիոտնային հասանելիության, բնակելի ֆունդի տեսակային բազմազանության ապահովումը հանդիսանում են հիմնախնդիրներ արտերկրի նախագծային պրակտիկայում: Սահմանված է, որ կայուն քաղաքը պետք է լինի քայլելու, հեծանվավազքի և հասարակական տրասպորտի համար համապատասխան մասշտաբի և սոցիալական փոխարաբերությունները խթանող կոմպակտ կառուցվածք [21]: Առկա են նաև այլ սահմանումներ, ըստ որոնց կայուն քաղաքը կարող է լինել բազմակենտրոն և փոխկապակցված տրանսպորտային ցանցով, ինչից հետևում է, որ կայուն քաղաքաշինական զարգացումը ապահովվում է կոմպակտ քաղաքային կառուցվածքի շնորհիվ:

Հետիոտնային հասանելիության գաղափարը քննարկվում է գրեթե բոլոր արդի քաղաքաշինական նախագծման տեսություններում և հանդիսանում է ներկայիս քաղաքաշինական նախագծման կարևոր խնդիր: Հետիոտնային հասանելիությունը ենթադրում է սպասարկման օբյեկտների տեղակայում հետիոտնային մատչելիության, այն է՝ 10 րոպե հետիոտնային շարժման շառավղի սահմաններում:

Արտերկրի նախագծային պրակտիկայում կարևորվում է նաև բնակելի ֆունդի տեսակային բազմազանությունը, այն է՝ տարբեր սոցիալական խավերին հասանելի բնակֆունդի առկայություն միևնույն վայրում: Արդի երևանում բնակելի կառուցապատման

հիմնական չափը բաժին է ընկնում սոցիալական բարձր խավին հասնելի բնակելի կառուցապատմանը, որը տեղակայվում է քաղաքի կենտրոնում, ուստի տվյալ գործոնի ներդրումը հայրենական նախագծային պրակտիկայում թույլ կտակարգավորել խնդիրը:

Արդի չափանիշները բավարարող քաղաքային տարածքների կազմավորումը ապահովելու նպատակով՝ տարածքի քաղաքաշինական արժեքի որոշման մեթոդաբանության մշակումը, տեղային և արտերկրի նախագծման պրակտիկայի հիման վրա, հանդիսանում է առաջնային անհրաժեշտությունն խնդիր հայրենական քաղաքաշինական նախագծման պրակտիկայում: Ըստ վերոնշյալ գործոնների 30-01-2014 ՅՅԾՆ-ում տարածքի քաղաքաշինական արժեք ձևավորող գործոնների ցանկի լրամշակումը թույլ կտա ընդլայնել տարածքի քաղաքաշինական արժեքի գործող սահմանման շրջանակները և կատարել տարածքի ավելի համալիր արժևորում:

1.2. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Բնակության համար բարենպաստ քաղաքային տարածքների ձևավորումը հնարավոր է միայն քաղաքաշինական կանոնակարգված գործունեության պարագայում: Քաղաքաշինական գործունեության կարգավորման հիմնական միջոցներն են բնագավառի օրենսդրանորմատիվային և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը: Դրանցից գատ, քաղաքի տարբեր հանգույցների առանձնահատկություններից ելնելով, սահմանված են նաև լրացուցիչ կարգավորման միջոցներ, որոնք, հիմնվելով քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի վրա, իրավական հենքի ստեղծման միջոցով, ապահովում են որոշակի տարածքի բնականոն զարգացումը (Հավելված 3):

1.2.1. Հայաստանի Հանրապետություն

Հայաստանում քաղաքաշինական գործունեության կարգավորման հիմնական միջոց են հանդիսանում քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը: Քաղաքաշինական գործունեությունը տարածական պլանավորման բնագավառում տնտեսական, սոցիալական, մշակութային և բնապահպանական գործոնների փոխկապակցված

տարածական ամրագրումն է և նպատակաուղղված է կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորմանը՝ քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման) փաստաթղթերում տարաբնակեցման համակարգերի, տարածքների համաչափ զարգացման և նպատակային օգտագործման հիմնական ուղղություններն ու պայմանները սահմանելու միջոցով [22]:

ՀՀ-ում գործող քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման, այսուհետ՝ տարածական պլանավորման) փաստաթղթերն են.

- Տարաբնակեցման և Տարածքային կազմակերպման գլխավոր նախագծերը,
- Տարածքային հատակագծման նախագծերը,
- Համայնքների գլխավոր հատակագծերը,
- Քաղաքաշինական գոտիավորման նախագծերը,
- Բնակավայրերի պատմամշակութային հիմնավորումների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության գոտիների, բնության հատուկ պահպանվող տարածքների նախագծերը,
- Լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն, գործառնական այլ համակարգերի տարածքային կազմակերպման, ինչպես նաև արտադրական կարողությունների, ինժեներական, տրանսպորտային, կոմունալ և սոցիալական ենթակառուցվածքների տեղաբաշխման նախագծերը՝ հանրապետության և առանձին վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ատենախոսության շրջանակները ներառում են Երևան համայնքը, ինչպես նաև այն, որ համայնքի սահմաններում քաղաքաշինական գործունեության կարգավորման հիմնական ծրագրային փաստաթղթերն են համայնքի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծերը, ուսումնասիրության մեջ անդրադարձ է կատարվել դրա և դրան ստորադաս քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին:

Երևան քաղաքի կառուցապատման ներկա միտումները ցույց են տալիս, որ գլխավոր հատակագիծը և իրարմերջի գործում: Ներկայումս

ճարտարապետաշինարարական փաստաթղթերի տրամադրումը հաճախ հիմնվում է անհատ կառուցապատողների հայեցողության վրա և երբեմն հակասում է քաղաքի տարածական պլանավորման փաստաթղթերին: Երևույթը ճարտարապետաշինարարական փաստաթղթերի տրամադրման փոփոխում, առաջացնում է Երևանի հողերի գործառնական, երբեմն նաև նպատակային նշանակության անհիմն փոփոխություններ: Դա հանգեցնում է քաղաքի գլխավոր հատակագծի նշանակության նվազմանը, իսկ հետագայում կարող է հանգեցնել նաև դրագործառույթի ամբողջական արժեզրկմանը:

Խնդիրն ունի երկակի բնույթ. մի կողմից՝ այն պայմանավորված է գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծերի ոչ լիարժեքությամբ և կառուցապատման չափորոշիչների անհստակությամբ, մյուս կողմից կառուցապատման բնագավառում փոքրածավալ ներդրումների ուղղորդման համալիր ծրագրերի և պետություն-կառուցապատող-հասարակություն 2 առերի հավասարակշռման հստակ մեխանիզմների բացակայությամբ:

Երևանի կառուցապատման արդի միտումները հավաստում են բնագավառում մեծաքանակ ներդրումների առկայության փաստը: Քաղաքի կենտրոնում և ծայրամասերում ակնհայտ է նորակառույց, փոքրածավալ սպասարկման օբյեկտների բազմազանությունը, ինչը գործող քաղաքաշինական նորմի համաձայն՝ նպաստում է տարածքի քաղաքաշինական արժեքի բարձրացմանը՝ ստեղծելով տարածքում հասարակական նշանակության օբյեկտների հագեցվածություն: Այնինչ դրանք հիմնականում մայթերի երկայնքով կամ բակային տարածքներում անկանոն տեղակայված կամայական գործառույթի կրպակաշարեր կամ այլ տեսակի՝ ճարտարապետական տեսակետից արժեք չներկայացնող կառուցապատման տարրեր են, որոնք հիմնականում չեն ապահովում տարածքի բնակչության անհրաժեշտ սպասարկումը: Խնդրի պատճառը բնագավառում փոքրածավալ ներդրումների ուղղորդման հայեցակարգերի բացակայությունն է: Քաղաքի որոշ տարածքների կառուցապատումը, չունենալով նախապես մշակված ծրագիր, ոչ միայն չի ապահովում տարածքի անհրաժեշտ սպասարկման ապահովումը, այլև իր ցածր ճարտարապետական որակի պատճառով հանգեցնում է դրա քաղաքաշինական արժեքի նվազմանը:

Քաղաքի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծերը սահմանում են քաղաքի զարգացման ընդհանուր հայեցակարգ, հողատեսքերը և կառուցապատման չափորոշիչները, սակայն կառուցապատման կարգավորման ավելի ստորադաս ծրագրային փաստաթղթի բացակայությանը հանգեցնում է թե՛ գործառնական և թե՛ հատակագծային անկանոն կառուցապատման իրականացմանը: ԽՍՀՄ ժամանակաշրջանում կառուցապատման կարգավորման լրացուցիչ միջոց էր մանրամասն հատակագծման նախագիծը, որը սահմանում էր կառուցապատման չափորոշիչները և տեսակները, սակայն ներկայումս դրա բացակայությանը հանգեցնում է անկանոն կառուցապատմանը:

Խնդիրը կայանում է նաև քննարկվող տարածական պլանավորման փաստաթղթերի բովանդակային ոչ լիարժեքության, ինչպես նաև դրանց մշակման փուլում ճշգրիտ վերլուծության ներքին բացակայության մեջ: Փաստաթղթերի մանրամասն ուսումնասիրությանն ի հայտ է բերում որոշ ոչ լիարժեք հիմնավորված լուծումներ: Քաղաքի կենտրոնի պատմական միջուկում, որտեղ առկա էր պատմականորեն ձևավորված ցածրահարկ կառուցապատման միջավայր, գլխավոր հատակագծով նախատեսված է բարձրահարկ կառուցապատում: Դրա հետևանքով պատմականորեն ձևավորված կառուցապատման կողքին ավելի մեծամասշտաբ նորակառույցների կառուցմամբ ձևավորվում է նոր մասշտաբ, որին չի համապատասխանում հին կառուցապատումը՝ առաջացնելով հնի մասշտաբի փոփոխության խնդիր: Այլպես նախատեսվող կառուցապատումը ձևավորված քաղաքային միջավայրի հետ համարելու փոխարեն, կատարվում է հակադարձ գործընթաց:

Գլխավոր հատակագծով լիարժեք հաշվի չի առնված նաև քաղաքի քաղաքաշինական դոմինանտ առանցքների կառուցապատումը: Հյուսիսային ճարագայթի ուղղությամբ՝ Կասկադից վեր գտնվող տարածքի մի մասնահատվածում, նախատեսված է ընդհանուր օգտագործման կանաչ գոտի, դրան կից՝ անկանոն պարագծով հասարակական կառուցապատման գոտի, որին կից՝ ցածրահարկ բնակելի կառուցապատում: Հյուսիսային ճարագայթը՝ որպես քաղաքաշինական դոմինանտ, օժտված է քաղաքաշինական արժեք

ձևավորող բարձր պոտենցիալով, այնինչ տարածքի նման գոտևորումը չի նպաստում այդ պոտենցիալի լիարժեք օգտագործմանը:

Գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծերի մասով առկա չէ նաև կառուցապատված միջավայրի նկատմամբ կառուցապատման հարկայնության, խտության, գործառնական գոտիների տեղաբաշխման համալիր մշակված մեթոդաբանության:

Խնդիրը պահանջում է, տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման փուլում, տարածքի քաղաքաշինական արժեքի գնահատում, գնահատման արդյունքներից ելնելով՝ նախատեսվող նախագծային լուծումների արդյունավետության արժևորում/հիմնավորում՝ ըստ արժեք ձևավորող գործոնների, ապա միայն՝ ամրագրում համապատասխան ծրագրային փաստաթղթերում:

Օրենսդրական և նորմատիվային կարգավորման միջոցներ.

Քաղաքաշինական զարգացման կարգավորման մեխանիզմներ են նաև օրենսդրական փաստաթղթերը: Դրանք սահմանում են ծրագրային փաստաթղթերի մշակման, հաստատման, փորձաքննության կարգերը [23][24]: Դրանցից բացի, այն տարածքներում, որոնց անհրաժեշտ զարգացումը և պահպանումը հնարավոր չէ ապահովել միայն քաղաքային նշանակության կարգավորման միջոցների շնորհիվ, կիրառվում են հավելյալ օրենսդրական կարգավորման միջոցներ: Դրանք, հիմնվելով գործող ծրագրային փաստաթղթերի վրա և հաշվի առնելով տարածքի առանձնահատկություններից բխող խնդիրները, ամրագրում են տարածքում քաղաքաշինական և ճարտարապետաշինարարական գործողությունների իրականացման լրացուցիչ սահմանափակումներ:

Պատմական միջավայրի պահպանման և զարգացման կարգավորման հիմնական միջոցն է 19.11.1998թ. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանման և օգտագործման մասին» հ.ՅՕ-261 ՀՀ օրենքը: Այն սահմանում է հուշարձանի պահպանական գոտիների համակարգը և օգտագործման ռեժիմը:

Հուշարձանների պահպանական գոտիների համակարգը կարող է ներառել՝

- հուշարձանի պահպանութեան գոտին,
- կառուցապատման կարգավորման գոտին,
- լանդշաֆտի պահպանման գոտին [25]:

Գործնականում, սակայն, հուշարձանների պահպանութեան գոտիների կազմումը չի հիմնված հստակ հաշվարկի վրա, հաշվի չեն առնված հուշարձանների տեսողական ընկալման բոլոր հնարավոր դիտակետերը, դրանց ընկալման հիմնական դիտակետերից բացվող տեսադաշտերի սահմանները, տեսադաշտերում կառուցապատման կարգավորման չափանիշները, ինչպես նաև տեսադաշտերի սահմանները չեն ձևավորված հստակ հաշվարկային վերլուծությունների միջոցով:

ՀՀ կառավարության 26.06.2009թ. հ.792 «Քաղաքային ակնագործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքային ակնագործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» որոշմամբ Երևան քաղաքում որպես քաղաքային ակնագործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ են առանձնացվել հանրապետական նշանակության միջարք շենքեր և համալիրներ [26]: Նույն որոշմամբ սահմանված է նաև քաղաքամերձ համայնքների հետ սահմանակից հատվածներում քաղաքային ակնագործունեության հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացման հնարավորությունը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված օրենսդրական կարգավորումները բավարար չեն մայրաքաղաքի քաղաքային բարձրարժեք տարածքների կառուցապատումը լիարժեք կարգավորելու համար: Երևանի զարգացման գործընթացում պատմամշակութային ժառանգության պահպանման նպատակով անհրաժեշտ է ներդնել լրացուցիչ մեխանիզմներ և սահմանափակումներ:

Խնդրի արդիականության մասին է վկայում նաև 07.03.2013թ.-ին հ.9 «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի ընդունումը [27], իսկ 11.04.2013թ.-ին հ.268-Ա ՀՀ վարչապետի որոշմամբ օրենքի նախագծի մշակման նպատակով աշխատանքային խմբի ստեղծումը [28]: Հայեցակարգի հիմնական նպատակն է իրավական հենքի ստեղծման միջոցով նախանշել

մայրաքաղաքի զարգացման ընթացքում Երևանի փոքր կենտրոնի բարձրարժեք ճարտարապետական կերպարի միասնականության, կառուցապատման գեղագիտական միջավայրի կատարելագործման, առողջ և գրավիչ կենսամիջավայրի ձևավորման ապահովումը՝ խնդրո առարկա տարածական գոտու առանձնահատկություններից բխող հատուկ և լրացուցիչ պայմանների ու սահմանափակումների ամրագրման միջոցով:

Ինչպես ընդունված միջազգային պրակտիկայով, այնպես էլ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ ցանկացած քաղաքաշինական գործունեությունն իրականացվում է տարածական պլանավորման փաստաթղթերի հիման վրա: Մինչդեռ անցած տարիների փորձը վկայում է, որ Երևանի համար մշակված, հաստատված և ներկայումս գործող գոտևորման նախագծերն ու կառուցապատման սխեմաները ի գործու չեն հավուր պատշաճի ապահովելու փոքր կենտրոնի քաղաքաշինական անհրաժեշտ զարգացումը:

Ուստի, Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման օրենսդրական կարգավորման կարևորագույն խնդիրներից է կառուցապատման համար հիմք հանդիսացող քաղաքաշինական փաստաթղթերի կազմին և բովանդակությանը, ինչպես նաև դրանց մշակմանը, համաձայնեցմանը, հաստատմանն ու փոփոխմանը ներկայացվող՝ տվյալ տարածքի առանձնահատկություններից բխող հատուկ և/կամ լրացուցիչ պայմանների ու պահանջների մշակումը: Ընդ որում, խնդրո առարկա քաղաքաշինական պլանավորման փաստաթղթերի վերանայումը, արդիականացումը և օրենքի նախագծի պահանջներին համապատասխանեցումը գնահատվում է որպես առաջնահերթ հրատապություն խնդիր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքի կենտրոնից դուրս նույնպես առկա են քաղաքաշինական տեսակետից արժեք ներկայացնող տարածքներ, «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի օրինակով անհրաժեշտ է սահմանել նաև մյուս վարչական շրջաններում առկա քաղաքաշինական բարձրարժեք տարածքների պահպանման միջոցներ [29]:

Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի և բնագավառում գործող օրենքների հետ մեկտեղ բարենպաստ քաղաքային տարածքների կազմավորման գործընթացում անհրաժեշտ է կարևորել նաև հասարակության կարծիքը: Վերջին շրջանում կառուցապատման տարբեր ծրագրեր դեմ են առնում քաղաքացիական դիմադրությանը: Փակ շուկայի վերակառուցումը, «Հին Երևան» ծրագրի իրականացման նպատակով Աֆրիկյանների տան և մի շարք այլ հուշարձան-շենքերի քանդման աշխատանքները, Մոսկվա կինոթատրոնի բաց դահլիճի քանդման ծրագիրը, Երիտասարդական պալատի քանդումը, ներկայումս քննարկվող Մարգահամերգային համալիրի հարակից տարածքի կառուցապատման ծրագիրը հարցին առնչվող որոշ օրինակներ են: Խնդրի պատճառը նախատեսվող քաղաքային նշանակության ճարտարապետաշինարարական ծրագրերի շուրջ հասարակական քննարկումների իրականացման ընթացակարգերի ոչ լիարժեքությունն է:

ՀՀ կառավարության 28.10.1998թ. հ.660-Ն «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» որոշմամբ սահմանված են կենսամիջավայրի փոփոխության մասին հասարակության իրազեկման կարգերը [30]: Չնայած դրան՝ որոշման կիրառումը գործնականում կրում է հազվադեպ բնույթ: Սահմանված է դրա պարտադիր կիրառում տարածական պլանավորման փաստաթղթերի շուրջ քննարկումների դեպքում, այնինչ քաղաքային նշանակության կառուցապատման ծրագրերի պարագայում դրա կիրառման պարտադիր պայմաններն ամրագրող իրավական ակտեր առկա չեն:

Ուստի կառուցապատման ծրագրերի իրականացման գործընթացի բարենպաստ ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ է հավասարակշռել կառուցապատողի, պետության և հասարակության շահերը: Արդի պրակտիկայում հասարակության շահերի ներկայացումն իրականացվում է քաղաքացիական հասարակության միջոցով՝ քաղաքացիների կամ տարբեր ոչ պետական

նախաձեռնությունների և կազմակերպությունների կողմից [31]: քաղաքացիական հասարակությունը ժողովրդավարության սկզբունքների համապատասխան հասկացություն է, որն իր անմիջական մասնակցությունն ունի հասարակության շահերին առնչվող որոշումների կայացման գործընթացներին:

Վերոնշյալից հետևում է, որ քաղաքացիական հասարակության ներգրավումը քաղաքաշինական և կառուցապատման որոշումների ընդունման գործընթացներում արդի երևանում առաջնային հրատապության խնդիրներից է, որը բխում է նաև ժողովրդավարության իրականացման անհրաժեշտությունից:

1.2.2. Արտերկիր

Արտերկրում պատմաճարտարապետական և մշակութային ժառանգության պահպանումը քաղաքաշինական գործունեության կարևորագույն խնդիրներից է: Մի շարք երկրներում քաղաքաշինական և ճարտարապետական բարձրարժեք տարածքների պահպանումը և զարգացումը կարգավորվում է օրենքով սահմանված լրացուցիչ մոտեցումների և սահմանափակումների միջոցով:

Ուսումնասիրվել են.

- Դանիայի՝ «Միջավայրում ճարտարապետական արժեքի տեղեկագիրը» (Survey of the Architectural Value in the Environment),
- Ֆրանսիայի՝ «Պահպանվող սեկտորները» (Secteur Sauvegardé),
- Սլովենիայի՝ «Սլովենիայի միջավայրի զարգացման ստրատեգիան» (Spatial Development Strategy of Slovenia),
- Շվեյցարիայի՝ «Ազգային կարևորության տարածքներ և նախաձեռնություններ» (Spaces and Projects of National Importance – SAPONI):

SAVE (Survey of the Architectural Value in the Environment). Միջավայրում ճարտարապետական արժեքի տեղեկագիրը Դանիայում շինությունների կամ համալիրների պահպանման նպատակով դրանց գնահատման մեթոդակարգն է [32]:

Մեթոդակարգը ներառում է երեք հիմնական փուլ՝

- սկզբնական ուսումնասիրություն,
- բնապայման ուսումնասիրություն (տեղագնություն),
- համայնքային քարտեզի կազմում:

Սկզբնական ուսումնասիրության փուլում խորհրդատու ն հավաքում և ուսումնասիրում է համայնքի տեղագրական, պատմական, ճարտարապետական հատկանիշների մասին հասանելի տեղեկություններ:

Տեղային ուսումնասիրության /տեղագնություն/ փուլում ճարտարապետական տարրերը նկարագրվում են երկու տարբեր ձևերով՝ 1) կազմավորված կառուցվածքներ 2) ինքնուրույն շինություններ: Այդ երկուսի արժևորման համար լրացվում են դրանց հատկանիշները բնութագրող համապատասխան ձևաթերթեր:

Կազմավորված կառուցվածքները առանձին տարրերից բաղկացած միասնություններ են և արժևորվում են որպես այդպիսին: Նրանք կարող են ներառել ցանկացած քաղաքային տարր՝ մի քանի շինություններից մինչև ամբողջ փողոցներ, հրապարակներ, շրջաններ և նույնիսկ ամբողջ քաղաքներ: Այդ տարրերը դիտարկվում են որպես մեկ ամբողջություն՝ դրանց ճարտարապետական, պատմական, տեղագրական հատկանիշները նդհանրություններից ելնելով:

Կազմավորված կառուցվածքներն իրենց հերթին բաժանվում են երեք տեսակի՝ ճարտարապետական դոմինանտ տարրեր, շենքերի համակարգ և առանձին քաղաքային տարրեր:

Ճարտարապետական դոմինանտները քաղաքային կառուցվածքի հետ ներդաշնակ փոխկապակցված տարրեր են՝ հուշարձաններ, հրապարակներ, այգիներ, առանձին շինություններ, շինությունների համալիր, քաղաքային տարրեր:

Ինքնուրույն շինությունները բնորոշվում են գործող պետական բնորոշման համակարգով: Յիմնական տեղեկությունը՝ շինության տարիքը, նյութը, հարկերի քանակը, մակերեսը և այլ նկարագրեր, լրացվում է ձևաթերթում, և շինությանը տրվում է համապատասխան կոդ:

Նկարագրության ձևաթերթի կարևորագույն մասը գնահատում է, որը ներառում է 5 բաժին.

- ճարտարապետական արժեք (համաչափություններ, հորինվածքի ներդաշնակություն, որևէ ճարտարապետի նշանակալի աշխատանք),

- պատմամշակույթային արժեք (սոցիալական գործառույթներ, շինարարական տեխնոլոգիայի կամ վարպետության վկայում),
- միջավայրային (միջավայրի հետնետրոջ նակույթանաստիճան),
- յուրօրինակություն (յուրօրինակ պահպանված էքստերիերի առկայություն, վերականգնման հնարավորություն),
- տեխնիկական վիճակ (առկալավ կամ վատվիճակ):

Պահպանվող Սեկտորներ (Secteur Sauvgarder). Քաղաքային տարածքների հեռանկարային զարգացումների դիտարկման գործընթացում կարևորվում է նաև քաղաքաշինական ժառանգության պահպանման հարցը: Ֆրանսիայում քաղաքների վերականգնման գործընթացում քաղաքային ժառանգության պահպանման և արժևորման նպատակով ներդրված են պահպանվող սեկտորները:

Պահպանվող սեկտորները քաղաքային տարածքներ են, որոնց զարգացումը և պահպանումն իրականացվում է օրենքով սահմանված լրացուցիչ սահմանափակումների և չափորոշիչների կիրառմամբ: Այստեղ կիրառվող օրենսդրական կարգավորման մեխանիզմները նպատակ ունեն քաղաքի զարգացման գործընթացում ապահովել կապը պատմական և նոր քաղաքի միջև՝ միևնույն ժամանակ պատմական քաղաքում պահպանելով քաղաքային դիսամիկան:

Պահպանվող սեկտորների քաղաքականությունն ուղղված է քաղաքի զարգացման և ժառանգության արժևորմանը: Այն, հաշվի առնելով քաղաքի որոշակի տարածքի դեմոգրաֆիկական, սոցիալական, տնտեսական և մշակույթային կազմի բազմազանությունը, պետք է ապահովի պատմական արժեք ներկայացնող տարածքների պահպանումը, վերականգնումը և զարգացումը՝ լրացուցիչ մոտեցումների կիրառման միջոցով [33]:

1999թ. դրությամբ Ֆրանսիայում գործում են ավելի քան 91 պահպանվող տարածքներ, որոնք կազմում են պատմական թաղամասերի գրեթե 6000 հա տարածություն: Դրանք հիմնականում պատմական քաղաքներ են, հին քաղաքաշինական պատմություն ունեցող պատմական կենտրոններ՝ 18-րդ դարին հաջորդող քաղաքային ցանցով: Դրանք քաղաքային տարածքներ են, որոնք ներառում են թե՛ ձևաբանական կազմվածքով և թե՛ չափերով բազմատեսակ տարածքներ: Այդ պատմական քաղաքներում պետության նախածեռնությունը

մշակված է հատուկ մոտեցում՝ հիմնված քաղաքային ժամանադրության արժևորման վրա, որը սահմանվում է 1962թ. օգոստոսի 2-ի օրենքով:

20-րդ դարի Ֆրանսիացի բազմաթիվ տեսաբանների համար ճարտարապետական ժամանադրությունը սահմանափակվում էր հուշարձաններով, որոնց պահպանումը ապահովված էր 30.12.1913թ. 25.02.1943թ. պատմական հուշարձանների պահպանման վերաբերյալ օրենքներով: Դրան հակառակ՝ ձևավորվեց քաղաքային ժամանադրության մի մոտեցում, որի համաձայն բազմաթիվ քաղաքների պատմական, մշակութային և գեղագիտական հետաքրքրությունը չի կարող սահմանափակվել որևէ առանձին նշանակալի տարրի առկայությամբ, քանզի դա պայմանավորված է այդ տարրի և նրա շուրջը գտնվող միջավայրի որակով և ներդաշնակությամբ:

04.08.1962թ. օրենքը նվիրված է կառուցապատված համալիրների պահպանման դաշտի լայնացմանը: Դա պետությանը հնարավորություն է տալիս ստեղծել և սահմանազատել պահպանվող սեկտորներ այն պարագաներում, երբ տարածքն ունի պատմական, գեղագիտական կամ այլ՝ արդարացված մասնակի կամ ընդհանուր պահպանման, վերականգնման և արժևորման ենթակա բնույթ: Պահպանվող սեկտորների տարածքներում կիրառված է կարգավորման հատուկ ռեժիմ՝ Ֆրանսիային շենքերի ճարտարապետների կողմից (Architecte des bâtiments de France), որը պայմանավորված է ժամանադրության պահպանման օրենքներով:

Քննարկվող օրենքը ոչ միայն ժամանադրության պահպանման, այլ նաև քաղաքաշինության մասին է, որը պահպանում է քաղաքի որոշակի հայեցակարգ, համարելով, որ քաղաքային դինամիկան պետք է հենվի գոյություն ունեցող քաղաքի վրա, և նրա զարգացումը պետք է ընթանա քաղաքի վերաարժևորման և պահպանման տարբերակով՝ ֆինանսական մեխանիզմների կիրառմամբ:

1962թ.-ից ի վեր Պահպանվող սեկտորների քաղաքականության քաղաքաշինական համատեքստը փոխվել է. վիճարկվել են 1960-ականներին գերակայող քաղաքաշինական տեսությունները: Վերջին տարիներն նկատելի են քաղաքաշինության անկում և նոր ուղղության ճգնաժամ, որը մերժում է քաղաքի քաղաքաշինական

պատմության պահպանումը: Պատմական քաղաքների մշակութային և ինքնության դերը վերջերս մղվում է հետին պլան:

Պահպանվող սեկտորների ստեղծումը և սահմանազատումն իրականացվում են կառավարության հրամանով, պահպանվող տարածքների պետական հանձնաժողովի և համայնքային խորհրդի հետ քննարկումներից հետո: Յրամանը հանդիսանում է ցուցում պահպանվող սեկտորի ստեղծման, սահմանազատման և դրա հետագա զարգացման համար:

Պահպանվող սեկտորները սահմանազատվում են այնպես, որ այն միաժամանակ ներառի այն ամենը, ինչը իրականում հանդիսանում է քաղաքային ժառանգություն, առանց սահմանափակվելու քաղաքի պատմական միջուկով: Պահպանվող սեկտորի սահմանները ներառում են պատմական քաղաքի կամ թաղամասի անմիջական սահմանները, եթե նրանք մասնակցում են իր ներկայացմանը և զարգացմանը: Քաղաքը կազմված է շինությունների համալիրից: Դա նշանակում է պահպանման նախագծի մշակման հետ համատեղ ուսումնասիրել յուրաքանչյուր շինությունն առանձին-առանձին և պարզել դրա կապը քաղաքային համալիրի հետ:

Պահպանվող սեկտորի յուրաքանչյուր շինությունն ուսումնասիրվում և նկարագրվում է ըստ կոնստրուկտիվ տարրերի և նյութի՝ ծածկը, բացվածքները, շարվածքը, ինտերիերի նշանակալի տարրերը, շինարարության ժամանակաշրջանի, հետագա վերակառուցումների մասին տեղեկությունները, շինության վիճակը, անցյալ և ներկա գործառական նշանակությունը: Պատմական և հնագիտական մոտեցումը թույլ է տալիս պարզել որոշ շինությունների սկզբնական տեսքը՝ հետագա փոփոխությունների տակ:

Պահպանվող սեկտորների ընթացակարգը ներառում է շինության վերլուծությունը քաղաքային համալիրի կազմում: Շինությունը կարող է հետաքրքրություն ներկայացնել ինքն իրենով, ինչպես նաև իր դերով և կարգավիճակով քաղաքային համալիրում: Այն կարող է լինել համաձին համալիրի մի մաս կամ գերակատեղ գրավել որևէ դիտակետից բացվող հեռանկարում: Այսպիսով, կառույցի վերլուծությունն իրականացվում է ոչ միայն բուն կառույցի

սահմաններում, այլ նաև այն կապերի սահմաններում, որոնք այն ունի շրջակա միջավայրի հետ: Ընթացակարգի շրջանակներում կատարվում է նաև չկառուցապատված տարածքների վերլուծություն:

Ճարտարապետական, քաղաքաշինական ժառանգության և համայնապատկերի պահպանման գոտիները (ճԲԺՅՊԳ) հանդիսանում են պատմական միջավայրի պահպանման միջոցներ: Դրանք մշակվում են համայնքի նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ, «Ֆրանսիայի շենքերի ճարտարապետներ» (Architecte des bâtiments de France) պետական կառույցի աջակցությամբ: ԳՅՊԳ կարող են ստեղծվել պատմական հուշարձանների շուրջ, թաղամասերում կամ տեղանքներում գեղագիտական կամ պատմական ժառանգության պահպանման և արժևորման նպատակով: Պահպանման գոտիները ներառում են ճարտարապետության և համայնապատկերի պահպանման առանձնահատուկ միջոցառումների ցանկ: Պահպանման գոտիներում գովազդն արգելված է:

ՃԲԺՅՊԳ-ն քաղաքաշինական կարգավորման մեխանիզմ է, որը հարմարեցված է գյուղական տարածքներին: Այն թույլ է տալիս բացահայտել համայնքի տարածքի սահմաններում այն, ինչը հանդիսանում է իր պատմական ժառանգությունը և համայնապատկերը. գյուղի ուրվագիծը, հուշարձանները, ճարտարապետական համալիրները, հասարակական նշանակության տարածքները, գյուղական փոքր շինությունները և այլն, ինչպես նաև սահմանել պահպանման և արժևորման համալիր նախագիծ:

«Ազգային կարևորություն տարածքներ և նախագծեր» (Spaces and Projects of National Importance – SAPONI). Նախաձեռնությունը պատկանում է Շվեյցարիայի Տարածքային զարգացման դաշնային գրասենյակի կողմից կազմված միջազգային փորձագետների խմբին: Խմբի առաջադրանքը Շվեյցարիայի տարածքային նախագծման ապագա մարտահրավերների ուսումնասիրությունն ու տարածքային զարգացման հեռանկարների մշակումն է: Շվեյցարիայի նախատիպերի ուսումնասիրության (case study) զեկույցում նկարագրված հարցերը գործընթացների օրինակներ են, որոնք տեղի են ունենում եվրոպայի մի շարք քաղաքներում: Չնայած

Շվեյցարիայի ծաղկող տնտեսությունը բացառություն է եվրոպայի տարբեր երկրների համեմատությամբ, տարածքային զարգացման որակի և խտության վերահսկումը արդիական է ամբողջ եվրոպային համար:

Եվրոպայի լավագույն մասնագետների՝ SAPONI գիտաժողովի շրջանակներում կատարած հետազոտությունները ցույց են տալիս, որ տարածքային զարգացման ներկայիս խնդիրները դուրս են մեկ պետության սահմաններից և պետք է դիտարկվեն մի քանի, երբեմն նաև ամբողջ եվրոպայի սահմաններում, քանզի դրանք կարող են ունենալ հեռանկարային զարգացումներ, որոնց արդյունքը կարող է օգտագործվել կամ բաց թողնվել մի քանի պետությունների կողմից [34]:

Քաղաքացիական հասարակություն. Արտերկրում քաղաքացիական հասարակության դերի բարձրացումն ապահովվում է նաև Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կողմից: Բազմաթիվ ոչ պետական և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ՔՀԿ) հանդիսանում են քաղաքացիական հասարակության և ՄԱԿ-ի միջև երկխոսության ապահովման միջոց: ՔՀԿ-ներն առանցքային դեր են խաղում ՄԱԿ-ի կոնֆերանսներում և հանդիսանում են պետական մակարդակով դրա անփոխարինելի գործընկերները [35]:

Քաղաքացիական հասարակության ներգրավումը և դրա դերի բարձրացումը սոցիալական ոլորտում ապահովվում է նաև տարբեր միջազգային կոնվենցիաների միջոցով, որոնցից են Օրիոլսի և Բրյուսելի կոնվենցիաները [36][37]: Նշվածներից Դանիայի Օրիոլս քաղաքում 1998թ.-ին եվրոպական մի շարք երկրների կողմից ընդունված «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիան ստորագրվել է նաև Հայաստանի կողմից 2001թ.-ին: Այնինչ Հայաստանում՝ արդյունաբերության ոլորտում, առկա են կոնվենցիայով ամրագրված շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության և որոշումների

ընդունման գործընթացին հասարակության մասնակցության միջոցների ապահովման սահմանված դրույթների խախտումներ:

Չաշվի առնելով երևանում պատմաքաղաքապետական ժառանգության արժևորման և պահպանման խնդրի հրատապությունը, ուսումնասիրված կարգավորման միջոցների հիմնական դրույթների՝ շենքերի և տարածքների պատմամշակութային արժևորման, կառուցապատման կարգավորման գոտիների կազմման, կիրառման ուղիների բացահայտումը և դրանց ներդրումը հայրենական պրակտիկայում թույլ կտան կարգավորել հարցը:

1.3. ՏԱՐԱԾՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ըստ որոշակի չափանիշների և գործոնների՝ տարածքների գնահատումը պահանջում է համապատասխան մեթոդներ՝ դրանց հիման վրա տարածքի քաղաքաշինական արժեքի որոշման մեթոդաբանության սահմանման համար: Այդ նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել տարածքի քաղաքաշինական արժեքի գնահատման և քաղաքային ձևաբանության վերլուծության մեթոդները, տեսությունները և գործիքները՝ երևանում դրանց կիրառման հնարավորությունների և ներդրման ուղիների բացահայտման նպատակով:

Ներկայիս քաղաքաշինական նախագծման պրակտիկայում քաղաքի հատակագծային կառուցվածքի և դրանում կենսագործունեության կազմակերպման միջև կապը բացահայտելու նպատակով ձևավորվել են քաղաքաշինական նախագծման և վերլուծության նոր տեսություններ և մեթոդներ, որոնք համակարգային մոդելների կազմման և դրանց վերլուծության միջոցով բացահայտում են վերոնշյալ կապի օրինաչափությունները:

Դեռևս քսաներորդ դարի ընթացքում քաղաքաշինության տեսաբանները կապում էին քաղաքի կենսագործունեությունը դրա հատակագծային կառուցվածքի և գործառնությունների տեղաբաշխման հետ [38][39]: Ըստ գերմանացի աշխարհագրագետ Վալտեր Կրիստալի «Կենտրոնական վայրի տեսության»՝ բնակավայրերը գործում են որպես կենտրոնական վայրեր՝ մատակարարելով ծառայություններ շրջակա տարածքներին, այլ

խոսքով սպասարկելով շրջակա տարածքը [40]: Դա աշխարհագրական տեսություն է, որը նպատակ ունի բացահայտել բնակավայրերի քանակը, չափերը և տեղակայումը քաղաքային համակարգում:

Քաղաքի հատակագծային և տարածական կառուցվածքի ուսումնասիրության, նախագծման և քաղաքաշինական վերլուծության ոլորտների գործարկման դուրս բերված հիմնական տեսություններն են՝ «ծավալ-հող», «կապ» և «վայր»: Դրանց հիման վրա քաղաքային միջավայրում վերլուծության ոլորտների գործարկման և չափումների իրականացման մեթոդներ են ընդունվել «տարածքային սինտեքսը», որը ներառում է ըստ կապերի և իզոլիստների վերլուծության ոլորտների մեթոդներ, աշխարհագրական տեղեկատվական համակարգերը (ԱՏՀ), որոնք ներառում են քաղաքաշինական ցանկացած միջավայրի բաղկացուցիչ տարրերի տվյալների բազաներ, վերլուծության ոլորտների մեթոդներ և գործիքակազմ (Յավել ված 4):

Ներկայիս Երևանի քաղաքաշինական նախագծման բնագավառում ճշգրիտ վերլուծության մեթոդների կիրառման բացակայությունը հանգեցնում է չհիմնավորված և պատահական քաղաքաշինական որոշումների կայացմանը: Տարածական պլանավորման փաստաթղթերի և կառուցապատման ծրագրերի մշակման բնագավառում որոշումները հաճախ ընդունվում են սուբյեկտիվ կարծիքի հիման վրա և չեն ունենում հստակ հաշվարկված ենթատեքստ: Այդ ամենը հանգեցնում է քաղաքաշինական և ճարտարապետաշինարարական չհիմնավորված միջոցառումների իրականացմանը, ցածրորակ քաղաքային տարածքների ձևավորմանը, որի հետևանքով նվազում է տարածքի քաղաքաշինական արժեքը [41]:

Արդի համակարգչային նախագծման և վերլուծության տեխնոլոգիաների զարգացումը թույլ է տալիս, վերոնշյալ տեսություններով ամրագրված դրոյթների հիման վրա, կատարել տարածքի բազմակողմանի ուսումնասիրություն և գնահատել ինչպես տարածքի քաղաքաշինական արժեքը, այնպես էլ հաշվարկել միջավայրում նախատեսվող ճարտարապետաշինարարական փոփոխությունների գրեթե բոլոր հնարավոր հետևանքները: Վերլուծության ոլորտների արդյունքները կարող են հիմք հանդիսանալ

տարածական այլ անավորման փաստաթղթերի մշակման մեթոդակարգերի կատարելագործման և արդիականացման, ինչպես նաև առանձին տարածքներում կառուցապատման ճշգրիտ հաշվարկային չափորոշիչների ներդրման համար:

Ստորև վերոնշյալ խնդիրների կարգավորման ուղղությամբ ղեկավարման նպատակով ուսումնասիրվել են քաղաքաշինական վերլուծության ներքին հիմնական տեսությունները, դրանց դրոյթների գործնական կիրառման արդի մեթոդները և գործիքակազմերը:

1.3.1. Քաղաքային ձևաբանություն

Քաղաքային ձևաբանությունը մարդկային բնակավայրերի կառուցվածքի ուսումնասիրությունն է մեթոդաբանություն է դրանց հատակագծային, տարածական կառուցվածքը և զարգացման ընթացքը բացահայտելու նպատակով: Ըստ Ռ.Տրանսիկի «Գտնելով կորցրած տարածությունը. Քաղաքային նախագծման տեսությունները» գրքի՝ առկա են քաղաքային տարածքային նախագծման երեք տեսություններ՝

- «Ծավալ-հող տեսություն» (Figure-ground theory),
- «Կապի տեսություն» (Linkage theory),
- «Վայրի տեսություն» (Place theory) [42]:

Դրանք զգալի տարբերվում են միմյանցից իրենց կիրառման նպատակներով, սակայն միասին վերցրած ընձեռում են քաղաքաշինական նախագծման համալիր ռազմավարության մշակման գործիքակազմ: Դրանցից յուրաքանչյուրը հիմնված է քաղաքային միջավայրի արտոնական համակարգային մոդելների կազմման միջոցով քաղաքային միջավայրի կառուցվածքի ուսումնասիրության վրա:

«Ծավալ-հող տեսություն» հիմնված է շենքերի (ծավալ) և ազատ տարածքների (հող) հարաբերության ուսումնասիրության վրա: Ցանկացած քաղաքային միջավայր ունի ծավալների և ազատ տարածքների կառուցվածք, որի հետևանքով քաղաքաշինական վերլուծության ծավալ-հող մոտեցումը այս հարաբերությունը կառավարելու միջոց է՝ ավելացնելով, ջլատելով կամ փոխելով

համակարգի հատակագծային կառուցվածքը: Այս փոփոխությունների նպատակը քաղաքում տարբեր չափերի քաղաքային միջավայրերի կառուցվածքների ուսումնասիրությունն է՝ քաղաքային միջավայրերի հիերարխիկ մոդելի կազմման միջոցով, որոնք միմյանց նկատմամբ պարփակված են, սակայն գտնվում են փոխադարձ կապի մեջ: Ծավալների և բացատների այդ դաշտը ստեղծում է հյուսվածք կոչվող քաղաքային համակարգը: Ծավալ-բացատ գծագիրը քննարկվող երկու տարրերի փոխադարձ հարաբերությունը պատկերող գրաֆիկական գործիք է՝ հատակագծային երկչափ արտակցիա, որը պարզաբանում է քաղաքային տարածքների կառուցվածքը և կարգը: «Ծավալ-հող տեսություն» սկզբունքներով կազմված հատակագծի նախատիպ է իտալացի ճարտարապետ Ջիամբատիստա Նոլիի կողմից 1784 թ. կազմած Յոռմի քարտեզը [43]:

Ի տարբերություն «ծավալ-հող տեսության», որը հիմնված է ծավալների և բացատների համակարգի վրա, «կապի տեսությունը» բխում է գծերից, որոնք կապում են մի տարրը մյուսի հետ: Կապերը ձևավորվում են փողոցների, հետիոտնային ուղիների, գծային բաց տարածությունների կամ այլ կապակցող տարրերի միջոցով, որոնք ֆիզիկական կապ են ստեղծում քաղաքի տարբեր հանգույցների միջև: Նախագծման փուլում «կապի տեսություն» կիրառումը նպատակ ունի կազմելու ցանց՝ կապերի համակարգ, որը հնարավոր է դարձնում քաղաքային տարածքների հիերարխիկ դասակարգումը: Տվյալ պարագայում, ի տարբերություն «ծավալ-հող տեսության», շեշտադրումը արված է շրջանառության, այլ ոչ թե տարածքների հատակագծային դիագրամի վրա: Այս պարագայում շարժման համակարգերը և ենթակառուցվածքի արդյունավետությունը գերակա են տարածքի արտաքին հատակագծային կառուցվածքի նկատմամբ:

«Վայրի տեսությունը» մեկ քայլ առաջ է «ծավալ-հող» և «կապի» տեսություններից այն առումով, որ հաշվի է առնում նաև մարդկային պահանջմունքների, մշակութային, պատմական և բնական ենթատեքստերը: «Վայրի տեսություն» տեսաբանները ֆիզիկական տարածությունը տալիս են հավելյալ հարստություն՝ ներառելով յուրօրինակ ձևեր և տեղանքին բնորոշ հատկություններ: Տեսությունը առաջնայնություն է տալիս պատմության և

ժամանակի ուսումնասիրությանը՝ գոյություն ունեցող միջավայրում նոր տարրի արդյունավետ ներդրումն ապահովելու նպատակով: «Վայրի տեսության» մեջ սոցիալական և մշակութային արժեքները, տեսողական ընկալումը, անհատների անմիջական վերահսկողությունը հասարակական միջավայրի վրա նույնքան կարևոր են, որքան կապերի պարփակությունը և կապակցվածությունը:

Վերոնշյալ տեսություններից յուրաքանչյուրն ունի իր ուրույն արժեքը, սակայն լավագույնը այս երեքի համադրումն է՝ ծավալների և բացատների կառուցվածքը սահմանելու, մասնատվածների միջև կապերը կազմակերպելու, մարդկային պահանջմունքները բավարարելու և միջավայրի առանձնահատուկ կառուցվածքային հատկություններին արձագանքելու նպատակով:

«Ծավալ -հող տեսությունը» սահմանում է, որ այն պարագաներում, երբ քաղաքային կառուցվածքում հորիզոնականի փոխարեն գերակայում է ուղղահիգ ուղղությունը՝ աշտարակներ, երկնաքերներ, ապա կոհերենտ քաղաքային միջավայրի ձևատեղծումը անհնարին է: Ընդարձակ հատակագծային տարածության վրա ուղղահիգ տարրի տեղադրման դեպքերը հիմնականում հանգեցնում են ճնշող և հազվադեպ օգտագործվող տարածությունների առաջացմանը: Լանդշաֆտում անկանոն տեղակայված ուղղահիգ շենքերը չեն կարող միջավայրին հաղորդել տարածքային կառուցվածք ոչ ադեկվատ հողային ծածկույթի պատճառով: Այս պարագայում դոմինանտները ընկալվում են անջատ, իսկ դրանց շուրջն առկա կառուցապատումը դուրս է մնում ընկալումից: Քաղաքային բարենպաստ ձևատեղծման համար տարածությունների պարագիծը պետք է լինի լավ փոխկապակցված: Դրական հատկանիշներով օժտված բացատների՝ չկառուցապատված տարածությունների, ձեռքբերման լավագույն տարբերակը հորիզոնական շենքերի կիրառումն է, երբ կառույցն ունի ավելի մեծ մակերես, քան շրջակա տարածությունը:

Ըստ «ծավալ -հող տեսության»՝ հասարակական տարածությունները քաղաքին տալիս են խորհրդանշական բովանդակություն և իմաստ՝ ձևավորելով հավաքույթի վայրեր,

ճանապարհներ, միջանցիկ կապեր հասարակական և մասնավոր տիրույթների միջև:

Տարածությունը քաղաքային տպավորության մեդիումն է, այն ապահովում է կապը հասարակական, կիսահասարակական և մասնավոր տիրույթների միջև: Այս կապի գործելու նպատակով անհրաժեշտ է, որ շրջանառության խոչընդոտները և շարունակականության բացատները հասցվեն նվազագույնի կամ վերացվեն:

«Կապի տեսություն» մեջ տարբերվում են քաղաքային տարածությունների երեք ձև՝ կոմպոզիցիոն, մեգահամակարգ և խմբային: Կոմպոզիցիոն ձևը բաղկացած է ինքնուրույն դասավորված շենքերից՝ արստրակտ փոխադարձ դասավորությամբ: Մեգահամակարգում անհատական բաղադրիչները ներգրավված են ընդարձակ շրջանակի հիերարխիկ բաց վերջավորությամբ և փոխկապակցված համակարգում: Մեգահամակարգում կապերը ներդրված են համակարգ ստանալու նպատակով: Խմբային ձևը տարածության մեջ կմախքի վրա տարրերի աստիճանաբար լրացումների հետևանք է: Այն բնորոշ է շատ պատմական քաղաքների տարածքային կազմակերպմանը: Խմբային ձևում կապակցվածությունը բնականորեն ներառված է որպես օրգանական համակարգի բաղկացուցիչ մաս:

1.3.2. Տարածքային սիստեմ

Գործածված հասկացություններ .

Չեռավորություն քայլ (Step depth/Visual depth) - տվյալ գծից դեպի այլ գծեր շրջադարձների քանակն է. քանի քայլ է ընտրված գծի և մյուս բոլոր գծերի միջև:

Միջին հեռավորություն (Mean depth) - հաշվարկվում է Step depth-ի նման արդյունքները գումարվում են և բաժանվում գրաֆում առկա հանգույցների քանակին հանած հաշվարկվող հանգույցը ($\text{Mean depth} = \text{Step depth} / \text{գրաֆի հանգույցներ} - 1$):

Նորմալացում - տարբեր համակարգերը մեկը մյուսի հետ համեմատելի դարձնելու գործընթաց է՝ արժեքը ներդնելով 0-1 միջակայքում: Կատարվում է, այսպես կոչված, հարաբերականացված ասիմետրիան ստանալու համար: Չափի առնելով այն հանգամանքը,

որ առանցքային քարտեզների գրաֆի աճի հետ այն դառնում է նվազ
ինտեգրված (կապված այն կազմող գծերի հատման հետ), ստացված
արժեքը բաժանվում է d գործակցի վրա: Արդյունքում՝ փոքր
համակարգը միջտստացվում է ավելի ինտեգրված քան մեծը:

Տոպոլոգիական քայլ (Topological step) - ցույց է տալիս նշված
փողոցից փողոցային ցանցի ուղղությունների փոփոխությունների
քանակը:

Անկյունային քայլ (Angular step) - ցույց է տալիս նշված
փողոցից փողոցային ցանցի այլ փողոցների անկյունային
փոփոխությունների արժեքները: $90^\circ=1$, $180^\circ=2$, մյուս անկյունային
արժեքները հաշվարկվում են 0-2 միջակայքում ինտերպոլյացիոն
եղանակով:

Մետրական քայլ (Metric step) - հաշվում է հեռավորությունը ոչ թե
շրջադարձների քանակով, այլ տվյալ կետից դեպի գրաֆի այլ կետ
մետրական չափման համակարգով հեռավորությունը՝
տեսանելիության գրաֆի միջով: Նշված քարտեզների համար որպես
հաշվարկային կետկարող են ընտրվել 1 և ավելի հանգույցներ:

Տարածքային սինտեքսը (Space Syntax) տարածքային կառուցվածքի
ուսումնասիրության մեթոդաբանություն է, որը ըստ դրա
չատագովների թելը է տալիս բացահայտել կապը տարածքի
կառուցվածքի և տարբեր սոցիալ-տնտեսական և միջավայրային
երևույթների միջև: Այն թելը է տալիս գնահատել տրանսպորտի և
մարդկային հոսքերի շարժումը, մարդու կողմից տարածության
տեսողական ընկալումը, հողօգտագործման արդյունավետությունը
և խտությունը, քաղաքի ընդարձակումը և սոցիալական
բազմազանությունը, տարածքի անվտանգությունը, հողի արժեքը,
արտանետումների քանակը և քաղաքի կենսագործունեության հետ
առնչվող այլ երևույթներ [44][45][46][47][48]: Մեթոդի հիմնական
էությունը այն է, որ տարածությունը հնարավոր է բաժանել
բաղկացուցիչ մասերի՝ ցանցերի, որոնք կարող են վերլուծվել
գրաֆային եղանակով: Տեսությունը հիմնված է այն մտքի վրա, որ
տարածության մեջ մարդու կողմնորոշվելը պայմանավորված է
տարածության հատակագծային կառուցվածքով, այլ խոսքով՝
տարածությունն ուղղորդում է մարդուն:

Տարածքային սինտեքսի ուսումնասիրության պիոները Բիլլ Յիլլերն է: Նրա և Ջուլիեն Յանսենի հեղինակած «Տարածքի սոցիալական տրամաբանությունը» (Social Logic of Space) գիրքը ներկայացնում է մարդ-կառուցապատված միջավայր փոխադրությունների հիմնական տեսությունը [38]: Յիլլերի ուսումնասիրությունները ի հայտ են բերում օրինաչափություններ քաղաքային միջավայրի կառուցվածքային չափումների և մարդկային հոսքերի շարժման միջև: Գրքի հրատարակումից հետո տարածքային սինտեքսի գաղափարը հիմք է հանդիսացել միջազգային գիտաժողովների և բազմաթիվ հոդվածների հրատարակման համար, որի ապացույցն է 2015թ. տեղի ունեցած տարածքային սինտեքսի թվով տասներորդ գիտաժողովը [49]: Այն կայացավ Լոնդոնի համալսարանի քոլեջում, որտեղ և ձևավորվել է տեսությունը և ներկայումս էլ ուսումնասիրվում է քոլեջի Տարածքային սինտեքսի Լաբորատորիայում, որի տնօրենն է Բիլլ Յիլլերը:

Տարածքային սինտեքսի վերլուծությունները գործում են հետևյալ երեք հիմնական տարրերի հետ՝

- ուռուցիկ տարածություն (convex space),
- իզովիստոզ (isovist field),
- առանցքային գիծ (axial line):

Ուռուցիկ տարածությունը բնորոշվում է որպես տարածք, որում ներառված բոլոր կետերը կարող են միացվել իրար՝ առանց դուրս գալու տվյալ տարածքի սահմաններից: Ուռուցիկ տարածություններն օգտագործվում են շենքերի և շենքերի խմբերի միջև առկա տարածությունների կառուցվածքային հատկանիշների ուսումնասիրության համար [50]:

Տարածքային սինտեքսի հիմնական բաղադրիչներից է առանցքային վերլուծությունը: Այն ներառում է առանցքային գծերի վրա գործարկված չափումները: Առանցքային գծերը կազմվում են քաղաքի կառուցապատումը պատկերող քարտեզի ազատ տարածություններում բոլոր հնարավոր ամենաերկար տեսանելիության ճառագայթների կառուցմամբ: Արդյունքում՝ ստացված գծագիրը դիտարկվում է որպես մաթեմատիկական գրաֆ,

որում առանցքային գծերը գրաֆիկոդերն են, իսկ դրանց հատման կետերը և վերջնակետերը՝ հանգույցները: Պատկերն անվանվում է նաև տեսանելիության գրաֆ, իսկ դրա վրա գործարկված վերլուծության ունեները՝ տեսանելիության գրաֆ-վերլուծության ունեներ (ՏՎԱ): Ըստ տեսության՝ տարածքի պատկերումը առանցքային քարտեզի միջոցով ի հայտ է բերում տարածության կառուցվածքային այնպիսի հատկանիշներ, որոնք դուրս են մնում տարածության այլատեսակ պատկերումների վրա գործարկված վերլուծության ունեների պարագայում [51]: Այնինչ առանցքային քարտեզի բացարձակ անփոխարինելիությանը տարածության սինտակտիկ չափումների համար վիճարկելի է, քանզի այդպիսի չափումները կարող են կատարվել նաև փողոցների միջնագծերի սխեմայի վրա [52]:

Միջնագծերի սխեմայի կիրառման նպատակահարմարությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նման տվյալների բազան ազատ հասանելի է աշխարհի ցանկացած երկրի փողոցային ցանցի համար Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (ԱՏՀ) շնորհիվ: Առանցքային քարտեզի պարագայում առկա է դրա կազմման երկու տարբերակ: Առաջինը բոլոր գծերի հերթական կառուցման տարբերակն է, ինչը մեծ համակարգի պարագայում բավականին ժամանակատար և աշխատատար է: Երկրորդը քարտեզի կազմումն է համակարգչային վերլուծության գործարկման միջոցով, ինչը պահանջում է բարձր ճշտությամբ հատակագիծ՝ կառուցապատման տարրերի փակ պարագծային կառուցվածքով, բոլոր շենքերի պատկերմամբ, իսկ ազատ հասանելիության նման տվյալների բազա առկա չէ: Ուստի, տեսանելիության գործոնի անտեսման պարագայում փողոցների միջնագծերի սխեմայի կիրառումը ցանցի հանգույցների կառուցվածքային հատկանիշների գնահատման համար ավելի նպատակահարմար է:

Տարածքային սինտեքսի շրջանակներում՝ կապերի տեսության վրա հիմնված հիմնական չափումներն են մետրական, անկյունային, տարլոգիական հեռավորությունները, ինտեգրվածությունը, կապակցվածությունը, միջանցիկությունը և հեռացվածությունը: Տվյալ վերլուծության ունեները կարող են կիրառվել ինչպես ամբողջ

համակարգի, այնպես էլ համակարգի յուրաքանչյուր հանգույցի շուրջը նախանշված շառավղի սահմաններում: Երկու տարբերակներում էլ արդյունքները զգալիորեն տարբեր են:

Ներկայացված հաշվարկներից թերևս առավել պարզը մետրական հեռացվածությունն է: Այն առանցքային քարտեզի (կամ միջնագծերի քարտեզի) միջով, դիցուք Ա և Բ կետերը միացնող ճանապարհի երկարությունն է: Այնինչ ըստ տեսության՝ մարդկային հոսքերի շարժումը ոչ միշտ է պայմանավորված մետրական հեռավորության կարճությամբ: Մեծ հեռավորությունների դեպքում կարևոր է նաև ճանապարհի անկյունային փոփոխությունների չափը [53]:

Անկյունային վերլուծության գաղափարը առաջին անգամ քննարկվել է ԱՏՅորների կողմից: Նա այն ներկայացնում է որպես տարածության միջով շարժման կանխագուշակման քանակական գնահատման միջոց: Մեթոդը հիմնված է երկու հիմնական դատողության վրա: Առաջինը մարդը կամ տրանսպորտային փոխադրամիջոցը, որը պետք է տեղաշարժվի, դիցուք Ա-ից Բ կետը, ճանապարհին հակված է կատարել նվազագույն չափի շրջադարձեր: Դա ավելի հավանական է, քան այն ենթադրությունը, որ նակընտրի Ա և Բ կետերը կապող ամենակարճ ճանապարհը: Երկրորդ դատողությունը այն է, որ դիտարկվող տարածության ցանկացած կետ կարող է հանդիսանալ ուղևորության սկզբնակետ և վերջնակետ, և ցանկացած ուղևորություն ցանկացած սկզբնակետից վերջնակետ համարժեք հավանական են [54]: Այստեղ առաջ է գալիս անկյունային քայլի հասկացությունը, որը ցույց է տալիս Ա և Բ կետերի միջև անկյունային փոփոխությունների արժեքները: Անկյունային փոփոխության արժեքները հետևյալն են՝ $90^\circ=1$, $180^\circ=2$, մյուս անկյունային արժեքները հաշվվում են 0-2 միջակայքում ինտերպոլյացիայի եղանակով:

Անկյունային վերլուծությունը ի սկզբանե ներկայացվել է որպես տեսանելիության գրաֆի վերլուծության հավելում, սակայն հետագայում այն կիրառվել է որպես հավելում առանցքային վերլուծությունների համար [55]:

Ի տարբերություն անկյունային քայլի, որը հաշվում է անկյունային փոփոխությունների չափի գումարային արժեքը,

տոպրլ ոգիական քայլը ցույց է տալիս դիցուք Ա և Բ կետերը առանցքային քարտեզի միջով միացնող ճանապարհի ուղղությամբ ունենալի փոփոխությունների քանակը:

Մետրական և անկյունային հեռավորություններից զատ, փողոցային ցանցի կառուցվածքն օժտված է նաև այլ հատկություններով, որոնց բարձր արժեքն ավելի է կարևորվում, քան քննարկված հեռավորությունները: Այդ հատկությունները ի հայտ են գալիս կառուցվածքային, այն է՝ ըստ տարատեսակ կենտրոնականության չափումների դեպքում: Կառուցվածքային հատկանիշների գնահատման չափումներից պարզագույնը կապակցվածությունն է: Այն արտահայտում է առանցքային քարտեզի տվյալ գծի հետհատվող այլ գծերի անմիջական հատումների քանակը, սակայն մեծ քանակի հատումները դեռևս չեն արտահայտում գծի կարևորությունը համակարգի համար:

Փողոցային ցանցի յուրաքանչյուր հանգույց օժտված է որոշակի կենտրոնականությամբ՝ պայմանավորված համակարգի կառուցվածքով և դրանում իր դիրքով: Համակարգում կենտրոնականության գաղափարը քննարկվում է մաթեմատիկայում՝ գրաֆերի տեսության մեջ [56], սակայն տարածքային սինտեքսում կիրառվող կենտրոնականության չափումները տարբերվում են գրաֆների տեսության մեջ ընդունվածներից: Ըստ հաշվարկման մեթոդի՝ ընդունված կենտրոնականության հաշվարկին թերևս ամենամանր միջանցիկություն կենտրոնականությունն է:

Միջանցիկությունը ցույց է տալիս, թե համակարգի բոլոր կետերը միացնող ճանապարհներից քանիսն են անցնում յուրաքանչյուր սեգմենտով՝ կրկին օգտագործելով տարբեր տեսակի հեռավորություններ տարբեր անկյունային արժեքների դեպքում: Այն ցույց է տալիս օբյեկտի համար, դիցուք կետով անցնելու հավանականությունը՝ արտահայտելով դրա պոտենցիալը այլ փողոցային հանգույցների նկատմամբ [48]:

Տարածքային սինտեքսի հիմնական չափումը ինտեգրվածությունն է, որի հաշվարկը նույնպես հիմնված է կենտրոնականության վրա: Ըստ Հիլլերի ուսումնասիրությունների՝ այն լավագույնս արտահայտում է

փողոցներում մարդկային հոսքերի շարժման կողմնորոշումը: Քաղաքային միջավայրում հետիոտնային հոսքերի շարժման ինտենսիվության և ըստ ինտեգրվածության փողոցների գնահատման արդյունքների համեմատական ուսումնասիրություններն ի հայտ են բերում ուղիղ կապ այդ երկուսի միջև, այն է հետիոտնային առավելագույն ինտենսիվ հոսքերն անցնում են բարձր ինտեգրվածությամբ փողոցներով:

Ինտեգրվածության չափումն արտահայտում է, թե որքան մոտ է յուրաքանչյուր սեգմենտ մյուս բոլոր սեգմենտներին տարբեր տեսակի հեռավորությունների պարագաներում և տարբեր մասշտաբներում: Այն ցույց է տալիս, թե որքան դյուրին է մեկ սեգմենտից գնալ դեպի մյուս բոլոր սեգմենտները, ինչպես և կամայական ճանապարհով շարժվող օբյեկտների տվյալ կետում հայտնվելու հավանականությունը:

Տարածքային սինտեքսի վերլուծությունների գործարկման ծրագրային փաթեթներն են Depthmap [57], Confeego, որոնք մշակվել են Լոնդոնի համալսարանի քոլեջում: Depthmap ծրագրային փաթեթը ոչ շահույթային, ուսումնական և գիտահետազոտական կիրառման համար ազատ հասանելի է: Միևնույն ժամանակ, առկա են US3 տվյալների վերլուծման համակարգչային ծրագրերի համար նախատեսված հավելումները, որոնք թույլ են տալիս գործարկել սինտակտիկ վերլուծություններ անմիջապես US3 միջավայրում` US3 տվյալների բազայից ներբեռնված տվյալների հիման վրա [58][59]:

Տարածքային սինտեքսի տեսության մաս է կազմում նաև տեսանելիության վերլուծությունը, որը հիմնված է իզոպիստ դաշտերի վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքային միջավայրը մարդու կողմից ընկալվում է տեսողության միջոցով, դրա տեսողական որակների դուրսբերումը և գնահատումը քաղաքային բարենպաստ միջավայրի կազմակերպման հիմնական խնդիրներից մեկն է: Քաղաքային միջավայրի տեսողական ընկալման գնահատումը արտերկրի նախագծային պրակտիկայում քաղաքաշինական վերլուծության կարևոր ճյուղերից է:

Քաղաքային միջավայրի` մարդու կողմից տեսողական ընկալման ուսումնասիրություններ կատարել են Ս.Ս. Հայվարդը և Ս.Ս.

Ֆրանկլինը [60], սակայն ճարտարապետական ձևերի օբյեկտիվ գնահատման չափանիշների բացակայության պայմաններում այդ ուսումնասիրությունների տեսությունը դեռ ամբողջությամբ ձևավորված չէ [61]:

Տեսողական ընկալման հիման վրա քաղաքային տարածքների միջավայրային որակների գնահատման առաջին փորձերը ներկայացվել են 1960-ականների սկզբին ճարտարապետության, հոգեբանության, անտրոպոլոգիայի և սոցիոլոգիայի բնագավառներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում: Անգլիացի անտրոպոլոգ Էդուարդ Յոլլի կողմից արոքսեմիկների տեսության ներկայացումը հիմք հանդիսացավ դրա հետագա կիրառումների համար ճարտարապետական և քաղաքայինական նախագծման բնագավառներում [62]: Պրոքսեմիկների տեսությունն ուսումնասիրում է անհատների և մարդկանց խմբերի փոխարաբերությունները տարածության մեջ իրար և տարածության հետ, ալյ խոսքով մարդու կողմից տարածության ընկալումը և օգտագործումը [63]: Դրան հաջորդեցին տեսողական ընկալման ուսումնասիրությունները ճարտարապետական և քաղաքայինական նախագծման բնագավառում օգտագործելու փորձերը: Նման աշխատություններից առավել նշանավորը թերևս Կ.Լ.Ինիչի «Քաղաքի պատկերը» գիրքն է: Գիրքը առաջ է բերում քաղաքային միջավայրի տեսողաբար ընկալելիության և պատկերավորության հասկացությունները որպես տեսողական ընկալման գնահատման ենթակա պարամետրեր [64]: Տվյալ պարամետրերի գնահատումները հնարավոր է իրականացնել իզոպիստների միջոցով:

Իզոպիստ հասկացությունն առաջին անգամ ներկայացվել է Տենդիի կողմից լանդշաֆտային աշխարհագրության բնագավառում, սակայն ճարտարապետության ոլորտում դրա կիրառման հնարավորությունները ներկայացվել են Բենեդիկտի կողմից: Իզոպիստը բնորոշվում է որպես որոշակի կետից մատչելի տեսարան [62][65]: Դրա բնույթը պատկերացնելու լավագույն միջոցը մութ միջավայրում տեղակայված օբյեկտների շուրջ մեկ կետից լույսի տարածումն է. լուսավորված տարածությունը իզոպիստի մակերեսն է: Գործնականում այն եռաչափ է, սակայն հաշվարկային

վերլուծությանը պարզեցնելու նպատակով այն հիմնականում դիտարկվում է իր երկչափ պրոյեկցիաների միջոցով: Ցանկացած կետի և տարածության համար իզոպիստի չափերը և պարագծային կառուցվածքը յուրօրինակ են, և դրանք փոփոխվում են տարածության մեջ կետի տեղաշարժմամբ:

Ըստ տեսանելիության վերլուծության ունեցողի՝ բանական ընկալման տեսանկյունից տարածությունը կարող է դիտարկվել երկու մասշտաբներով՝ փոքր և մեծ: Մեծ մասշտաբի տարածությունը դուրս է մարդու՝ մեկ դիտակետից տեսողական ընկալման սահմաններից, իսկ փոքր մասշտաբի տարածությունը կարող է ընկալվել մեկ դիտակետից [66]: Տարածության տեսողական ընկալման հատկանիշների գնահատման համար մեկ իզոպիստի կառուցվածքի ուսումնասիրությունը բավական չէ: Այդ իսկ պատճառով կազմվում են իզոպիստի դաշտերը, որոնք ներկայացնում են ընտրված ճանապարհով կետի տեղաշարժման հետևանքով կազմված իզոպիստների համադրում: Հարցը, թե որն է իզոպիստների այն նվազագույն քանակը, որոնցից ամբողջ միջավայրը կարող է տեսանելի լինել, բազմիցս քննարկվել է Բենեդիկտի և Դեյվիսի կողմից նրանց գեկոլոյցներում, սակայն դրա հաշվարկման հստակ միջոցը դեռևս առկա չէ:

Ըստ Բենեդիկտի՝ իզոպիստի վեց հիմնական չափումներն են մակերեսը, պարագիծը, համադրելիությունը (իզոպիստի սահմաններում համադրվող սահմանների երկարությունը), յուրաքանչյուր դիտակետի շուրջը շառավղային հեռավորությունների դիսպերսիան և ասիմետրիան, կոմպակտության չափումը, որը կոչվում է նաև շրջանագծայնություն: Վերջինը իզոպիստի պարագծի քառակուսու և մակերեսի հարաբերությունն է [61]: Կոնոյը ընդլայնեց և փոփոխեց այս չափումները՝ վիրտուալ տարածության մեջ իզոպիստի հատկությունները սահմանելու նպատակով [67]:

Երկչափ իզոպիստ վերլուծության ունեցողի գործարկման ծրագրային փաթեթներ են Depthmap-ը, OmniVista-ն, ազատ հասանելիության SYNTAX2D-ն [68], որոնցից վերջինը կիրառվել է ատենախոսության շրջանակներում համապատասխան

վերլուծությունների գործարկման համար: Արդի պայմաններում մեթոդի զարգացումը թույլ է տալիս գործարկել իզոլիստի եռաչափ վերլուծություններ, սակայն հասանելի էլակետային տվյալների հիման վրակազմված միջավայրը շատ հեռու է իրականից, ուստի դրավրա գործարկված վերլուծությունների արդյունքների ճշգրտությունը բարձր է [69][70]: Տեսանելիության եռաչափ վերլուծություններ հնարավոր է կատարել ԱՅ միջավայրում, համապատասխան ծրագրային հավելումների միջոցով, ԱՅ տվյալների բազայի հիման վրա:

Տեսանելիության վերլուծությունների մաս է կազմում գործակալ վերլուծությունը: Դա կինետիկ հաշվարկ է, որը կատարվում է տեսանելիության գրաֆի վրա պայմանական թվով գործակալների (նյութական կետերի, որոնք ներկայացնում են հետիոտնային շարժումը) տեղաշարժման հետագծերի հիման վրա՝ առավել ինտեգրված հանգույցների դուրս բերման նպատակով: Գործակալները հանդիսանում են հետիոտնային շարժման մասնակիցներ: Նրանց տեղաշարժման ուղիների ընտրությունը հիմնված է տեսանելիության գրաֆի վրա՝ պայմանավորված տարածքային սինտեքսի այն դիտարկմամբ, որ առավել ինտեգրված տարածքներն ունեն հետիոտնային առավել ինտենսիվ հոսքերի շարժում [71][72]:

1.3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր

Քաղաքաշինական վերլուծություններ իրականացնելիս լայն կիրառվում են աշխարհագրական տեղեկատվական համակարգերը (ԱՅ): ԱՅ-ն համակարգ է, որը նախատեսված է տարատեսակ աշխարհագրական տվյալների ստեղծման, պահպանման, կառավարման և վերլուծման համար: Այն կիրառվում է բուսաբանության, էկոլոգիայի, միջավայրային գիտությունների, երկրաբանության, սոցիոլոգիայի, աշխարհագրության, քաղաքաշինության և միջարքայլ բնագավառներում [73]: ԱՅ-ը թույլ է տալիս կատարել քաղաքային միջավայրի բազմատեսակ վերլուծություններ, ինչպես, օրինակ, տեսանելիության, արևահարման, տարատեսակ կենտրոնականության, մատչելիության, ինչպես նաև քաղաքային

տարրերի դասակարգումներ, կազմել հաշվեկշիռներ և տվյալների բազաներ: ԱՏՀ տվյալները պահվում են ռաստերային և վեկտորային ձևաչափերով: ԱՏՀ միջավայրում համապատասխան ծրագրային ապահովման միջոցով հնարավոր է հաշվել քաղաքի յուրաքանչյուր տարրի ցանցային կենտրոնականությունը և կատարել համապատասխան դասակարգում: Կենտրոնականությունը հանդիսանում է քաղաքային կառուցվածքի ձևավորման հիմնական գործոն: Այն թույլ է տալիս բացատրել հողի արժեքի տատանումները, բացահայտել սպասարկման օբյեկտների արդյունավետ գործունեության համար նպատակահարմար վայրերը, քաղաքի տարբեր հատվածներում մարդկային հոսքերի ինտենսիվության տարբերության պատճառները և այլն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածքի քաղաքաշինական արժեքի ձևավորման վրա կարող է ազդեցություն ունենալ նաև նրա տեղակայումը քաղաքի կառուցվածքում, ուսումնասիրության շրջանակներում կատարվել են երևան քաղաքի հատակագծային կառուցվածքի կենտրոնականության տարատեսակ վերլուծություններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնասիրության համար ելակետային նյութերը վերցվել են ԱՏՀ ազատ հասանելիության տվյալների բազայից, ԱՏՀ միջավայրում վերլուծությունների կատարման համար ընդունվել է նույն միջավայրում աշխատող UNA (Urban Network Analysis) ծրագրային հավելումը, որը ArcGIS ծրագրում թույլ է տալիս գործարկել քաղաքային կառուցվածքի կենտրոնականության տարաբնույթ վերլուծություններ: Ծրագրային հավելվածը թույլ է տալիս կատարել ցանցային կենտրոնականության հինգ տեսակի չափում, որոնք են՝ հասանելիությունը (Reach), կշռի ինդեքս (Gravity index), միջանցիկությունը (Betweenness), մոտիկությունը (Closeness), ուղղագծությունը (Straightness):

Հասանելիության կենտրոնականությունը չափում է այն օբյեկտների քանակը, որոնք ներառված են տվյալ օբյեկտից նշված փնտրման շառավղի սահմաններում:

Կշռի ինդեքսը, ի տարբերություն հասանելիության չափման, որը միայն հաշվում է փնտրման շառավղի սահմաններում ներառված օբյեկտների քանակը, տվյալ չափումը հաշվի է առնում նաև այդ օբյեկտներին հասնելու համար անհրաժեշտ միջավայրային դիմադրությունը: Այն թույլ է տալիս գնահատել ճանապարհների քանակը, գրավչությունը մեկ միավորի միջոցով:

Միջանցիկության կենտրոնականությունը չափում է, թե համակարգի յուրաքանչյուր երկու օբյեկտ միացնող ամենակարճ ճանապարհներից քանիսն են անցնում տվյալ օբյեկտով:

Մոտիկության կենտրոնականությունը օբյեկտից դեպի համակարգի բոլոր այլ օբյեկտներ հեռավորությունների գումարի հակադարձն է:

Ուղղագծության կենտրոնականությունը չափում է, թե քննարկվող օբյեկտից դեպի այլ օբյեկտներ ամենակարճ ճանապարհները որքանով են նման եվկլիդեսյան հեռավորություններին (ուղիղ գծերին): Վերոնշյալ հինգ վերլուծությունները կարող են կատարվել ինչպես ամբողջ համակարգի, այնպես էլ համակարգը կազմող յուրաքանչյուր տարրի շուրջ նախանշված շառավղի սահմաններում: Տվյալ ծրագրային փաթեթը, ի տարբերություն նմանատիպ այլ գործիքների, որոնք գործում են երկու տեսակի՝ կետերի և գծերի տարրի հետ, աշխատում է նաև երրորդ տեսակի տարրի՝ շենքերի հետ: Դա հնարավորություն է ընձեռում ուսումնասիրությունը կատարել յուրաքանչյուր շենքի մասշտաբով, քանզի միևնույն փողոցի վրա տեղակայված երկու հարևան շենքերի չափումները կարող են տարբեր լինել:

ԱՏՅ կարող է կիրառվել նաև փողոցային ցանցից զատ՝ քաղաքի այլ կառուցվածքային տարրերի խմբավորման, դասակարգման, դրանց տվյալների բազաների ստեղծման, տեղաբաշխվածության գնահատման, կենտրոնացման հանգույցների դուրսբերման և տարատեսակ օբյեկտների հասանելիության գոտիների կազմման հիման վրա քաղաքային տարածքների արժևորման համար:

Օբյեկտների կենտրոնացման հանգույցների դուրսբերման համար ԱՏՅ միջավայրում վերլուծությունների գործարկման մեթոդներից է Վորոնեի դիագրամը: Այն հիմնված է մոտակա

հարևանությամբ սկզբունքի կիրառմամբ հարթության մասնատման վրա [74]: Մաթեմատիկայում Վորոնեի դիագրամը ներկայացնում է հարթության շլատում տարածքների, որոնցում ընդգրկված կետերի բազմությունն ավելի մոտիկ է նախապես նշված կամայական քանակի կետերից որևէ մեկին, քան մյուսներին: Դիագրամի կառուցումը հետևյալն է. նախապես նշված կետերը իրար են միացվում՝ կազմելով եռանկյունների համակարգ, որը կոչվում է Դելոնեի եռանկյունավորում: Եռանկյունների կողերի միջև ուղղահայացների կառուցմամբ ձևավորվում է Վորոնեի դիագրամը: Ստացված պատկերը կոչվում է նաև Վորոնեի խճանկար [75]: Վորոնեի դիագրամն ունի տարատեսակ կիրառություններ երկրաչափության, ճարտարապետության և գիտության տարբեր բնագավառներում: Այն կիրառվում է նաև պարամետրիկ մոդելավորման մեջ, որպես օրինակ փոփոխության, մոդելների կառուցման համար:

Քաղաքաշինության բնագավառում դիագրամի կիրառման օրինակ է Չինաստանի Շանդոնգ նահանգի հատակագծային կառուցվածքի վերլուծությունը ԱՏՀ միջավայրում Վորոնեի դիագրամի միջոցով, որի համաձայն հատակագծային օպտիմալ կառուցվածքը քաղաքաշինական նախագծման կարևոր խնդիրներից է: Խնդրի լուծման նպատակով հեղինակը կատարում է նահանգում գտնվող քաղաքների և վարչական շրջանների տեղաբաշխվածության գնահատում՝ դրանց շուրջը Վորոնեի դիագրամի կազմման միջոցով [76]: Քաղաքների կենտրոնների առկա իրավիճակի և տեղափոխման միջոցով կազմված պատկերների համեմատական վերլուծությունը կարող է հիմք հանդիսանալ կից քաղաքներին բաժին ընկնող տարածքների սահմանների ձևավորման և քաղաքների կենտրոնների տեղակայման առավել նպատակահարմար վայրերի դուրսբերման համար: Թաղամասերի նախագծման պարագայում Վորոնեի դիագրամը կարող է օգտագործվել միատիպ սպասարկման օբյեկտներին բաժին ընկնող տարածքների դուրսբերման միջոցով դրանց օպտիմալ քանակի հաշվարկման և տեղակայման վայրերի բացահայտման համար:

Միավոր մակերեսի նկատմամբ տարրերի կենտրոնացման հանգույցների գնահատման նպատակով հնարավոր է օգտագործել նաև մոտակա հարևանության ինտերպոլյացիայի այլ \$n\$ կետեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՍՏ ԱՌԱՋԻՆ ԳԼԽԻ

1. ՀՀ-ում գործող օրենսդրական և նորմատիվային փաստաթղթերի ու սուբնասիրոնային արդյունքում արտածվել են տարածքի քաղաքաշինական արժեքի գործոնները, կատարվել է դրանց վերլուծություն: Ցույց են տրվել ՀՀԾՆ 30-01-2014-ով սահմանված գործոնների ցանկի ընդլայնման ուղղությունները՝ միտված տարածքի արդի պահանջներին բավարարող համալիր արժևորմանը:
2. Հայրենական և արտերկրի քաղաքաշինական փորձի և գերակատեսությունների ու սուբնասիրոնային արդյունքում դուրս են բերվել դրանց հիմնական սկզբունքները, քաղաքաշինական արժեքի գործոնները և չափանիշները: Կայուն զարգացման ապահովումը, ճարտարապետական և քաղաքաշինական ժառանգության արժևորումը, հետիոտնային հասանելիությունը, փողոցատրանսպորտային ցանցի կապակցվածությունը հանդիսանում են արդի քաղաքաշինական նախագծման գերակա խնդիրներ:
3. Բացահայտվել է կապը կայուն քաղաքաշինական զարգացման և «քաղաքաշինություն» հայրենական սահմանման միջև. կայուն զարգացումը ենթադրում է միջավայրային, սոցիալական և տնտեսական կայունություն, իսկ ՀՀ-ում քաղաքաշինությունը տնտեսական, սոցիալական, մշակութային և բնապահպանական գործոնների փոխկապակցված տարածական ամրագրումն է:
4. Արտերկրի քաղաքաշինական զարգացման կարգավորման միջոցների ու սուբնասիրոնային բացահայտվել է, որ դրանցում հատկապես կարևորվում է ճարտարապետական և քաղաքաշինական ժառանգության պահպանման և արժևորման հարցը: Ամրագրված կարգավորման միջոցներից են տարածքների պատմա-արտարապետական և մշակութային արժևորումը, քաղաքաշինական կարգավորման գոտիների սահմանումը և լրացուցիչ սահմանափակումների ամրագրումը: Հաշվի առնելով Երևանում խնդրի հրատապությունը ու սուբնասիրոնային մեթոդների կիրառման ուղիների բացահայտումը և դրանց

ներդրումը հայրենական արակտիկայում թույլ կտան
կարգավորել հարցը:

5. Ի հայտ են բերվել քաղաքաշինական նախագծման և
վերլուծության ներքին իրականացման արդի տեսության ներքին և
գործիքակազմի կիրառման ուղղության ներքին երևանում:
Դրանց կիրառմամբ հնարավոր է սահմանել տարածքի
քաղաքաշինական արժեքի գնահատման մեթոդներ և կատարել
համապատասխան արժևորում: Տարածքի քաղաքաշինական արժեքի
գնահատումը կարող է հիմք հանդիսանալ հավելյալ
կարգավորման միջոցների մշակման, ինչպես նաև տարածական
պլանավորման փաստաթղթերի մշակման մեթոդների
կատարելագործման համար:

**ԳԼՈՒԽ 2. ԱՐԺԵՔ ԶԵՎԱԿՈՐՈՂ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՌՈՒ ՑՎԱՃՔԱՅԻՆ ՏԱՐԻԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒ ԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՎՈՐՈՒ ՄԸ**

**2.1. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՏԱՐԻԵՐԻ, ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԵՎ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԲԱՑԱՐԱՅՏՈՒ ՄԸ**

Տարածքի քաղաքաշինական արժեքը պայմանավորված է դրանում առկա տարրերի գործառնական, ճարտարապետական, մշակութային կամ այլ տեսակի առանձնահատկություններով: Ուստի տարածքի արժևորման համար անհրաժեշտ է դուրս բերել քաղաքաշինական արժեքի հիմնական չափանիշները և արժեք ձևավորող գործոնները: Ըստ այդ գործոնների կազմված բաղադրիչների խմբերի՝ հնարավոր է կատարել տարածքի արժևորում, իսկ արդյունքների համադրմամբ՝ տարածքի քաղաքաշինական արժեքի գնահատում:

Քաղաքային ձևաբանության ուսումնասիրության արտերկրի փորձը ի հայտ է բերում երեք տեսություն՝ մեթոդներ, որոնց համադրումը ընձեռում է քաղաքի հատակագծային կառուցվածքի, գործառնական տեղաբաշխման, կենսագործունեության ուսումնասիրության և գնահատման գործիքակազմ: Գնահատման մեթոդների սահմանումը հիմնված է ուսումնասիրված տեսություններից երկուսի՝ «կապերի» և «վայրերի» տեսությունների վրա: Երրորդ ուսումնասիրված «ծավալ-հող» տեսության որոշ դրույթներ կիրառվել են ատենախոսության երրորդ գլխում՝ քաղաքաշինական բարձրարժեք տարածքների պահպանման մեթոդների մշակման գործընթացում:

Տարածքի քաղաքաշինական արժեքի գնահատման նպատակով անհրաժեշտ է կատարել քաղաքի հատակագծային կառուցվածքի վերլուծություն, որի նպատակն է դուրս բերել քաղաքաշինական արժեք ձևավորող տարրերը, կատարել դրանց խմբավորում և տեղաբաշխման գնահատում: Հաշվի առնելով ատենախոսության առաջին գլխում ներկայացված քաղաքային ձևաբանության ուսումնասիրության երեք տեսությունները՝ կենսագործունեության կազմակերպման տեսակետից, քաղաքը դիտարկվել է որպես երկու հիմնական բաղադրիչներից կազմված համակարգ՝ տարրեր և դրանք իրար միացնող կապեր՝ փողոցատրանսպորտային ցանց:

Տարածքի քաղաքաշինական արժեքի հայրենական և արտասահմանյան գործոնների հիման վրա սահմանվել են քաղադրիչների տեսակային խմբեր, որոնց առկայությունը ենթադրում է տարածքի արժևորում քաղաքաշինական տեսակետից: Դրանց դուրսբերման համար չափանիշներ են ընդունվել հետիոտնային շարժման գրավչությունը, տարածքի գործառական կարևորությունը և յուրօրինակությունը, ճարտարապետական և մշակութային արժեքները, բարձր կարգավիճակի օբյեկտներով պայմանավորված գործառության հագեցվածությունը: Ըստ դուրսբերված արժեք ձևավորող տարրերի առկայության, դրանց հասանելիության և կենտրոնացման հանգույցների՝ գնահատվել են երևանի քաղաքային տարածքները (Չավել ված 5, 6):

Փողոցատրանսպորտային ցանցի պարագայում, ի տարբերություն տարրերի, որտեղ տարածքներն արժևորվել են ըստ դրանց հասանելիության և կենտրոնացման հանգույցների, կատարվել է բուն փողոցների գնահատում և դասակարգում՝ պայմանավորված փողոցի տեղակայմամբ ամբողջ ցանցի կառուցվածքում: Այլ խոսքով փողոցատրանսպորտային ցանցը դիտարկվել է որպես գրաֆ, և չափվել են դրակառուցվածքային արժեքները:

Ըստ քաղադրիչների խմբերի գնահատման արդյունքների՝ համադրմամբ նախատեսվում է սահմանել երևանի տարածքների քաղաքաշինական արժեքը: Տարաբնույթ քաղադրիչների գնահատման արդյունքների համադրումը հնարավոր է կատարել ըստ ընդհանուր սանդղակի, գնահատման արդյունքների վերախմբավորման և դրանց վերադրման միջոցով (Չավել ված 6, նկ.1-3):

Տարածքի քաղաքաշինական արժեքի քաղադրիչներն են.

- տարրեր՝
 - պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտներ և տարածքներ,
 - համաքաղաքային նշանակության օբյեկտներ և համալիրներ,
 - կառուցվածքահատակաձային և հորինվածքային հանգույցներ,
 - բնական համակարգեր և շրջակամիջավայր,
- կապեր՝

- փողոցատրանսպորտային ցանց:

Քաղաքաշինական արժեք ձևավորող կառուցապատման տարրերի խմբերը կազմվել են պատմաճարտարապետական, մշակութային և գործառական արժեքների տեսանկյուններից: Առաջինի պարագայում արժեք ձևավորող տարրեր են ընդունվել հուշարձան շենքեր, շինությունները, իսկ երկրորդի պարագայում՝ համաքաղաքային նշանակության օբյեկտները:

2.1.1. Տարրեր

Պատմաճարտարապետական և մշակութային արժեք ներկայացնող օբյեկտներ և տարածքներ. շինություն գեղարվեստական կամ ճարտարապետական հատկանիշների գնահատումը հաճախ կրում է սուբյեկտիվ բնույթ, ուստի անհատի կողմից դրանց գուտակնադիտական արժևորումը չի կարող հիմք հանդիսանալ շինության ճարտարապետական արժեքի որոշման համար: Այնինչ հուշարձան շենքերը հանդիսանում են պատմաճարտարապետական և մշակութային բացարձակ արժեք, ուստի դրանք կարող են դիտարկվել որպես հավասար արժեք ձևավորող օբյեկտներ, իսկ դրանց առկայությունը տարածքում ենթադրում է տարածքի արժևորում [77]: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ հուշարձանները իրենց հերթին դասակարգվում են ըստ հանրապետական և տեղական նշանակության, տարածքի քաղաքաշինական արժեքի գնահատման գործընթացում հաշվի է առնվել նաև այդ հանգամանքը: Ըստ հուշարձանների գնահատման՝ արդյունքները ճշգրտվել են լրացուցիչ գործակցով՝ պայմանավորված դրա հանրապետական կամ տեղական նշանակությամբ: Սահմանված գործակցի համաձայն՝ հանրապետական նշանակության հուշարձանները գնահատվել են երկու, իսկ տեղական նշանակության հուշարձանները մեկ միավորով, որով ճշգրտվել են գնահատման արդյունքները: Դա թույլ է տալիս գնահատման գործընթացում հաշվի առնել նաև տարածքի նշանակությունը քաղաքի և հանրապետության համար:

Համաքաղաքային նշանակության օբյեկտներ և համալիրներ.

Խմբում ներառված օբյեկտների եզակիությունն ից բացի, դրանց քաղաքաշինական արժեքը պայմանավորված է նաև այն հանգամանքով,

որ դրանք հիմնականում հանդիսանում են քաղաքաշինական դոմինանտներ, ինչպես, օրինակ, Երևանի օպերան, «Արարատ» կոնյակի գործարանը, Յայաստանի ազգային պատկերասրահը, Երևանի երկաթուղային կայարանը և այլն, խթանում են տարածքում բարձր կարգավիճակի հասարակական նշանակության օբյեկտների կուտակմանը՝ Երևանի Օպերան, Կասկադ համալիրը, ՅՆՍԻՍԱՅԻՆ պողոտան և այլն, ստեղծում են հետիոտնային շարժման գրավչությունն՝ Երևանի օպերան, Կասկադը, Մոսկվա կինոթատրոնը և այլն, ինչպես նաև հիմնականում ունեն քաղաքի համար եզակի գործառական նշանակությունն՝ Երևանի օպերան, վարչական շենքերը, բուհեր և այլն:

Ստորև համաքաղաքային նշանակության օբյեկտների ցանկում են ներառվել՝ վարչական շենքերը, Երևանի օպերան, կինոթատրոնները, թատրոնները, բազմաֆունկցիոնալ կենտրոնները, Մարգահամերգային համալիրը, բուհերը, մուլերը, խոշոր առևտրի կենտրոնները, թանգարանները, քաղաքի համար եզակի կամ յուրօրինակ գործառույթի այլ շենքերը, բարձր հաճախելիության օբյեկտները և այլն: Ըստ համաքաղաքային նշանակության՝ օբյեկտների արժևորման պարագայում նույնպես կիրառվել է գնահատման արդյունքների ճշգրտման հավելյալ գործակից, որը պայմանավորված է օբյեկտի եզակիությամբ և քաղաքաշինական դերով:

Կառուցվածքահատակագծային և հորինվածքային հանգույցներ.

Դրանք քաղաքաշինական արժեքի ձևավորման մեծ պոտենցիալով օժտված տարածքներ են: Նման հանգույցներից են հրապարակները, հետիոտնային բուլվարները, ճարտարապետական անսամբլները և այլն: Դրանց բնորոշ է հասարակական նշանակության օբյեկտներով հագեցվածությունը, համաքաղաքային նշանակության օբյեկտների, ռեկրեացիոն գոտիների, հանգստի և ժամանցի վայրերի առկայությունը, ինչը ստեղծում է տարածքում ներդրումային գրավչություն և ապահովում հետիոտնային շարժման ակտիվություն: Վերջինի ձևավորման հիմնական նախապայմանը տարածքում կապակցված հետիոտնային շարժման ուղիների առկայությունն է:

Երևանի պարագայում տվյալ խմբում ներառված տարրերի գերակշիռ մասն են կազմում հրապարակները: Ներկայիս Երևանում առկա է տասնյոթ հրապարակ, որոնցից տասնմեկը Կենտրոն վարչական շրջանում: Տվյալ «հրապարակներից որոշների դեպքում առկա է հրապարակ անվանումը, սակայն չկա դրան բնորոշ տարածք», ինչպես, օրինակ, Ուրուգվայի կամ Բրազիլիայի հրապարակների պարագայում [78]: Ուսումնասիրության շրջանակներում նմանատիպ հրապարակները նույնպես ընդունվել են որպես արժեք ձևավորող տարրեր:

Հանրապետության, Ֆրանսիայի, Ազատության և Ազնավորի հրապարակները հանդիսանում են հետիոտնային շարժման բարձր գրավչության վայրեր: Դրանց հետիոտնային գրավչությունը առաջին հայացքից կարող է հիմնավորվել տեղակայմամբ քաղաքի կենտրոնում, սակայն Սախարովի, Մյասնիկյան, Շահումյան, Ռուսաստանի և մի շարք այլ հրապարակների պարբերական տեղազննությունը ցույց է տալիս, որ կենտրոնական տեղակայումը դեռևս չի ապահովում հետիոտնային գրավչություն: Միևնույն ժամանակ Սասունցի Դավիթ, Բարեկամության և Գարեգին Նժդեհի հրապարակներ, տեղակայված լինելով Կենտրոնից դուրս, նույնպես ունեն բարձր հետիոտնային գրավչություն: Հետիոտնային գրավչությունը հիմնականում պայմանավորված է տարածքի տեղակայմամբ և դրանում առկա օբյեկտների գործառական նշանակությամբ: Սասունցի Դավիթի հրապարակի պարագայում դա պայմանավորված է համաքաղաքային նշանակության օբյեկտի՝ կայարանի, պուրակի և որոշ չափով հասարակական նշանակության օբյեկտներով հագեցվածությամբ, Գարեգին Նժդեհի և Բարեկամության հրապարակների պարագայում՝ տեղադիրքով: Ուստի չնայած այն հանգամանքին, որ սահմանված խմբերի օբյեկտները կարող են բացակայել հրապարակում, համապատասխան հետիոտնային ենթակառուցվածքի առկայությունը տարածքում ստեղծում է հնարավորություն՝ դրանց ձևավորման և տարածքի քաղաքաշինական արժեքի աճի համար: Ստորև արժևորման գործընթացում հաշվի է առնվել և՛ հրապարակի առկայությունը, և՛ դրա ներկայիս կարգավիճակը:

Ըստ օբյեկտների գնահատման, սահմանված մոտեցումներից զատ, տվյալ բաղադրիչի պարագայում կիրառված լրացուցիչ գործակիցը պայմանավորված է տարրի ներկայիս հետիոտնային գրավչությամբ: Այլ խոսքով, գնահատման սկզբնական փուլում արժևորվել են տարրերի տեղակայման հանգույցները, հետագայում ստացված արժեքները ճշգրտվել են սահմանված գործակցով: Հրապարակում հետագա հետիոտնային գրավչության առաջացման պարագայում գնահատման արդյունքները կարող են վերանայվել ըստ սահմանված մեթոդի:

Բնական համակարգեր և շրջակա միջավայր. Խմբի ընտրությունը կապված է ի սկզբանե Ա. Թամանյանի կողմից Երևանի գլխավոր հատակագծում քաղաք-այգու գաղափարի կիրառման հետ: Քաղաք-այգու գաղափարի պահպանումը արդի Երևանում գնահատելու նպատակով կարևորվել է բնական համակարգերի և բարենպաստ շրջակա միջավայրի առկայությունը տարածքի հետիոտնային հասանելիությունն սահմաններում: Բացի այդ, ըստ տվյալ բաղադրիչի, տարածքների գնահատումը թույլ է տալիս գնահատել տարածքի սանիտարահիգիենիկ և էկոլոգիական պայմանների առկայության մակարդակը:

Բաղադրիչը հիմնականում ներառում է ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները՝ այգիները, պուրակները, ռեկրեացիոն գոտիները և ջրային մակերեսները: Երևանում առկա է մոտ 25 զբոսայգի, որոնցից մեծամասշտաբ են Օղակաձև, Բուսաբանական և Գլխավոր պողոտայի այգիները: Առկա է նաև քաղաքային լանդշաֆտում դոմինանտ կանաչ գոտի՝ Հրազդանի կիրճը: Հաշվի առնելով վերջինի գերակա դերը քաղաքային լանդշաֆտում՝ դրան հարող տարածքները լրացուցիչ արժևորվել են: Գնահատվել են խմբում ներառված տարրերի տեղաբաշխվածության համասեռությունը և հասանելիությունը քաղաքի տարբեր հատվածներից: Դրանք դիտարկվել են որպես հավասար արժեքի տարածքներ՝ անկախ բարեկարգվածությունից կամ տեղակայումից: Ըստ բնական համակարգերի և շրջակա միջավայրի՝ գնահատումը կատարվել է դրանց շուրջը բուժերային գոտիների կազմման և դրանց համադրման միջոցով:

Ըստ տարրերի՝ գնահատման պարագայում արժևորվել են դրանց կենտրոնացման հանգույցները և քաղաքային տարածքները, որոնք գտնվում են դրանցից հետիոտնային հասանելիության շառավղի սահմաններում: Տարրերի կենտրոնացման հանգույցների դուրսբերումը կատարվել է Վորոնեի դիագրամի միջոցով: Յետագայում օբյեկտների տեղաբաշխման տարածքները գնահատվել են Կերնել ֆունկցիաների կիրառմամբ: Օգտագործված Կերնել ֆունկցիան հիմնված է Սիլվերմանի քառակուսի Կերնել ֆունկցիաների վրա [79]: Քաղաքի տարածքը բաժանվել է միավոր մակերեսների, որոնց նկատմամբ հաշվարկվել է օբյեկտների տեղակայման խտությունը: Տեսականորեն յուրաքանչյուր կետի շուրջ կառուցվել է շրջանաձև մակերևույթ, որի արժեքը առավելագույնն է կենտրոնում և նվազում է մինչև զրո դեպի եզրերը: Յուրաքանչյուր միավորի սահմաններում օբյեկտների խտությունը հավասար է այն բոլոր Կերնել մակերևույթների արժեքների համադրմանը, որոնք վերադրվում են միավորին դրա կենտրոնում կամ ավելի խորը:

2.1.2. Կապեր

Փողոցադրամասարտային ցանց. Կապերի առումով՝ գնահատվել է երևանի փողոցատրամսարտային ցանցը, որը յուրաքանչյուր քաղաքի համեմատաբար անփոփոխ կայուն տարրն է: Ըստ Գուտնոկի քաղաքային միջավայրի մասշտաբային կրիչների դասակարգման՝ փողոցային ցանցը հանդիսանում է քաղաքի կարկասի մաս: Կարկասի վրա ձգված է քաղաքի հյուսվածքը՝ կառուցապատումը, իսկ երրորդ տարրը պլանման է՝ փոքր ճարտարապետական ձևերը և քաղաքային կահավորումը [80]:

Փողոցային ցանցի հիմնական գործառական նշանակությունը քաղաքի յուրաքանչյուր երկու վայրերի միջև կապերի ապահովումն է: Կապերի գնահատման հիմնական չափումը երկարությունն է, ըստ տարածքային սինտեքսի տեսության՝ մետրական հեռացվածությունը: Դրանից զատ տարածքային սինտեքսի տեսությունն ի հայտ է բերում կապերի արժևորման լրացուցիչ որակական հատկանիշներ, որոնք կարող են ունենալ քանակական

գնահատում: Հեռավորությունների առումով մետրական հեռացվածություններից զատ, առկա են նաև անկյունային և տոպոլոգիական հեռացվածությունները, որոնք թույլ են տալիս արժևորել տեղանքի հասանելիության աստիճանը: Այնինչ միայն հեռավորությունների առումով փոդոցային ցանցի արժևորումը թերի է, քանզի այն լիարժեք չի արտահայտում փոդոցի նշանակությունը փոդոցային ցանցի համակարգում: Ստորև յուրաքանչյուր փոդոցային հանգույցի կառուցվածքային արժեքի գնահատման և հնարավոր քաղաքաշինական պոտենցիալի բացահայտման նպատակով չափվել են նաև դրանց կառուցվածքային արժեքները:

Փոդոցային ցանցի գնահատման համար հիմք է ընդունվել «կապի տեսությունը», իսկ ըստ դրա դրույթների կիրառման համար՝ տարածքային սինտեքսի մեթոդները: Օբյեկտների պարագայում հիմք է ընդունվել «վայրի տեսությունը»: Քաղաքային տարածքներն արժևորվել են ըստ տարածքում օբյեկտների կենտրոնացման և տարածքից օբյեկտների հասանելիության: Ըստ օբյեկտների գնահատումն իրականացվել է ԱՏՀ ազատ հասանելիության տվյալների բազաների խմբագրման, նոր բազաների ստեղծման և վերլուծությունների գործարկման միջոցով:

Տարածքային սինտեքսի տեսության համաձայն՝ փոդոցային ցանցի սխեմատիկ պատկերման պարագայում այն կարելի է ներկայացվել երկու հիմնական բաղադրիչներով՝ հանգույցներ և կողեր, ինչը համադրելի է քննարկվող «կապերի տեսության» հետ: Հանգույցներ կարող են հանդիսանալ փոդոցների խաչմերուկները և վերջնակետերը: Կողերը կարող են լինել ինչպես առանցքային գծերը՝ ամենաերկար տեսանելիության ճառագայթները, այնպես էլ փոդոցների միջնագծերը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փոդոցային ցանցի գնահատման տվյալ մոտեցման շրջանակներում հաշվի չի առնված տեսանելիության գործոնը՝ գնահատման համար, որպես գրաֆիկ կողեր ընդունվել են փոդոցների միջնագծերը:

Փոդոցի նմանատիպ պատկերումը թույլ է տալիս այն վերլուծել ցանցերի տեսության կիրառմամբ: Ցանցերի տեսությունը կազմում է գրաֆերի տեսության մի մաս: Դրա կիրառմամբ հնարավոր է

գնահատել գրաֆի կազմում առկա հանգույցներից յուրաքանչյուրի կարևորությունը՝ ըստ իր կենտրոնականության աստիճանի: Փողոցների կառուցվածքային արժեքի գնահատման նպատակով կատարվել են փողոցային ցանցի կենտրոնականության՝ միջանցիկության, ինտեգրվածության և կապակցվածության չափումներ:

Փողոցատրանսպորտային ցանցի վրա կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ դրա կառուցվածքի շնորհիվ՝ հանգույցների կենտրոնականության աստիճանը կարող է փոփոխվել՝ կախված չափման շառավղի ընտրությունից: Այլ կերպ՝ այն հանգույցները, որոնք ունեն բարձր կենտրոնականություն, դիցուք, x շառավղի դեպքում կարող են ունենալ ցածր կենտրոնականություն, դիցուք, y շառավղի դեպքում: Ուստի փողոցային ցանցի բազմակողմանի գնահատման նպատակով կատարվել են տեղային՝ սահմանված շառավղի սահմաններում և ընդհանուր ցանցի սահմաններում վերլուծություններ: Տեղային գնահատման համար հաշվարկային շառավղի չափը ընդունվել է 700 մետր, ինչը հանդիսանում է հետիոտնային հասանելիության միջին հեռավորություն: Հաշվի առնելով տարածքի քաղաքաշինական արժեքի առկա գործոնները՝ փողոցային ցանցի գնահատման շրջանակներում չափվել է նաև փողոցային ցանցի խտությունը:

Քաղաքի կենտրոնի բարձր քաղաքաշինական կարգավիճակից ելնելով՝ կարևորվել են փողոցային ցանցի յուրաքանչյուր հանգույցից դեպի քաղաքի կենտրոն տանող ճանապարհների մատչելիությունը և երկարությունը: Չափումների համար հաշվարկային սկզբնակետ՝ 0 կետ է ընդունվել Հյուսիսային պողոտան: Տվյալ ընտրությունը պայմանավորված է երեք հիմնական հանգամանքներով.

- տեղակայումով՝ Հյուսիսային պողոտան տեղակայված է քաղաքի կենտրոնում՝ քաղաքի համար դոմինանտ առանցք հանդիսացող հյուսիս-հարավ ուղղության վրա,
- հետիոտնային հոսքերի շարժման բարձր ինտենսիվությունը,
- բարձր կարգավիճակի (ըստ հաճախելիության)՝ հասարակական սպասարկման հաստատությունների հագեցվածությամբ [41]:

Ճանապարհի երկարության գնահատման պարագայում չափվել են փողոցների մետրական, իսկ հասանելիության պարագայում՝ տարվոգիական և անկյունային հեռավորությունները քաղաքի կենտրոնից: Գնահատման արդյունքների համադրման միջոցով նախատեսվում է կատարել քաղաքային տարածքների գոտևորում՝ ըստ փողոցային ցանցի յուրաքանչյուր հանգույցի հեռավորության քաղաքի հաշվարկային կենտրոնից: Նախատեսվում է նաև կազմել տեղային/ընդհանուր ինտեգրվածության, միջանցիկության քարտեզներ, իսկ դրանց համադրման միջոցով՝ փողոցատրանսպորտային ցանցի քաղաքաշինական արժեքի քարտեզ:

Քաղաքաշինական բարձրարժեք տարածքների պահպանման և արժևորման ուսումնասիրության շրջանակներում նախատեսվում է նաև քաղաքային տարբեր հանգույցների տեսանելիության վերլուծությունների գործարկում և տեսադաշտերի գնահատում: Տեսանելիության գնահատումը կարող է գործարկվել քաղաքի ցանկացած կետի նկատմամբ: Ուսումնասիրության շրջանակներում այն գործարկվել է երևանի որոշ քաղաքաշինական դոմինանտների հանգույցներում, դրանց հարակից տարածքներում առկա կառուցապատման և դրա բացակայության պայմաններում՝ տեսողական ընկալման դաշտերի կազմման և դաշտերում հնարավոր խոչընդոտների բացահայտման նպատակով: Տեսանելիության գնահատումը կարող է գործարկվել նաև ցանկացած շենքի և բնակարանի պարագայում՝ տվյալ կետից բացվող տեսադաշտի կազմման և ըստ դրանում առկա օբյեկտների և տեսադաշտի ընդարձակության գնահատման միջոցով:

Չնայած սահմանված կառուցապատման կարգավորման չափորոշիչներին՝ կառուցապատման գիծ կամ հարկայնություն, դրանց առկայությունը չի ենթադրում տարածքի միագիծ նույն հարկայնության կառուցապատում: Փողոցների խաչմերուկներում կամ եզրամասերում հարկայնության գերազանցումը ճարտարապետության մեջ կրում է հաճախակի կիրառվող բնույթ: Կասկադի և Մոսկովյան փողոցի հատման հանգույցում գտնվող բարձրահարկ շենքերը ներդաշնակվում են կից միջին հարկայնության կառուցապատման հետ՝ շնորհիվ շուրջը առկա

ընդարձակ ազատ տարածություն: Միևնույն ժամանակ Աբովյան և Թումանյան փողոցների հատման հանգույցում առկա նորակառուցը, եթե Աբովյան փողոցի նկատմամբ ունի հիմնավորված տեղակայում՝ պայմանավորված փողոցի լայնությամբ, ապա Ազնավուրի հրապարակի և Թումանյան փողոցի կողմից դրա հարկայնության վերազանցումը հիմնավորված չէ: Ստորև կառուցապատման թույլատրելի վերազանցումների գնահատումը հնարավոր է միայն տեսողական վերլուծությամբ ունենալի և եռաչափ տեսադաշտերի կազմման միջոցով: Մեթոդի բնույթը հետևյալն է. ընտրված դիտակետից կազմվում է տեսադաշտ, և հաշվարկվում է տեսանելի երկնքի մակերեսը: Կառուցապատումը ընտրված կետից պրոյեկտվում է դրանից վեր գտնվող գնդային մակերևույթի վրա [81][82][83]: Տեսադաշտերի գնահատման քանակական չափորոշիչներ են հանդիսանում մակերեսը, ընդարձակությունը, կոմպակտությունը, շրջանայնությունը և ուռուցիկությունը:

Տեսանելիության վերլուծությունը կազմում է քաղաքայինական վերլուծությունների իրականացման հիմնական բաժիններից մեկը: Տեսողությունը մարդու կողմից շրջակա միջավայրի ընկալման և գնահատման հիմնական միջոցն է: Մարդն ընկալում է քաղաքի մասշտաբը, առանձին հանգույցների գեղագիտական հատկանիշները որոշակի դիտակետից կամ միջավայրում տեղադրվելով կամայական հետազոտվող: Ըստ տեսանելիության վերլուծության տեսության՝ տեսանելիությունն ունի նաև կողմնորոշիչ և ուղղորդող հատկություն, քանի որ այն ազդում է մարդկային հոսքերի շարժման վրա [84][85]: Ուստի որևէ քաղաքային տարածքի տեսանելիության գնահատման նպատակով անհրաժեշտ է դրանում հետիոտնային շարժման ուղիների հետազոտված տեղակայված դիտակետերից կազմել տարածքի տեսադաշտ: Յուրաքանչյուր կետից կազմված իզոպիստների համադրումը տալիս է տարածքի տեսադաշտ, իսկ դիտակետերը իրար միցնող բեկյալ ուղին հանդիսանում է իզոպիստի հետազոտվող, որը իր հերթին կազմվում է հետիոտնային հոսքերի շարժման ուղղություններին համաձայն:

Ճարտարապետական փոքր ձևերի գնահատման պարագայում ուսումնասիրվել են գովազդային վահանակները, նստարանները, ցուցանակները և այլ տարրերը՝ ըստ դրանց տեղակայման և չափերի: Ուսումնասիրությունն իրականացվել է դրանց տեղակայման նպատակահարմարությունը գնահատելու նպատակով՝ բացահայտելու համար, թե արդյոք դրանք չեն խոչընդոտում քաղաքի կենսագործունեությունը և շենքերի ճարտարապետական հորինվածքի ընկալմանը: Գնահատումն իրականացվել է տեսանելիության վերլուծության մեթոդներով:

Ըստ սահմանված օբյեկտների գնահատման արդյունքների՝ համադրմամբ հնարավոր է կատարել քաղաքի գոտևորում՝ ըստ տարածքի քաղաքաշինական արժեքի: Արդյունքների համադրման համար անհրաժեշտ է գնահատման մեկ ընդհանուր սանդղակի կազմում: Ուստի բոլոր գնահատումների համար սահմանվել են արժեքի միևնույն իննաստիճան սանդղակներ: Իննաստիճան սանդղակի ընտրությունը պայմանավորված է երևանի հողերի կադաստրային արժեքի գոտիների քանակի և քաղաքային տարածքների արժևորման համար առկա եռաստիճան սանդղակով: Այն բազմապատիկ է վերջինին, ինչպես նաև հավասար է երևանի հողերի տարածագնահատման գոտիների քանակին: Դա թույլ է տալիս գնահատման արդյունքները խմբավորել՝ ըստ առկա արժեքի խմբերի, և ձևավորված գոտիների արժեքի գնահատման համար օգտագործել առկա գոտիների կադաստրային արժեքները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարբեր օբյեկտների գնահատումների արդյունքներն ունեն իրարից զգալիորեն տարբերվող արժեքի միջակայք (մի պարագայում հնարավոր է արժեքները տատանվեն 1-9-ի, մյուսի դեպքում՝ 1000-9000 միջակայքերում), դրանց համադրումը պահանջում է միջանկյալ ճշգրտում: Ուստի ստացված արժեքները վերախմբավորվել են ըստ միևնույն սանդղակի, հետո միայն համադրվել: Բացի այդ, տարածքի քաղաքաշինական արժեքի գնահատման գործոնները բերվել են ընդհանուր համեմատականի, ըստ դրանց կարևորության, լրացուցիչ գործակիցների ներդրման միջոցով: Գործակիցներն օգտագործվել են և՛ առանձին գնահատումների փուլում՝ ըստ որոշակի օբյեկտի

կարևորության, և՛ համադրման փուլում՝ ըստ օբյեկտների խմբի կարևորության:

Չնայած այն հանգամանքին, որ ըստ տարբեր գործոնների գնահատման՝ արդյունքները կարող են համադրվել տարածքի քաղաքաշինական արժեքի որոշման համար, ըստ տարրերի և կապերի գնահատման քարտեզները իրենց հերթին հանդիսանում են վերջնական արդյունքներ: Դրանցից յուրաքանչյուրը կարող է համադրվել մյուսի հետ՝ կախված տարածքի որոշակի արժեքի որոշման նպատակից:

Փողոցատրանսպորտային ցանցի պարագայում դրա մետրական, տոպոլոգիական և անկյունային հեռավորությունները կարող են համադրվել՝ տարածքի մատչելիությունը կենտրոնից գնահատելու նպատակով: Որոշակի գործառույթի տեղակայման նպատակահարմար վայրերի որոնման համար կարևորվում է տարածքի կենտրոնականությունը, ուստի այս պարագայում հեռավորությունները կենտրոնից կարող են անտեսվել: Տեղային նշանակության բարձր կենտրոնականության հանգույցները կարող են լինել ցածր կենտրոնականության ընդհանուր համակարգի համար, սակայն դրանց կարևորությունը տեղանքի համար ավելի բարձր է, քան ընդհանուր համակարգում բարձր ինտեգրվածության հանգույցինը:

Տարրերի գնահատման պարագայում դրանց արդյունքների համադրումը ավելի բարդ է՝ հաշվի առնելով սահմանված խմբերի օբյեկտների հատկանիշների տարբերությունը: Ըստ առանձին օբյեկտների գնահատման արդյունքում կազմված քարտեզները նույնպես հանդիսանում են վերջնական արդյունք:

Քաղաքաշինական արժեքի որոշման համար նախատեսվող համադրման համար դուրս բերված բաղադրիչները վերախմբավորվել են երկու նոր խմբերում՝ կառուցապատում և ենթակառուցվածքներ: Կառուցապատման օբյեկտները՝ հուշարձանները և համաքաղաքային նշանակության օբյեկտները, ընդունվել են որպես համազոր քաղաքաշինական արժեք ձևավորող տարրեր, իսկ քաղաքային ենթակառուցվածքի օբյեկտները՝ հրապարակները, կանաչ տարածքները և փողոցային ցանցը՝ իրար համազոր տարրեր:

Կառուցապատման և ենթակառուցվածքների պարագայում դրանք համադրվել են երկուսը մեկի հարաբերությամբ՝ կառուցապատմանը տրվել է երկու գործակից, իսկ փողոցային ենթակառուցվածքներին մեկ:

2.2. ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ

Երևանի զարգացման ներկայիս պայմաններում նկատվում է քաղաքի տարածքների քաղաքաշինական արժեքի նվազման միտում: Խնդրի թերևս հիմնական պատճառներից են պատմական միջավայրի արժևորման մեխանիզմների սակավությունը, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի ոչ լիարժեքությունը, ինչպես նաև քաղաքաշինության բնագավառում պետություն-կառուցապատող-հասարակություն հարաբերությունների կարգավորման մեխանիզմների ոչ լիարժեքությունը: Այս ամենը հանգեցնում է պատմական ձևավորված տարածքների մասշտաբային, որակական և կերպարային ակնառու տրանսֆորմացիային, երբեմն նաև վերացմանը, ինչպես նաև քաղաքի անհամաչափ զարգացմանը՝ հանգեցնելով տարածքների քաղաքաշինական արժեքի նվազմանը:

Քաղաքաշինական բարձրարժեք տարածքների պահպանումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել դրանց կազմավորման ընթացքը և զարգացման միտումները, ինչպես նաև բացահայտել ներկայիս և անցյալի քաղաքաշինական արժեք ձևավորող գործոնները և դրանց փոփոխությունները:

Քաղաքի զարգացման օրինաչափությունները բացահայտելու նպատակով դուրս են բերվել քաղաքի զարգացման տարբեր փուլերում քաղաքաշինական արժեք ներկայացնող տարածքները: Ըստ սահմանված տարրերի խմբերի և փողոցային ցանցի՝ ուսումնասիրվել է տարածության մեջ դրանց փոխակերպումը՝ նախորդ ենթազվիտում սահմանված մեթոդների կիրառմամբ: Քաղաքային ձևաբանության ուսումնասիրություններ՝ տարածքային սինտեքսի մեթոդների կիրառմամբ, կատարվել են Անգլիայի մայրաքաղաք Լոնդոնում, Իսպանիայի Բարսելոնա քաղաքում, Չինաստանի Տիանցզին և ԱՄՆ Նյու-Յորք նահանգի

Մանհեթեն վարչական միավորներում: Ուսումնասիրություններն ի հայտ են բերում առնչություններ քաղաքի հատակագծային կառուցվածքի և գործառույթների տեղաբաշխման փոփոխությունների միջև, քաղաքների հատակագծային կառուցվածքի ընդարձակման օրինաչափություններ և նոր ուղղություններ [86][87][88][89]:

Ըստ պատմականության սկզբունքի՝ ուսումնասիրվել են երևանի զարգացման տարբեր փուլերի քաղաքայինական բարձրարժեք տարածքները, դրանց փոխակերպումները՝ պայմանավորված ժամանակի սոցիալ-տնտեսական երևույթներով, քաղաքի փողոցային ցանցի ընդարձակմամբ և կառուցվածքային փոփոխություններով: Քաղաքային տարածքները դասակարգվել են ըստ կառուցվածքային արժեքի, ուսումնասիրվել են քաղաքայինական դոմինանտների և քաղաքային նշանակության տարածքների տեղակայմամբ պայմանավորված արժեքի փոփոխությունները ժամանակի ընթացքում (Յավելված 7-15): Ուսումնասիրության նպատակն է դուրս բերել կապը ներկայիս և անցյալի քաղաքայինական բարձրարժեք տարածքների միջև:

Երևանի պատմության գրեթե 2800 տարվա ընթացքում տարածքում ձևավորվել են քաղաքայինական արժեք ներկայացնող բազմաթիվ հանգույցներ: Դրանց մի մասը ժամանակի ընթացքում արժեզրկվել կամ վերացել է, սակայն կան նաև պահպանված պատմա-արտարապետական և մշակութային արժեք ներկայացնող օբյեկտներ և տարածքներ, ինչպես, օրինակ, Էրեբունին, Կարմիր բլուրը և այլն: Սակայն ատենախոսության շրջանակներում պատմական վերլուծության ժամանակագրական սահմանները ընդունվել են 1856-2015թթ.: Մինչ այդ ձևավորված քաղաքայինական արժեք ներկայացնող հանգույցները նույնպես ընդունվել են որպես քաղաքայինական արժեք ներկայացնող տարրեր, սակայն չի ուսումնասիրվել դրանց ձևավորման և փոխակերպման պատմական ընթացքը:

Ժամանակագրական վերլուծությունը փուլերն են .

- I փուլ - 1856-1924 թթ.,
- II փուլ - 1924-1951 թթ.,

- III փուլ - 1951-1971 թթ.,
- IV փուլ - 1971-2005 թթ.,
- V փուլ - 2005-2015 թթ. (Հավելված 6, նկ. 4):

Երևանի զարգացման տարբեր փուլերում քաղաքի հատակագծային սահմանների տեղանշման համար հիմք են ընդունվել «Երևանի տարածքային զարգացման փուլերը» [90]: Ժամանակագրական սահմանները և բաժանումը պայմանավորված են Երևանի գլխավոր հատակագծի նախագծերի հաստատման, պահպանված տեղագրական հանուն թների, ներկայում առկա միջավայրի ժամանակագրական շերտավորման տարեթվերով:

I փուլ (1856-1924 թթ.). 19-րդ դարի սկզբին Երևանի հատակագծային կառուցվածքը կազմված էր երկու հիմնական տարրերից՝ ամրոցից և քաղաքից: Ամրոցը, կարևոր ստրատեգիական վայր լինելուց բացի, նաև վարչական և առևտրային կենտրոն էր: Այստեղ էին տեղակայված սարդարի պալատը և տարբեր տեսակի հասարակական սպասարկման շինությունները՝ մեջեռներ, զորանոցներ, պահեստներ, բաղնիքներ, կրպակներ և բնակելի տներ [91]: Ամրոցի և քաղաքի միջև կապն իրականացվում էր քաղաքի հյուսիսային դարպասներից, որը դուրս էր գալիս Երևանի գլխավոր առևտրային հրապարակ: Հրապարակում էին տեղակայված քարվանսարանները, որոնք ներառում էին մի քանի հարյուր խանութներ, կրպակներ, պահեստներ, ձիու ախոռներ և այլ հասարակական նշանակության օբյեկտներ:

Բնակելի թաղամասերի հիմնական մասը տեղակայված էր ամրոցից դեպի հյուսիս-արևմուտք: Կախված տեղակայման վայրից, հիմնման ժամանակաշրջանից և բնակչության կոնտինգենտից, թաղամասերը խմբավորված էին ըստ առանձին շրջանների: Երևանի բնակելի թաղամասերն էին ճահարը կամ Հին քաղաքը՝ տեղակայված ամրոցից դեպի հյուսիս-արևելք: Մյուս բնակելի շրջանը տեղակայված էր Կոնդի բարձունքին (Թախաբաշում)՝ ճահարից արևմուտք: Երևանի արևելյան եզրում տեղակայված էին մուսուլմանների բնակելի տները՝ կազմելով Կարանկը (Դամիրբուլաղը): Այս բոլոր շրջանները ներկայացնում էին ինքնուրույն միավորներ քաղաքի կառուցվածքում:

19-րդ դարի սկզբի Երևանի հատակագծային կառուցվածքը ներառում էր նեղ փողոցներ և ոչ մեծ հրապարակներ՝ շրջապատված առևտրային օբյեկտներով: Երևանի ուրվապատկերին բնորոշ էին նաև խաղողի այգիները, որոնք կազմելով կանաչ օղակ՝ շրջապատում էին քաղաքը:

19-րդ դարի կեսերին սկսվեցին Երևանի վերակառուցման աշխատանքները, որոնք իրականացվում էին Երևանի 1856թ. գլխավոր հատակագծով ամրագրված կանոնավոր հատակագծման սկզբունքով: Հատակագծում նկատելի են երեք գործառույթային գոտիներ՝ մշակութային և գործառական կենտրոն, արդյունաբերական հաստատությունների տարածքներ և բնակավայրեր:

Վերակառուցման գործընթացում հին առևտրային հրապարակի շուրջը ձևավորվեցին նոր հրապարակներ, որտեղ և կենտրոնացան վարչական, առևտրային և հասարակական հաստատություններ: Գոտում իջնուկը դարձավ Սբ. Սարգիս, Առևտրային, Կրեպոստնայա և Իլեբնայա հրապարակներից կազմված քառանկյունը: Սբ.Սարգիս եկեղեցուն հարող հրապարակում տոնական օրերին հավաքվում էր հանրությունը, իսկ մյուս հրապարակներում իրականացվում էր քաղաքի առևտուրը: Ռուսական ուղղափառ տաճարի կառուցմամբ Առևտրային հրապարակից արևմուտք կազմակերպվեց տաճարային հրապարակը: Ներկայիս Սախառովի հրապարակը համարվեց ճարտարապետ Բ.Մեհրաբյանի քաղաքային խորհրդի և Կառավարման շենքերով և Թիֆլիսի բանկի շենքով՝ Նալբանդյան փողոցում:

Հետագայում առևտրային հրապարակից դեպի հյուսիս-արևելք անցկացվեցին երեք փողոցներ՝ Աստաֆյան (ներկայիս Աբովյան), Տեր-Ղուկասյան (ներկայիս Նալբանդյան) և Գուբերնսկայա (ներկայիս Հանրապետության), որոնք նպաստեցին քաղաքի այլ հատվածների գործառական զարգացմանը: Չնայած այն հանգամանքին, որ Աբովյան և Նալբանդյան փողոցների կառուցվածքային արժեքները գրեթե հավասար էին, Աբովյան փողոցի ներդրումային գրավչությունն ավելի բարձր էր: Դրամասին են վկայում աստեղ ժամանակին տեղակայված տարաբնույթ սպասարկման հաստատությունները, որոնց որոշ մասը ուներ համաքաղաքային նշանակություն, ինչպես, օրինակ՝ մոնումենտալ պաշտամունքային

շինությունները և քաղաքի մշակութային սավորչական հաստատությունների գերակշիռ մասը: 1906թ. Աբովյանով անցկացվեց երկաթուղային գիծ, որը 1918թ. շարունակվեց մինչև կայարան, ինչը վերստին փաստում է փողոցի կառուցվածքային արժեքավորության հանգամանքը:

Ուստի Աբովյան փողոցի հարակից տարածքը կարելի է դասել երևանի քաղաքաշինական բարձրարժեք տարածքների շարքը: Փողոցը սկիզբ էր առնում բերդի հյուսիսային դարպասներից և ձգվում էր դեպի հյուսիս-արևմուտք՝ կապելով բերդը և առևտրական հրապարակը կենտրոնի և քաղաքի հիմնական կենտրոնը Նորքի ճանապարհի հետ: Փողոցի ճարտարապետաքաղաքաշինական միասնականությունը պայմանավորված էր դրա գործառնական միասնականությամբ:

Նախնական փողոցն իր կառուցվածքային արժեքով մոտ է Յանրապետության փողոցին, ինչի շնորհիվ այն կարող է դասվել քաղաքի հիմնական մագիստրալների շարքը: Դրա կառուցվածքային բարձր արժեքը պայմանավորված է նաև իր տեղակայմամբ երևանի պատմական կենտրոնի տարածքում: Փողոցի կառուցապատումը ներառում էր հասարակական և վարչական հաստատություններ, ինչը կառուցվածքային արժեքի հետ մեկտեղ բարձրացնում է տարածքի քաղաքաշինական արժեքը:

Աբովյան և Նախնական փողոցների համեմատ Յանրապետության փողոցի կառուցվածքային արժեքը զգալիորեն ցածր է: Դրա մասին են վկայում ինտեգրվածության և միջանցիկության չափումների արդյունքները, ինչպես նաև դրա կառուցապատման գործառնական կազմը: Ուստի դրա քաղաքաշինական արժեքը ավելի ցածր էր նախորդ փողոցների համեմատ:

Այս փուլում զգալի փոփոխություններ տեղի ունեցան նաև քաղաքի բնակելի շրջաններում, որոնք տեղակայված էին գործարարական և մշակութային միջուկի շուրջ: Թաղամասերի անկանոն կառուցապատումը աստիճանաբար փոխարինվեց կանոնավոր հատակագծային ցանցով, որը իրականացվեց Շահարում և Նորթաղում և նախատեսվում էր իրականացնել նաև Դամիրբուլ աղում: Ձորագյուղում, Կոնդում և Նորքում, որտեղ առկա էին ռելիեֆային

կտրուկ անկմամբ տարածքները, պահպանվեց կառուցապատումը: Հիմնականում կանոնավոր հատակագծային ցանցում ավելի համաչափ է բարձր կառուցվածքային արժեքի հանգույցների տեղաբաշխումը, ուստի այն ավելի նպատակահարմար է անկանոն կառուցվածքի համեմատ: Սակայն Երևանի մյուս ծայրամասերում պահպանվեց անկանոն հատակագծային կառուցապատումը, ինչպես, օրինակ, Շահարի արևմտյան կեսում և Դամիրբուլ աղում:

Ի տարբերությամբ դրանց՝ Երևանի կենտրոնը ստացավ կանոնավոր հատակագծային կառուցվածք: Աբովյան և Նալբանդյան փողոցների հետ մեկտեղ կառուցվածքային բարձր արժեքով առանձնացան Արամի, Փալստոս Բուզանդի Մովսես Խորենացու փողոցները, Մեսրոպ Մաշտոցի պողոտայի ուղղությամբ և Արշակունյաց պողոտայի սկզբնամասը:

19-րդ դարի սկզբի և 20-րդ դարի քաղաքաշինական գործունեության արդյունքում Երևանի կերպարը կրեց զգալի փոփոխություններ: Փողոցատրանսպորտային ցանցի ընդարձակումը, կառուցվածքային բարձրարժեք հանգույցների ձևավորումը, պատմապատարապետական, մշակութային արժեքի օբյեկտներով կառուցապատված կառուցվածքահատակագծային և հորինվածքային հանգույցների կազմավորումը, ինչպես նաև գործառույթային հագեցվածության մակարդակի աճը հավաստում են տվյալ փուլում Երևանի տարածքների քաղաքաշինական արժեքի աճի հանգամանքը, ինչպես նաև նոր քաղաքաշինական բարձրարժեք տարածքների ձևավորումը:

1856-1924թթ. քաղաքային տարածքների արժևորում. Տվյալ փուլի քաղաքաշինական բարձրարժեք տարածքների արտածման նպատակով կատարվել է ժամանակի քաղաքաշինական արժեք ձևավորող տարրերի կենտրոնացման հանգույցների դուրսբերում և փողոցատրանսպորտային ցանցի գնահատում՝ ըստ տարածքային սինտեքսի չափումների:

Քաղաքի քարտեզի վրա տեղանշվել են քաղաքաշինական արժեք ձևավորող բոլոր տարրերը: Դրանց տեղանշման համար հիմք է ընդունվել Բ.Մեհրաբյանի կողմից կազմած 1906-1911 թթ. քաղաքի հանույթը: Տարրերն ընդունվել են հավասար քաղաքաշինական

արժեքի: Չափու մների համար հաշվարկային շառավիղ է ընդունվել 700 մետրը:

Ըստ տարրերի՝ գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքի բարձրարժեք տարածքները ընդգրկում են ներկայիս Մյասնիկյանի հրապարակը և Նալբանդյան փողոցի ուղղությամբ ձգվում են դեպի Սախարովի հրապարակ: Ըստ կապերի գնահատման՝ առավելագույն արդյունքներն ի հայտ են բերում Մյասնիկյանի հրապարակի, Աբովյան փողոցի և Գլխավոր պողոտայի բարձր կենտրոնականության արժեքները: Դրանով ի հայտ են գալիս քաղաքի հատակագծային կառուցվածքի հետագա զարգացման ուղղությունները:

Ամփոփելով փուլի ուսումնասիրությունը և հաշվի առնելով վերոնշյալ քաղաքաշինական արժեքի չափանիշները տվյալ ժամանակաշրջանում, կարելի է արձանագրել, որ բարձր քաղաքաշինական արժեքի տարածքներ են հանդիսացել ներկայիս Մյասնիկյանի հրապարակը, Սախարովի հրապարակը, Անգլիական այգին, Աբովյան և Նալբանդյան փողոցները, Գլխավոր պողոտայի՝ Նալբանդյան փողոցից վերընկած հատվածը (Յավելված 7 և 10):

II և III փուլեր (1924-1951 և 1951-1971 թթ.). 1924թ. ակադեմիկոս Ա.Թամանյանը Յայաստանի Ժողկոմխորհին է ներկայացնում Երևանի գլխավոր հատակագիծը:

Չաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանը Ալ. Թամանյանի կողմից նախագծվել է որպես քաղաք-այգի՝ ներկայիս Երևանի համապատասխանությունը քաղաք այգու չափանիշներին գնահատելու, ինչպես նաև դրա հիմնական դրույթների դուրսբերման նպատակով ուսումնասիրվել է նաև քաղաք-այգու տեսությունը:

Քաղաք-այգու գաղափարը պատկանում է անգլիացի քաղաքաշինարար Էբինիզեր Յովարդին: Իր հեղինակած «Վաղվա օրը. Խաղաղ ուղի դեպի գույքային բարեփոխում» գրքում՝ հետագայում լույս տեսած «Վաղվա քաղաք այգիները» վերնագրով, նա ներկայացնում է ավանդական գյուղի և քաղաքի դրական հատկանիշների միավորման հիման վրակազմված քաղաքի մոդել [92]: Ըստ հեղինակի՝ քաղաքի և գյուղի միավորումը թույլ կտա

օգտագործել երկուսի դրական կողմերը և միևնույն ժամանակ՝ բացառել բացասականները: Հովարդը քաղաք-այգու կառուցվածքը ներկայացնում է շրջանաձև սխեմայի ձևով՝ փողոցների շառավղաօղակաձև դասավորությամբ: Քաղաքի կենտրոնում նա տեղակայում է հասարակական շենքերն ու պուրակը, դրա շուրջ՝ ցածրահարկ բնակելի տները, իսկ քաղաքի եզրերում արդյունաբերական գոտին և երկաթգիծը: Քաղաքի ներկայացված մոդելը հաշվարկած էր 32.000 բնակչության համար, քանզի ըստ իր տեսության՝ քաղաքի հիմնական բացասական կողմը դրա մեծությունն էր: Ավելի մեծ թվով բնակչության պայմաններում նա նախատեսում էր նոր քաղաք-այգիների կառուցում, որոնք կտեղակայվեին կենտրոնական քաղաքի շուրջը շրջանաձև և իրար միացված կլինեին փողոցային ցանցով: Գաղափարի իրականացման համար նա մշակում է նաև գործառական մոդել՝ դրա հանդեպ ներդրումային գրավչության առաջացման նպատակով: Ըստ քաղաք-այգու տեսության՝ կառուցված առաջին քաղաքներից են Անգլիայում գտնվող Լեչվորտը և Վելվինը: Հետագայում երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո տեսությունը լայն տարածում գտավ նաև Եվրոպայում և ԱՄՆ-ում [93][94]: Հովարդը քաղաք-այգու գաղափարը ներկայացնում է երեք մագնիսների սխեմատիկ պատկերման միջոցով, դրանք են՝ գյուղը, քաղաքը և գյուղ-քաղաքը՝ քաղաք այգին: Նաքննում է գյուղի և քաղաքի դրական և բացասական գործոնները և կատարում դրանց համադրում՝ սահմանելով քաղաք-այգու դրական և բացասական հատկանիշները:

Գլխավոր հատակագծի թերևս կարևորագույն խնդիրը դրա տեղադիրքն է հին քաղաքի նկատմամբ: «Ձեռնամուխ կլինելով Երևանի գլխավոր հատակագծի կատարմանը՝ Թամանյանը նախ պետք է որոշեր սկզբունքային հարցերից մեկը՝ նոր քաղաքը պետք է լինի հի՞ն, թե՞ նոր տեղում» [95 էջ 112]: Ըստ սվյալ խնդրի՝ մայրաքաղաքների վերակառուցումների երկու տարբերակն էլ ներկայումս առկա են: Բրազիլիայի, Ղազախստանի, Պակիստանի պարագաներում կառուցվել է նոր մայրաքաղաք: Միևնույն ժամանակ առկա են Փարիզի, Լոնդոնի և Վիեննայի վերակառուցման օրինակները, որոնք կատարվել էին հին քաղաքի տեղում: Ընտրելով հին քաղաքի տեղում նորի կառուցման

տարբերակը՝ Թամանյանի նախատեսում էր կապը գոյություն ունեցող քաղաքի կոմպոզիցիայի և նախատեսվող կառուցապատման սխեմայի միջև: Քննարկվող գլխավոր հատակագիծը հանդիսացավ Երևանի՝ Խորհրդային շրջանում առաջին գլխավոր հատակագիծը՝ 15 տարի հաշվարկային ժամկետով, 60–150 հազար բնակչության հաշվարկային աճով: Դրա հորինվածքային հիմնական ուղղություններն օգտագործվել են մայրաքաղաքի հետագա գլխավոր հատակագծի նախագծերի մշակման ընթացքում:

Նոր գլխավոր հատակագծում կիրառված էին քաղաք-այգու սկզբունքները, որը հանդիսանում էր նոր քաղաքաշինության լավագույն օրինակ: Նմանօրինակ լուծումը նպաստում էր Երևանի պատմականորեն ձևավորված փողոցների և որոշ թաղամասերի պահպանմանը: Միևնույն ժամանակ, առկա քաղաքի տեղում նոր քաղաքի կառուցումը հանգեցրեց քաղաքաշինական և ճարտարապետական զգալի ժառանգության անդամալի կորստին: Անկանոն ձևավորված, ճարտարապետական տեսակետից ցածրարժեք կառուցապատման հետմեկտեղ վերացվեցին նաև ետխորհրդային շրջանի Երևանի կառուցապատումը բնորոշող կառուցվածքահատակագծային և հորինվածքային հանգույցներ, պատմաճարտարապետական և մշակութային արժեքներկայացնող շինություններ:

Այլ Թամանյանի գլխավոր հատակագծով նախատեսվեց քաղաքի հիմնական կոմպոզիցիոն առանցքը՝ հյուսիսային ճառագայթը: Դրա ուղղությամբ հետագայում տեղակայվեցին համաքաղաքային նշանակության մի շարք օբյեկտներ՝ Յանրապետության Յրապարակը, Օպերան, Յուսիսային կասկադը, որոնք հետագայում նպաստեցին տվյալ հատվածներում հասարակական նշանակության օբյեկտների քանակի աճին և հետիոտնային շարժման ակտիվացմանը: Յամաքաղաքային նշանակության օբյեկտներից զատ կառուցվեցին նաև բազմաթիվ բնակելի և հասարակական շենքեր՝ ձևավորելով քաղաքաշինական տեսակետից արժեքավոր տարածքներ: Այս շրջանում կառուցված շինությունները ձևավորեցին քաղաքի հիմնական մասշտաբը: Դրանք հիմնականում առավելագույնս հինգ հարկանի շենքեր էին՝ տեղակայված ներքին բակերի շուրջ:

Ուսումնասիրության տվյալ շրջանները ընդգրկում են նաև հայրենադարձության երեք փուլերը: Հայրենադարձությունը նպաստեց քաղաքի նոր ավանների ստեղծմանը և քաղաքի ընդարձակմանը: Նորաստեղծ ավանները իրականում հանդիսանում էին գյուղեր՝ իրենց արտադրական հիմնարկներով: Ավանները ստեղծվում էին առանց նախագծման, բացառությամբ Նոր Արեշի, Արաբկիրի և Նուբարաշենի, որոնք կառուցվեցին թամանյանական նախագծերով [96]: Քաղաքի հյուսիս-արևմուտքում ստեղծվեցին Նոր Մալաթիա, Նոր Սեբաստիա, Նոր Կեսարիա, Նոր Թոմարզա, Նոր Տիգրանակերտ ավանները: Ավանները հետագայում վերածվեցին թաղամասերի, իսկ ներկայումս հանդիսանում են քաղաքի վարչական շրջանները: Ավանների համար նախատեսվում էին տեղային նշանակության կենտրոններ, որտեղ էլ տեղակայվում էին դրա սպասարկումն ապահովող հասարակական նշանակության տարատեսակ հաստատություններ: Դրանք կարող են բնորոշվել որպես տեղային նշանակության քաղաքաշինական բարձրարժեք տարածքներ:

1924-1951 և 1951-1971 թթ. քաղաքային տարածքների արժևորում.

Ժամանակի քաղաքային տարածքների քաղաքաշինական արժևորումը ցույց է տալիս, որ տվյալ ժամանակահատվածում հին առևտրային հրապարակը կորցրել էր իր քաղաքաշինական արժեքը, իսկ Աբովյան փողոցի գործառական արժեքավորությունը ավելի աճեց՝ քաղաքի գործառույթային զարգացման և տարատեսակ նոր օբյեկտների առաջացման հետևանքով: Միևնույն ժամանակ, նոր համաքաղաքային նշանակության օբյեկտների կառուցմամբ ձևավորվեցին նոր քաղաքաշինական բարձրարժեք տարածքներ, որոնց զարգացումը շարունակվում է մինչ օրս (Հավելված 7, 8, 11, 12):

Քաղաքի փողոցատրանսպորտային ցանցի վրա գործարկված սինտակտիկ վերլուծություններն ի հայտ են բերում Կենտրոնի կառուցվածքային արժեքի կտրուկ աճ՝ պայմանավորված դրա տեղակայմամբ: Միևնույն ժամանակ, ի հայտ են գալիս նաև կառուցվածքային բարձր արժեքի հանգույցներ Արաբկիր և Էրեբունի վարչական շրջաններում: Ուսումնասիրության II փուլում Կենտրոնից դուրս արժեքավորությամբ է առանձնանում ներկայիս Արշակունյաց պողոտայի ուղղությունը ընդհուպ մինչև

Աշխատանքի հրապարակ և Տիգրան Մեծի պողոտան մինչև Քրիստափորի փողոց:

III փուլում կառուցվածքային բարձր արժեքով է առանձնանում ներկայիս Արաբկիր վարչական շրջանի արևմտյան կողմը: Բարձր ինտեգրվածության արժեքներ են գրանցվում նաև Թբիլիսյան և Ազատության պողոտաների ուղղությամբ, սակայն ի տարբերություն Արաբկիրի այստեղ կառուցվածքային արժեքի աճ չի նկատվում: Արժևորվում է նաև Ծովակալ Իսակովի պողոտայի ուղղությամբ: Մինչև տվյալ փուլը քաղաքի բարձր արժեքի տարածքները հիմնականում տեղակայվում են հյուսիս-հարավ և համեմատաբար ցածր արժեքները՝ հարավարևմտյան-հյուսիսարևելյան ուղղությամբ (Չավելված 8 և 12):

IV փուլ (1971-2005 թթ.). 1971թ. գլխավոր հատակագծով քաղաքի սահմանները շարունակվեցին ընդլայնվել: Կառուցապատվեցին Ավան, Ավան-Առինջ, Մասիվ 7, 8, 9 զանգվածները, Մալաթիա և Էրեբունի թաղամասերը, իսկ համաքաղաքային նշանակության օբյեկտներից կառուցվեցին Կասկադի և Մարգահամերգային համալիրները:

Եթե մինչև այս քաղաքը զարգանում էր նոր տարածությունների հաշվին ապա նոր գլխավոր հատակագծով բնակելի կառուցապատման որոշ մասը սկսում է իրականացվել կենտրոնում [97]: Բնակարանային պահանջի բավարարման նպատակով քաղաքի տարբեր հատվածներում սկսեցին կառուցվել տիպային բարձրահարկ շենքեր: Նմանատիպ կառուցապատումը թերևս ընդունելի էր նորաստեղծ ավաններում, որոնք գտնվելով կազմավորման սկզբնական փուլում՝ չունեին պատմական միջավայրի հետհամադրման և ներդաշնակեցման խնդիրներ: Քաղաքի կենտրոնի պարագայում ցածր և միջին հարկայնության կառուցապատման տարածքում տիպային բարձրահարկների տեղակայումը հանգեցնում է արդեն իսկ ձևավորված միջավայրի մասշտաբային բացասական փոփոխությունների և կազմավորված միջավայրի աղավաղման: Որպես օրինակներ կարող են հանդիսանալ Ամիրյան-Մաշտոց խաչմերուկում, Թումանյան և Սայաթ-Նովա փողոցներում կառուցված բարձրահարկ բազմաբնակարան բնակելի շենքերը:

Տվյալ փուլի մեկ այլ խնդիր է պատմաճարտարապետական հուշարձանների պահպանության և պատմական միջավայրի արժևորման մեխանիզմների գրեթե բացակայությունը: Դա նոր ընթացք է տալիս քաղաքի մինչ Թամանյանական շրջանի ցածրահարկ բնակելի տների և հասարակական շենքերի քանդման գործընթացին: Մոնումենտալ ճարտարապետական հուշարձանների քաղաքաշինական դիրքի պահպանումը նույնպես չի հաշվի առնվում քաղաքի կառուցապատման տվյալ ժամանակաշրջանի պայմաններում [97]:

1991թ. խորհրդային կարգերի փլուզմամբ և սեփականության իրավունքի ի հայտ գալու պայմաններում առաջացան նոր խնդիրներ [98]: Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, մշակված և ինտելոլ սեփականության իրավունքի բացակայության պայմաններում, երբ միակ սեփականատերը պետությունն էր, ստեղծված պայմաններում հաշվի չէին առնում սեփականության նոր իրավունքի գործունը: Որպես հետևանք քաղաքի կառուցապատումը երբեմն ընթանում էր անհատ սեփականատերերի հայեցողությամբ, առանց հաշվի առնելու գործող քաղաքաշինական ծրագրային, նորմատիվային փաստաթղթերի պահանջները և տարածքի քաղաքաշինական արժեքը:

90-ական թվականներին խիստ քաղաքաշինական վերահսկողության բացակայության պայմաններում ավելացավ նաև ապրիլի կառուցապատման տոկոսը: Ինչպես քաղաքի ծայրամասերում, այնպես էլ կենտրոնում, առանց որևէ ճարտարապետաշինարարական փաստաթղթերի, կառուցապատվեցին բակային տարածքները և փողոցների մայթերը: Օրինակ կարող են հանդիսանալ Աբովյան փողոցի մայթերի կանաչ ապատ տարածքները, որոնք կառուցապատվեցին տարատեսակ ճարտարապետական ցածրարժեք շինություններով, սակայն դրանք ապամոնտավեցին վերջին տասնամյակի ընթացքում: Լայն տարածում գտան նաև ճարտարապետական տեսակետից արժեք ներկայացնող շենքերի վերակառուցման աշխատանքները՝ առանց մշակված նախագծային փաստաթղթերի: Մանսարդների, վերնահարկների, կցակառույցների իրականացման, շենքերի պատշգամբների և բացվածքների պարփակման և պատահական հարդարման նյութերով շենքերի երեսապատման աշխատանքները հանգեցրին քաղաքի քաղաքաշինական բարձրարժեք

տարածքների ճարտարապետական և պատմական արժեքի նվազմանը և դրանց որոշ մասի վերացմանը:

Այս փուլում՝ կենտրոնի բարձր քաղաքաշինական կարգավիճակն այն ավելի գրավիչ դարձնելով ներդրումների համար, նպաստեց դրա կառուցապատման խողովան կտրուկ աճին՝ այլ վարչական շրջանների համեմատ: Այս գործընթացը աստիճանաբար հանգեցրեց տեղային կենտրոնների քաղաքաշինական արժեքի նվազմանը, հետագայում նաև վերացմանը:

1971-2005 թթ. քաղաքային տարածքների արժևորում. Ամփոփելով տվյալ փուլը՝ կարելի է եզրակացնել, որ այս շրջանում գրանցվել է քաղաքային տարածքների քաղաքաշինական արժեքի նվազում: Քաղաքի ընդարձակման հետ մեկտեղ կառուցվել են որոշ համաքաղաքային նշանակության օբյեկտներ, ինչը նպաստել է տարածքների քաղաքաշինական արժեքի աճին: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով հուշարձանների քանակի նվազումը, նկատելի է, որ քաղաքի պատմական կենտրոնում բարձրահարկ շենքերի և փոքրածավալ անկանոն կառուցապատման իրականացմամբ շարունակվել է պատմականորեն ձևավորված միջավայրի աղավաղման և արժեզրկման գործընթացը:

Փողոցատրանսպորտային ցանցի գնահատումը ցույց է տալիս, որ չնայած դրա ընդարձակմանը՝ կառուցվածքային բարձր արժեքի նոր տարածքներ գրեթե չեն ձևավորվում: Նախորդ փուլերի առավել արժեքավոր տարածքներն ավելի են արժևորվում նոր փողոցների առաջացման շնորհիվ: Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում ներառված փողոցները որոշակիորեն արժևորվում են, սակայն դրանց կառուցվածքային արժեքը մնում է համեմատաբար ցածր քաղաքի այլ տարածքների համեմատ (Յավելված 8 և 13):

V փուլ (2005-2015 թթ.). 2005 թ.-ին հաստատվեց քաղաքի զարգացման նոր գլխավոր հատակագիծը՝ քսան տարի հաշվարկային ժամանակահատվածով, որով քաղաքը կառուցապատվում է մինչ օրս [99]:

Նոր գլխավոր հատակագծի հաստատումից հետո նկատվել է քաղաքային տարածքների գործառնական հագեցվածության մակարդակի ակնհայտ աճ: Քաղաքի ներկայիս վիճակի ուսումնասիրությունը

ցույց է տալիս, որ շենքերի առաջին հարկերում հասարակական նշանակության օբյեկտների տեղակայումը և փոքրածավալ սպասարկման օբյեկտների կառուցումն ունի համատարած բնույթ, ինչը նպաստում է տարածքի գործառույթային բազմազանությանը և հագեցվածությանը: Քաղաքի կենտրոնից դուրս նույնպես նկատվում է գործառական հագեցվածության մակարդակի աճ, սակայն այստեղ չեն ձևավորվում հետիոտնային շարժման համար գրավիչ քաղաքաշինական հանգույցներ: Պատճառը տարածքում ձևավորված քաղաքաշինական միջավայրի, ինչպես նաև դրա կառուցապատման համալիր ծրագրերի բացակայությունն է: Կառուցվող հասարակական սպասարկման օբյեկտների գործառույթը պայմանավորված է կառուցապատողների հայեցողությամբ: Դա հանգեցնում է տարատեսակ գործառական նշանակության օբյեկտների տեղաբաշխման՝ առանց որևէ օրինաչափության: Փողոցների մայթեզերերին տեղակայված կրպակաշարերը, մանրածախ առևտրի սրահները, ավտոտեխնասպասարկման կետերը հավաստում են արված պնդումը: Կենտրոն վարչական շրջանում նույնպես առկա է առանց համալիր քաղաքաշինական ծրագրերի կառուցապատման տոկոս, սակայն նրանում առկա են անցյալից պահպանված կազմավորված քաղաքաշինական հանգույցներ, որոնք էլ ներկայումս որոշ չափով նպաստում են տարածքում քաղաքաշինական արժեքի պահպանմանը:

Քաղաքի վերջին գլխավոր հատակագծով իրականացված թերևս ամենամասշտաբային ծրագիրը, որը նախատեսված էր դեռևս 1924թ. գլխավոր հատակագծով, ՅՆՍԻՍԱՅԻՆ պողոտան է: ՅՆՍԻՍԱՅԻՆ պողոտայի միջոցով նախատեսվում էր կապ քաղաքի մշակութային և վարչական հրապարակների միջև: Ներկայումս Յանրապետության Յրապարակը, ՅՆՍԻՍԱՅԻՆ պողոտան և Օպերան դարձել են քաղաքի համար գերակա նշանակության ամբ հետիոտնային շարժման առավել գրավիչ հանգույցներ: Դա պայմանավորված է տվյալ տարածքի կենտրոնական տեղակայմամբ, պատմապատարապետական և մշակութային արժեքների առկայությամբ, գործառույթային հագեցվածությամբ, ինչը և տարածքում առաջացնում է հետիոտնային շարժման բարձր ինտենսիվություն՝ նպաստելով բարձր ներդրումային գրավչության: Վերջին շրջանում

հասարակական սպասարկման և ժամանցի հաստատությունների կենտրոնացումը Հյուսիսային պողոտայի, Օպերայի և Կասկադի հանգույցներում նպաստել է նրանց քաղաքաշինական արժեքի աճին: Ներկայումս էլ պողոտայի գործառական հագեցվածության աճը շարունակվում է պողոտայի ստորգետնյա հատվածում առևտրային կենտրոնի կառուցմամբ:

Հյուսիսային պողոտայի քաղաքաշինական արժեքավորությունը պայմանավորված է դրա տեղակայմամբ: Դրա կառուցվածքային չափումները հավաստում են պողոտայի տեղադիրքի բարձր կենտրոնականության աստիճանը, ինչը և առաջացնում է հողի բարձր արժեք, ներդրումային և հետիոտնային շարժման գրավչություն:

Մինևույն ժամանակ քաղաքի այլ հանգույցները, որոնք նույնպես օժտված են քաղաքաշինական արժեքի ձևավորման համար անհրաժեշտ վերոնշյալ հատկանիշներով, դրանց զարգացման համար ամրագրված ուղղությունների բացակայության կամ ոչ լիարժեքության պատճառով չեն ձևավորում հետիոտնային շարժման բարձր գրավչության տարածքներ: Պատճառը դրանց զարգացման ուղիներում տարածքի պատմաարտարապետական ժառանգության արժևորման միջոցների անտեսումն է և համալիր կառուցապատման ծրագրերի բացակայությունը:

Ժառանգելով խորհրդային շրջանի կառուցապատման բացասական հատկանիշները՝ ներկայումս շարունակվում են քաղաքի կենտրոնում բարձրահարկ շենքերի կառուցման, պահպանված պատմական տարածքների անհաջող վերակառուցման և ճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի քանդման աշխատանքները: Փակ շուկայի, Ավ. Իսահակյանի գրադարանի, Դվին հյուրանոցի և մի շարք այլ հուշարձանների և ճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի վերակառուցմամբ, Երիտասարդության պալատի, Աֆրիկյանների և Արամի փողոցի երկայնքով տեղակայված մի շարք բնակելի տների քանդմամբ քաղաքի պատմաարտարապետական և մշակութային արժեքը դրվում է վերացման վտանգի տակ: Որոշ դեպքերում քանդման աշխատանքները հիմնավորվում են շինության մեկ այլ վայր տեղափոխման հանգամանքով, սակայն հայրենական և միջազգային բնագավառում

գործող իրավական ակտերի և փաստաթղթերի համաձայն ճարտարապետական հուշարձանը արժեք է ներկայացնում իր գտնվելու վայրում, և նրա տեղափոխումը կարող է ոչ միայն նվազեցնել դրա արժեքը, այլ նաև արժեզրկել այն [100]:

Ի տարբերությունը տարածքի գործառնական արժեքի, որը պայմանավորված է տարածքում որոշակի համաքաղաքային կամ յուրատիպ հասարակական սպասարկման օբյեկտների տեղակայմամբ և կարող է ձևավորվել կարճ ժամանակահատվածում՝ համապատասխան ներդրման պարագայում, պատմաճարտարապետական և մշակութային արժեքի ձևավորումը պահանջում է ավելի բարդ ընթացք, ուստի դրա պահպանումը, արժևորումը և զարգացումը տարածքի քաղաքաշինական արժեքի համար առաջնային կարևորություն խնդիր է:

2005-2015 թթ. քաղաքային տարածքների արժևորում. Տվյալ փուլի ուսումնասիրությունը ի հայտ է բերում տարածքների քաղաքաշինական արժեքի նվազման միտում: Պատճառը գործող ծրագրային փաստաթղթերի և օրենսդրական կարգավորման միջոցների ոչ լիարժեքությունը և դրանցով ամրագրված պայմանների հաճախակի խախտումներն են: Ցանկացած քաղաքի զարգացման համար մշակված են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր, որոնք էլ ամրագրում են չափորոշիչներ քաղաքի հետագա զարգացման համար, և դրանց ոչ լիարժեքությունը հանգեցնում է քաղաքի կառուցապատման աղավաղմանը:

Տվյալ փուլի փողոցատրանսպորտային ցանցի արժևորման շրջանակներում ուսումնասիրվել են և՛ տեղային, և՛ ընդհանուր կառուցվածքային արժեքներ ներկայացնող տարածքները: Քաղաքային նշանակության բարձրարժեք հանգույցները տեղակայված են հիմնականում Տիգրան Մեծ, Կոմիտասի և Բաղրամյան պողոտաների ուղղությամբ, որոշ մասնը առկա է՝ Կիևյան փողոցի երկայնքով: Տեղային չափումների առավելագույն արժեքները հիմնականում տեղակայված են Ֆրանսիայի հրապարակին և «Բարեկամություն» մետրոյի կայարանին հարակից տարածքներում:

Ամփոփելով ժամանակագրական վերլուծությունը՝ կարելի է եզրակացնել, որ 1850-ական թվականներին քաղաքաշինական բարձրարժեք տարածքները ներառում էին Մյասնիկյանի հրապարակը,

Աբովյան, Նալբանդյան և Հանրապետության փողոցները և դրանց հարակից տարածքները, հետագայում քաղաքաշինական բարձրարժեք տարածքների զարգացումը ընթացավ դեպի հյուսիս-արևելք: Ձևավորվեցին նոր կառուցվածքահատակագծային և հորինվածքային հանգույցները՝ Հանրապետության, Սասունցի Դավիթ հրապարակները, Օպերան, Մոսկվա և Նաիրի կինոթատրոնները և այլն: Առանձին տարածքների միջև հետիոտնային կապերի կազմակերպումը հանգեցրեց դրանց առավել արժևորմանը: Օրինակ, Հյուսիսային պողոտայի կառուցմամբ քաղաքաշինական երկու կարևոր հանգույցները՝ Հանրապետության հրապարակը և Օպերան միացվեցին մեկ այլ քաղաքաշինական բարձրարժեք տարածքով (Հավելված 9):

Ներկայիս քաղաքաշինական բարձրարժեք տարածքները հիմնականում կազմավորվել են Թամանյանական շրջանում, իսկ մինչ այդ ձևավորված բարձրարժեք տարածքներից մնացել են առանձին շինություններ և եզակի կառուցվածքահատակագծային հանգույցներ, որոնք ներկայումս կորցրել են իրենց նշանակալիությունը. և՛ համապատասխան քաղաքաշինական կարգավորման, և՛ պահպանման միջոցների ոչ լիարժեքության պայմաններում դրանց սպառնում է վերացման վտանգը [101]:

2.3. ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Ներկայիս երևանի տարածքների քաղաքաշինական արժեքի գնահատումը պահանջում է գործոնների և չափանիշների առավել ընդգրկուն շրջանակ: Անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն տարածքում որևէ գործոնի առկայությունը, այլ նաև դրանով պայմանավորված արժեքի առկայությունը, քանզի նույնատիպ գործոնը երկու տարբեր տարածքներում կարող է ձևավորել տարբեր քաղաքաշինական արժեք, իսկ մեկից ավելի գործոնների առկայությունը տարածքում բարձրացնում է դրա քաղաքաշինական արժեքը: Ուստի անհրաժեշտ է տարածքները արժևորել ըստ քաղաքաշինական արժեքի բաղադրիչների և արդյունքները համադրել՝ տարածքի բացարձակ արժեքի որոշման նպատակով: Արդյունքների համադրման միջոցով հնարավոր է հաշվարկվել էյուրաքանչյուր բաղադրիչի մասնաբաժինը, ըստ որի և սահմանել

բարձր, միջին և ցածր քաղաքաշինական արժեքավորություններ տարածքներ:

2.3.1. Հիմնական կառուցվածքահատակագծային տարրեր

Ըստ տարրերի գնահատման համար ելակետային տվյալների ձեռքբերման աղբյուր է հանդիսացել ԱՏՀ բաց մատչելիության տվյալների բազան: Դրանք ներառում են քարտեզի վրա տեղանշված քաղաքային տարատեսակ օբյեկտների և հաստատությունների խմբեր: Չնայած այն հանգամանքին, որ Երևանի պարագայում դրանց կազմը թերի է, դա լրացվել է խմբագրման միջոցով: Գնահատման գործընթացում կազմվել են լրացուցիչ խմբեր՝ ըստ արժևորման համար դուրս բերված քաղաքիչների: Սահմանված տարրերը ընդունվել են որպես նյութական կետեր և տեղանշվել են օբյեկտների երկրաչափական կենտրոններում:

Գնահատման գործընթացում օբյեկտների տեղաբաշխման խտությունից զատ դրանց քաղաքաշինական նշանակալիությունը հաշվի առնելու նպատակով կիրառվել են լրացուցիչ գործակիցներ: Գործակիցների կիրառումը պայմանավորված է հուշարձանների պարագայում հուշարձանի կարգավիճակով՝ հանրապետական կամ տեղական նշանակության, կառուցվածքահատակագծային և հորինվածքային հանգույցների պարագայում՝ դրանց հետիոտնային շարժման գրավչությունը, բնական համակարգերի և շրջակա միջավայրի պարագայում՝ օբյեկտի քաղաքաշինական կարևորությունը: Վերջինի պարագայում հավելյալ արժևորվել է Հրազդանի կիրճը՝ հաշվի առնելով դրա կարևորությունը քաղաքային լանդշաֆտում: Ըստ 1982թ. Երևանի մանրամասն հատակագծման նախագծի՝ Հրազդանի կիրճն ընդունվել է որպես համաքաղաքային նշանակության հանգստի գոտի, ինչը հավաստում է տարածքի քաղաքաշինական արժեքը և նշանակալիությունը [102]:

Կառուցվածքահատակագծային և հորինվածքային հանգույցների պարագայում գնահատվել է նաև վերջիններիս հետիոտնային շարժման գրավչությունը, ինչը չափվել է տեղատեսությունների միջոցով: Երևանում առկա է տվյալ տիպի տասնյոթ տարր, որոնցից տասնմեկը գտնվում են Կենտրոն վարչական շրջանում: Դրանց

ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ բոլորն են հանդիսանում հետիոտնային շարժման բարձր գրավչության տարածքներ, նույնիսկ կենտրոնում տեղակայվածները: Տվյալ բաղադրիչի պարագայում որպես չափանիշ ընդունվել է դրանց հետիոտնային շարժման գրավչությունը: Հանրապետության, Ազատության, Ֆրանսիայի Սասունցի Դավթի հրապարակները հանդիսանում են բարձր հետիոտնային շարժման գրավչության հրապարակներ: Հրապարակների տեղատեսությունները և գործառական կառուցվածքային մոդելների կազմումը ցույց են տալիս, որ հետիոտների համար հրապարակի գրավչությունը, հետիոտնային շարժման ուղիների կապակցվածությունից զատ, պայմանավորված է դրանում տեղակայված օբյեկտների եզակիությամբ կամ գործառույթային հագեցվածությամբ: Հանրապետության հրապարակի պարագայում դրանք են կառավարական շենքերը, շատրվանները, Ազատության հրապարակի պարագայում՝ Օպերան և ժամանցային հաստատությունների կուտակումը, Սասունցի Դավթի հրապարակի պարագայում՝ կայարանը և շատրվանները: Միևնույն ժամանակ Գարեգին Նժդեհի հրապարակի պարագայում առկա է հետիոտնային շարժման ձևավորված տարածք, սակայն գործառական հագեցվածությամբ կամ բարձր կարգավիճակով հաստատության բացակայությունը չի նպաստում տարածքում հետիոտնային շարժի ակտիվացմանը:

Գնահատման սկզբնական փուլում արժեք ձևավորող օբյեկտների կուտակման հանգույցների բացահայտման նպատակով տարրերի շուրջը կառուցվել է Վորոնեժի դիագրամը (Հավելված 16): Ստացված պատկերի միջոցով բացահայտվել են այն հանգույցները որոնցում առավել փոքր մակերեսների վրա կենտրոնացված են առավել մեծ քանակությամբ արժեք ներկայացնող օբյեկտներ: Հետագայում պատկերի բջիջները ներկվել են ըստ մակերեսի՝ մեծից փոքր գունային սանդղակով: Ստացված պատկերը ցույց է տալիս, որ նույնիսկ քաղաքի պատմական կենտրոնում հուշարձանների կուտակումները անհամասեռ են:

Դուրս են բերվել տարրերի կենտրոնացման հանգույցները, և քաղաքային տարածքները դասակարգվել են ըստ միավոր մակերեսի

նկատմամբ դրանց կենտրոնացման, իսկ միավորների արժեքները ճշգրտվել են հետիոտնային շարժման գրավչության և բացուցիչ գործակիցների միջոցով (Յավելված 17):

Յաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնասիրության համար ընտրված ժամանակաշրջանում քաղաքի ձևավորումը հիմնականում ընթացել է ներկայիս Կենտրոն վարչական շրջանի սահմաններում, որտեղ և տեղակայվել են պատմա-արտարապետական և մշակութային արժեք ներկայացնող օբյեկտներ և տարածքները, ըստ քաղաքիչի գնահատման առավելագույն արդյունքները ևս կենտրոնացել են այս տարածքում: Միևնույն ժամանակ ստացված արդյունքը ցույց է տալիս, որ կենտրոնում, որտեղ պետք է որ առկա լիներ տվյալ խմբի տարրերի տեղաբաշխվածության համասեռ բարձր խտություն, պահպանվել են սակավ օբյեկտներ, ինչը կրկին անգամ հիմնավորում է քաղաքի ժամանակագրական վերլուծության մեջ արված պատմական միջավայրի արժեգրկման դիտարկումը: Դրանք հիմնականում առանձին խմբավորված հանգույցներ են, որոնք նախկինում եղել են իրար փոխկապակցված միջավայրի մաս: Կենտրոնից դուրս հուշարձանների տեղակայումը բավականին սակավաքանակ է:

Յամաքաղաքային նշանակության օբյեկտների և համալիրների գնահատման պարագայում կազմվել է դրանց խումբ, որում ներառվել են գրեթե 32 օբյեկտ: Դրանք տեղանշվել են քարտեզի վրա և հաշվարկվել է վերջիններիս կենտրոնացվածության հանգույցները: Յաշվի առնելով, որ դրանց մեծամասնությունը տեղակայված է Կենտրոնում, առավելագույն արժեքները ստացվել են այստեղ:

Ըստ բնական համակարգերի և շրջակա միջավայրի տարածքների գնահատման՝ քարտեզի վրա տեղանշվել են խմբում ներառված բոլոր օբյեկտները, և քաղաքային տարածքները արժևորվել են ըստ դրանց կենտրոնացման և դրանցից իրենց հեռացվածության: Եթե այլ տարրերի պարագայում հեռավորությունը գնահատվել է ըստ փողոցային ցանցի, ապա տվյալ պարագայում դրանց շուրջ կազմվել են բուժերային գոտիներ: Կարևորվել են առավել մեծ մակերես գրադեցնող գոտիները: Երևանի պարագայում խմբում ներառված

առավել արժեքավոր գոտին Յրագրանի կիրճն է, և դրա պահպանումը ունի կենսական նշանակություն քաղաքի համար: Վերջին քսան տարիների ընթացքում այն կառուցապատվում է բազմաբնակարան բնակելի շենքերով և տարատեսակ հասարակական նշանակության օբյեկտներով, ինչը հակասում է քաղաքի գլխավոր հատակագծին: Նման զարգացումը կարող է հանգեցնել կիրճի կանաչ գոտու նվազմանը: Ուստի դրա պահպանումը և արժևորումը առաջնային հրատապության խնդիր է քաղաքի համար:

Յրագրանի կիրճից զատ քաղաքի բոլոր վարչական շրջաններում առկա են բնական համակարգեր, սակայն դրանց մակերեսը բավարարչե տարածքում բավարար կենսամիջավայրի ապահովման համար, իսկ տեղակայումը երբեմն հասանելիության սահմաններից դուրս է բնակելի կառուցապատման որոշ գոտիների համար:

Ուսումնասիրության շրջանակներում հաշվի չեն առնվել տվյալ տարածքների բարեկարգվածության և հետիոտնային շարժման գրավչության գործոնները՝ գնահատման համար դրանց ոչ նշանակալիության պատճառով:

2.3.2. Փողոցատրանսպորտային ցանց

Գնահատվել են երևանի բոլոր փողոցների սինտակտիկ չափումները, ինչպես նաև քաղաքային տարածքները դասակարգվել են ըստ փողոցային ցանցի խտության: Չափումների համարելակետային տվյալները վերցված են openstreetmap USՅ տվյալների բազայից: Openstreetmap ազատ հասանելիության USՅ տվյալների բազա է, որը պարունակում է աշխարհի յուրաքանչյուր քաղաքի, հատակագծային և այլ բնույթի տարրերի խմբեր: Դրանք ներառում են քաղաքի փողոցատրանսպորտային ցանցը, կառուցապատումը, կանաչ և ջրային մակերեսները, պատմաճարտարապետական, մշակութային և ժամանցային օբյեկտները և մի շարք այլ տարրերի խմբեր: Յուրաքանչյուր քաղաքի համար տարրերի խմբերի քանակը և դրանց ցանկն ունի տարբեր աստիճանի ճշգրտություն: Երևանի պարագայում փողոցային ցանցը գրեթե ամբողջական է, սակայն գնահատման համար սահմանված օբյեկտների խմբերի կազմը թերի է և ենթակա է խմբագրման:

Փողոցների գնահատման պարագայում Երևան քաղաքի փողոցային ցանցի միջնագծերի հատակագիծը ներբեռնվել է ArcGIS համակարգչային ծրագիր: ArcGIS US3 տվյալների վերլուծման, դասակարգման, խմբավորման և պահպանման ծրագրերի փաթեթ է: Փողոցային ցանցի գնահատման համար կիրառված ծրագրային հավելում է Axwoman: Այն թույլ է տալիս գործարկել տարածքային սինտեքսի չափումներն անմիջապես US3 միջավայրում՝ դրա միջոցով ստացված տվյալների հիման վրա: Նշված ծրագրային հավելման միջոցով գործարկվել են փողոցային ցանցի տեղային և ընդհանուր ինտեգրվածության, միջանցիկության, հեռացվածության սինտակտիկ չափումները (Յավելված 18): Չափումների արդյունքները խմբավորվել են ըստ ինն աստիճան սանդղակի: Տարածքային սինտեքսում տարածքի տարատեսակ չափումների պատկերման ընդունված մեթոդ է գունային սանդղակի քարտեզը: Այն հիմնականում ներառում է կարմիրից կապույտ գունային միջակայքը՝ ըստ արժեքի նվազման:

Քաղաքի կենտրոնից մետրական և տոպոլոգիական հեռավորությունների չափումները ցույց են տալիս, որ կենտրոնին ավելի մոտ տեղակայված հանգույցները կարող են լինել նվազ հասանելի, քան ավելի հեռու տեղակայվածները՝ իրենց տոպոլոգիական հեռացվածության պատճառով: Ուստի հանգույցի հեռացվածությունը կենտրոնից գնահատելու նպատակով կատարել է վերոնշյալ երկու չափումների համադրում: Մետրական և տոպոլոգիական հեռավորությունների իննաստիճան դասակարգման արդյունքները համադրվել են միջին թվաբանական արժեքի հաշվարկման միջոցով: Յամադրման արդյունքը տալիս է հանգույցների դասակարգում ըստ մառչելիության և հասանելիության (Յավելված 19):

Փողոցատրանսպորտային ցանցի հանգույցների ինտեգրվածությունը և միջանցիկությունը չափվել են նախանշված հաշվարկային շառավղի և ամբողջ համակարգի սահմաններում: Եթե ամբողջ ցանցի սահմաններում վերլուծության առավելագույն արդյունքները հիմնականում կենտրոնականում են ցանցի կենտրոնում, ապա նախանշված շառավղի դեպքում ի հայտ են գալիս

նաև համակարգի կենտրոնից դուրս բարձր ինտեգրվածության հանգույցներ: Դա պայմանավորված է հանգույցի ցանցի այլ հանգույցների հետ ունեցած կապերի քանակով և ամբողջ ցանցի կառուցվածքի անհամասեռության ամբ (Յավելված 18):

Միջանցիկության չափումն արտահայտում է հանգույցի կենտրոնականության աստիճանը: Եթե դիտարկենք կամայական հետագծերով համակարգով շարժվող հոսքեր, ապա հավանականությունը, որ նրանք կանցնեն բարձր միջանցիկության արժեք ունեցող հանգույցով, ավելի բարձր է: Ընդհանուր միջանցիկության չափումն արտահայտում է հանգույցի կենտրոնականությունը ամբողջ քաղաքի համար: Նման վայրերում նպատակահարմար կլինի տեղակայել համաքաղաքային նշանակության օբյեկտներ:

Ինտեգրվածությունն արտահայտում է հանգույցի մատչելիության աստիճանը տարբեր հանգույցների համար, այսինքն՝ առավել քանակի հանգույցների համար մատչելի հանգույցը առավել ինտեգրված է: Տեղային բարձր ինտեգրվածության հանգույցները առօրյա սպասարկման հաստատության տեղակայման նպատակահարմար վայրեր են: Հասարակական նշանակության օբյեկտների սպասարկման շառավղի սահմաններում գործարկված վերլուծությունները կարող են օգտագործվել դրանց ամենանպաստավոր տեղակայման վայրերի բացահայտման նպատակով: Օրինակ, դպրոցների և մանկապարտեզների տեղակայման համար նախապես նշված սպասարկման տարածքում գործարկված վերլուծությունը ի հայտ է բերում առավել քանակի հանգույցների համար մատչելի տարածքները: Հայրենական պրակտիկայում նշված տիպի օբյեկտների տեղակայման վայրերի ընտրությունը կատարվում է օբյեկտի շուրջը շառավղի կառուցման միջոցով, որի պարագայում հաշվի չի առնվում քաղաքի փողոցատրանսպորտային ցանցը: Քանի որ նշված շառավղի սահմաններում ներառված տարածքներն ունեն տարբեր հեռացվածությունն օբյեկտից՝ իրենց կապող ճանապարհների տարբերության հետևանքով, ուստի օբյեկտի շուրջը կառուցված շառավղի միջոցով դրա սպասարկման տարածքի հաշվարկն ունի

զգալի շեղումներ: Օբյեկտների տեղակայման վայրերի նպատակահարմարությունը բացահայտելու և բացի վերլուծությունը թույլ է տալիս նաև հաշվարկել դրանց անհրաժեշտ նվազագույն քանակը:

Վերոնշյալից ելնելով՝ փողոցային ցանցի առանձին վերցրած չափումների արդյունքները և դրանցից յուրաքանչյուր երկուսի համադրումը կարող են ունենալ տարատեսակ կիրառումներ՝ կախված առաջադրված խնդրի տեսակից, սակայն հանգույցի կառուցվածքային արժեքը բացահայտելու նպատակով գնահատման բոլոր արդյունքները համադրվել են: Համադրման համար գնահատման արդյունքները դասակարգվել են ըստ իննաստիճան սանդղակի, վերախմբավորվել են ըստ ընդհանուր չափման սանդղակի, և վերադրման միջոցով հաշվարկվել է միջին թվաքանական արժեքը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կազմվել են նաև առանձին գնահատման արդյունքների համադրման քարտեզներ, ինչպես, օրինակ, հասանելիության, ինտեգրվածության և կենտրոնականության: Չափումների համադրումն արտահայտում է տարբեր գործառնությունների համար տարածքի քաղաքաշինական արժեքը, ինչպես նաև դրանց բոլորի համադրումը տալիս է փողոցային ցանցի յուրաքանչյուր հանգույցի քաղաքաշինական արժեքը:

Տեղային և համաքաղաքային գնահատումներից զատ, հաշվի առնելով քաղաքի վարչատարածքային բաժանումը, վարչական շրջանները դիտարկվել են որպես առանձին միավորներ և դրանց սահմաններում կատարվել են ինտեգրվածության սինտակտիկ չափումներ: Գնահատումը նպատակ ունի դուրս բերել վարչական շրջանների կենտրոնների ձևավորման համար առավել արդյունավետ հանգույցները՝ դրանց հետագա զարգացման նպատակով:

Վարչական շրջանի սահմաններում գործարկված տեղային վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ կառուցվածքային բարձր արժեքով հանգույցները չեն համընկնում նախորդ վերլուծությունների առավելագույն արժեքի հանգույցների հետ: Տեղային գնահատումները ցույց են տալիս յուրաքանչյուր հանգույցի շուրջը հաշվարկային շառավղի սահմաններում հանգույցի արժեքը, այնինչ տվյալ պարագայում ի

հայտ են գալիս վարչական շրջանի սահմաններում առավել արժեքավոր հանգույցները: Ստորև ներկայացվող քաղաքային ենթակենտրոնների ձևավորման հանգույցները անհրաժեշտ է դուրս բերել ոչ թե տեղային վերլուծությանը, այլ վարչական շրջանի սահմաններում գործարկված վերլուծությանը միջոցով:

Միևնույն ժամանակ, առկա են նաև զգալի տարբերությունների տարբեր վարչական շրջաններում գրանցված արժեքների միջակայքերի միջև: Դա պայմանավորված է և՛ համակարգի չափերով և՛ դրանց կառուցվածքահատակագծային առանձնահատկություններով: Տարբերությունը հատկապես ակնառու է Կենտրոն և Արաբկիր վարչական շրջանների համեմատական վերլուծության պարագայում: Արաբկիրը, կազմված լինելով Կոմիտասի պողոտայի ուղղությամբ կանոնավոր դասավորված փողոցային ցանցով, առավելագույն արժեքները գրանցել է նույն պողոտայի ուղղությամբ: Այնինչ Կենտրոնը, ունենալով ավելի կոմպակտ կառուցված բարձր ինտեգրվածության արդյունքներ տեղաբաշխել է ամբողջ ցանցով: Ըստ տվյալ չափման՝ Արաբկիրի հետ կառուցվածքային նմանություններ կան Քանաքեռ-2 ել թուղի հարավային և Շենգավիթի հյուսիսային, որոշ չափով նաև Աջափնյակի արևմտյան հատվածների միջև:

2.3.3. Համակարգում և համադրում

Սահմանված տարրերի խմբերի և փողոցատրանսպորտային ցանցի գնահատման արդյունքների համադրմամբ նախատեսվում է սահմանել տարածքի քաղաքաշինական արժեքը: Արդյունքում՝ կառուցվածքային բարձր կենտրոնականության և քաղաքաշինական բարձր արժեքի օբյեկտներ պարունակող տարածքները դասվում են քաղաքաշինական բարձրարժեք տարածքների շարքը: Համադրումը իրականացվել է գնահատման արդյունքների խմբավորման և վերադրման միջոցով:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գնահատման բոլոր արդյունքների համադրման պարագայում ստացված արժեքային բարտեզն արտահայտում է տարածքի քաղաքաշինական արժեքը,

սակայն այն լիարժեք չի պատկերում տարածքի արժեքավորությունը որոշակի նպատակային կամ գործառական նշանակությամբ օգտագործման համար: Օրինակ, քաղաքաշինական բարձրարժեք տարածքը կարող է ունենալ համեմատաբար ցածր ինտեգրվածության աստիճան և լինել որոշակի հասարակական սպասարկման օբյեկտի տեղակայման համար ոչ նպաստավոր վայր, կամ բարձր աստիճանի ինտեգրվածության տարածքը կարող է լինել բնակելի կառուցապատման համար որ նպաստավոր վայր՝ հետիոտնային շարժման հոսքերի բարձր ինտենսիվության պատճառով: Ուստի քաղաքաշինական արժեքի քարտեզից զատ կազմվել են նաև դրան ածանցյալ արժեքավորության քարտեզներ:

Գնահատման արդյունքների հիման վրա հնարավոր է ճշգրտել նաև Երևանի հողերի տարածազնահատման քարտեզը: Հողերի տարածազնահատման գոտիների կազմման պարագայում որպես չափանիշներ են ընդունվել փողոցային հանգույցների մետրական և տարվոգիական հեռավորությունները: Դրանք, հիմնված լինելով փողոցային ցանցի սինտակտիկ չափումների վրա, ինտերպոլյացիոն եղանակով սահմանում են հավասար մասչելիության գոտիների քանակ և միևնույն ժամանակ հաշվի են առնում հետիոտնային հոսքերի շարժման հնարավոր ուղղությունները: Այսպիսով, քաղաքային տարածքները հնարավոր է դասակարգել ըստ քաղաքի կենտրոնից իրենց հեռացվածության:

Քաղաքաշինական տեսակետից տարածքի արժեքավորությունը չի կարող պայմանավորվել միայն դրա տեղակայման կենտրոնականությամբ, քանզի դուրս բերված բարձր կենտրոնականության հանգույցներից ոչ բոլորի տեղազնությունն է ի հայտ բերում հետիոտնային բարձր գրավչության տարածքներ: Ուստի քաղաքաշինական արժեքի որոշման պարագայում կարևորությունը տրվել է ըստ տարրերի զնահատման արդյունքներին: Այնինչ դրանց բարձր կենտրոնականության հանգույցներում տեղակայված լինելու հանգամանքը ավելի է արժևորում տարածքը:

Միևնույն ժամանակ, բարձր կենտրոնականության տարածքները կարող են հարիսանալ քաղաքաշինական արժեքավորության

օբյեկտերի տեղակայման նպաստավոր վայրեր: Արդյունքում՝ հնարավոր է կազմել ըստ քաղաքի կենտրոնից հեռացվածության, ըստ տեղակայման կենտրոնականության, ըստ քաղաքաշինական արժեքի տարածքների դասակարգման քարտեզներ: Դրանց հնարավոր համադրումները կարող են ավելացնել տարածքի քաղաքաշինական արժեքը, սակայն դրանք արտահայտում են տարածքի տարաբնույթ արժեքներ:

Կառուցվածքային գնահատումները գործարկվել են տեղային և ընդհանուր ցանցի շրջանակներում: Տեղային գնահատման պարագայում դուրս են բերվել վարչական շրջանների փոխկապակցման և զարգացման հնարավոր ուղղությունները: Եթե ըստ տարրերի գնահատման պարագայում բարձր արժեքավորության տարածքները հիմնականում կենտրոնանում են քաղաքի կենտրոնում, ապա փողոցային ցանցի գնահատման պարագայում բարձր արժեքի տարածքները բաշխվում են ամբողջ ցանցով: Տեղային բարձր արժեքավորության հանգույցների հայտեն գալիս յուրաքանչյուր վարչական շրջանում. դրանք կարող են տեղակայվել և՛ շրջանի կենտրոնում, և՛ դրանից դուրս՝ կախված փողոցային ցանցի կառուցվածքից: Տեղային բարձր ինտեգրվածության հանգույցները կարող են կապվել ընդհանուր բարձր ինտեգրվածության հանգույցներին և ստեղծել կոմպակտ համակարգ, այն է՝ փողոցային ցանցի զարգացման պարագայում հնարավոր է խուսափել ավելորդ շրջադարձերից և փողոցների անարդյունավետ տեղակայումներից: Արդյունքում՝ փողոցային ցանցը դառնում է ավելի կապակցված և ինտեգրված: Կենտրոն վարչական շրջանն ընդունվում է որպես համակարգի կենտրոն և դրան փոխկապակցվում են մյուս վարչական շրջանները՝ ենթակենտրոնները: Ստացված համակարգը իր գաղափարով մոտ է Վ.Կրիստալլերի կենտրոնական վայրի տեսությանը և Է.Յովարդի քաղաք-այ գուլգաղափարին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՍՏ ԵՐԿՐՈՐԴ ԳԼԽԻ

1. Հայրենական և արտերկրի քաղաքաշինական նախագծման գերակա ուղղություններն ու սումնասիրության արդյունքում սահմանվել են տարածքի քաղաքաշինական արժեքի

բաղադրիչները և ըստ դրանց՝ տարածքների քաղաքաշինական արժեքի գնահատման մեթոդները:

2. Ուսումնասիրվել է Երևանի քաղաքաշինական բարձրարժեք տարածքների փոխակերպումը քաղաքի զարգացման տարբեր փուլերում: Ժամանակագրական սահմանները և բաժանումը պայմանավորված են Երևանի գլխավոր հատակագծի նախագծերի հաստատման, պահպանված տեղագրական հանույթների, ներկա քաղաքի ժամանակագրական շերտավորման տարեթվերով:

- I փուլ - 1856-1924 թթ.,
- II փուլ - 1924-1951 թթ.,
- III փուլ - 1951-1971 թթ.,
- IV փուլ - 1971-2005 թթ.,
- V փուլ - 2005-2015 թթ.:

3. Երևանի տարածքներն արժևորվել են ըստ փոզոցատրանսպորտային ցանցի և քաղաքաշինական արժեք ներկայացնող տարրերի: Գնահատման արդյունքների համադրման միջոցով որոշվել է Երևանի տարածքների քաղաքաշինական արժեքը: Տարածքի քաղաքաշինական արժեքի գնահատման գործոնները հնարավոր է բերել ընդհանուր համեմատականի՝ ըստ դրանց կարևորության, լրացուցիչ գործակիցների ներդրման միջոցով: Տվյալ մեթոդները թույլ են տալիս դասակարգել քաղաքի տարածքներն ըստ քաղաքաշինական արժեքի:

4. Բացահայտվել է, որ տարածքի քաղաքաշինական արժեք ձևավորող գործոնները միմյանցից անկախ չարունակաբար փոփոխվում են: Քաղաքային տարածքների գործառական հագեցվածության աճը ներկայումս էլ շարունակվում է նախկինից առավել ինտենսիվությամբ: Միևնույն ժամանակ, տարածքի պատմա-արտարապետական և մշակութային արժեքի նվազումը՝ սկիզբ առնելով 1950-ական թվականներից, ներկայումս էլ շարունակվում է: Կենտրոնի քաղաքաշինական բարձր կարգավիճակի արդյունքում նոր սեփականության իրավունքի ի հայտ գալուց հետո այն գերզարգանում է քաղաքի այլ վարչական շրջանների համեմատ: Չնայած այն հանգամանքին, որ քաղաքի

այլ վարչական շրջանները նույնպես կառուցապատվում են, սակայն համալիր հայեցակարգերի բացակայության պայմաններում չի ապահովվում դրանց տարածքների քաղաքաշինական արժեքի աճը:

5. Տարածքի որևէ մեկ քաղաքաշինական արժեքի բաղադրիչի աճը չի նպաստում տարածքի քաղաքաշինական արժեքի ավելացմանը: Ուստի անհրաժեշտ է արտաձել արժեք ձևավորող այն բաղադրիչները, որոնք ներկայումս գրանցում են նվազման միտում, և համապատասխան մեխանիզմների կիրառմամբ ապահովել դրանց աճը:

**ԳԼՈՒԽ 3. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ
ԿԱՏԱՐԵԼ ԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. ՏԱՐԱԾՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

Քաղաքաշինական արժևորման մեթոդների հիման վրա կազմվել է տարածքի քաղաքաշինական արժեքի համալիր գնահատման մեթոդաբանություն (Հավելված 20): Երևան քաղաքի տարածքները դասակարգվել են ըստ բացահայտված տարածքի քաղաքաշինական արժեքի բաղադրիչների (տարրեր, կապեր): Արդյունքում կազմվել են տարբեր քաղաքաշինական արժեքավորություն (բարձր, միջին, ցածր) գոտիների և քաղաքաշինական բարձրարժեք տարածքների կենտրոնացման (բարձր, միջին, ցածր) քարտեզներ (Հավելված 21, 22): Հաշվարկվել են յուրաքանչյուր տարածքի մասնաբաժինը և դրանցում արժեք ձևավորող տարրերի հաշվեկշիռը: Քաղաքի տարածքները, ըստ քաղաքաշինական արժեքի, դասակարգվել են երեք խմբի.

- քաղաքաշինական բարձր արժեքավորություն տարածքներ,
- քաղաքաշինական միջին արժեքավորություն տարածքներ,
- քաղաքաշինական ցածր արժեքավորություն տարածքներ:

Քաղաքաշինական բարձր արժեքավորություն տարածքներ.

Վերլուծության արդյունքների համաձայն այս տարածքները հիմնականում տեղակայվում են քաղաքի Կենտրոն վարչական շրջանի սահմաններում: Դա պայմանավորված է ոչ միայն կենտրոնի բարձր կարգավիճակով, այլ նաև դրա ճարտարապետական, պատմական և գործառական արժեքավորությամբ: Միևնույն ժամանակ, ի հայտ են գալիս նաև Կենտրոնից դուրս քաղաքաշինական բարձրարժեք տարածքների ընդարձակման ուղղությունները: Տեղային բարձր արժեքի քաղաքային տարածքները, ունենալով գրեթե հավասարազոր արտեսցիալ քաղաքաշինական արժեքի ձևավորման համար, համապատասխան օբյեկտների տեղակայման պարագայում կարող են արժևորվել և միևնույն ժամանակ գործառույթային առումով բեռնաթափել կենտրոնը: Ներկա իրավիճակի ուսումնասիրությունը ի հայտ է բերում պատմաճարտարապետական, մշակութային, համաքաղաքային նշանակություն և բարձր կարգավիճակով

հասարակական սպասարկման օբյեկտների կուտակման բարձր մակարդակ Կենտրոնում՝ այլ վարչական շրջանների համեմատ: Դրանցից վերջինների մասնակի տեղափոխումը Կենտրոնից դուրս՝ համապատասխան հանգույցներում, կարող է նպաստել քաղաքի գործառույթային հագեցվածության հավասարակշռմանը:

Գնահատման արդյունքում դուրս բերված համապատասխան արտենցիալի հանգույցները հիմք են հանդիսացել քաղաքի համաչափ զարգացման մոդելի մշակման համար (Յավելված 23): Այդպիսի հանգույցներ են բարձր կենտրոնականության արժեք ունեցող, Կենտրոնից առավել մտչելի հասանելիության տարածքները: Նման տարածքներ առկա են քաղաքի յուրաքանչյուր վարչական շրջանում, սակայն իրար միջև մտչելի կապերի բացակայությունը չի ապահովում դրանց հետագա զարգացումը: Քաղաքի համաչափ զարգացումը նախատեսված է Երևանի 2005թ. գլխավոր հատակագծի նախագծով, որով սահմանված են վեց նախագծային գոտիներ, որոնք տեղակայված են քաղաքի տարբեր վարչական շրջաններում, և նախատեսված է դրանց համաչափ զարգացումը:

Միևնույն ժամանակ, կենտրոնում ունենալով քաղաքաշինական բարձր արժեքի տարածքներ և արժեք ձևավորող տարրերի ցանկ, անհրաժեշտ է սահմանել լրացուցիչ մոտեցումներ տարածքի քաղաքաշինական արժեքի պահպանման և քաղաքի հետագա զարգացման ընթացքում դրա արժևորման համար: Լրացուցիչ մոտեցումները պետք է ուղղված լինեն պատմական միջավայրի արժևորմանը, գործառույթային հագեցվածության և բարենպաստ կենսամիջավայրի պահպանմանը, ինչը կարող է կատարվել միայն նախապես մշակված զարգացման մոդելի կիրառման պարագայում:

Դուրս են բերվել նաև քաղաքաշինական բարձր արժեք տարածքների կենտրոնացման հանգույցները: Դրանք առավել քանակի քաղաքաշինական արժեքի տարրեր պարունակող կամ դրանցից առավել մտչելի հասանելիության տարածքներն են: Քաղաքաշինական բարձր արժեք տարածքները դասակարգվել են ըստ կենտրոնացման.

- բարձր կենտրոնացման քաղաքաշինական բարձր արժեք տարածքներ,

- միջին կենտրոնացման քաղաքաշինական բարձրարժեք տարածքներ,

- ցածր կենտրոնացման քաղաքաշինական բարձրարժեք տարածքներ:

Կազմվել է քաղաքաշինական բարձրարժեք տարածքների հաշվեկշիռ, որի համաձայն բարձր և միջին կենտրոնացման քաղաքաշինական բարձրարժեք տարածքները տեղակայվում են քաղաքի պատմական կենտրոնում և Կենտրոն վարչական շրջանի սահմաններում (Հավելված 22):

Ներկայումս գործող տարածական պլանավորման և օրենսդրական մեխանիզմները չեն ապահովում բարձր քաղաքաշինական արժեքի տարածքների բնականոն զարգացումը և պահպանումը, ուստի հարցի կարգավորումը պահանջում է դրանց վերանայում և կատարելագործում, ինչպես նաև հավելյալ կարգավորման միջոցների ներդրում՝ համաձայն նախորդ ենթազվիտում բերված առաջարկությունների:

Քաղաքաշինական միջին արժեքավորություն տարածքներ. Եթե ըստ

տարրերի գնահատման պարագայում բարձր արժեքավորություն տարածքները հիմնականում տեղակայվել են քաղաքի կենտրոնում, ապա ըստ կապերի գնահատման պարագայում հավասարազոր բարձրարժեք տարածքները տեղաբաշխված են գրեթե բոլոր վարչական շրջաններում: Կարելի է եզրակացնել, որ քաղաքաշինական միջին արժեքի տարածքները հիմնականում համապատասխան արժեք ձևավորող օբյեկտներից զուրկ, սակայն արժեքավոր ենթակառուցվածքներ պարունակող տարածքներն են, որոնք որոշակի գործառույթի տեղակայման պարագայում կարող են արժևորվել քաղաքաշինական տեսակետից: Այնինչ հաշվի առնելով տարածքի համապատասխան պոտենցիալը՝ պարտադիր չէ դրանում ունենալ համաքաղաքային նշանակության օբյեկտ կամ օբյեկտների կուտակում՝ դրա առավել արժևորման համար: Տեղային նշանակության սպասարկման հանգույցի կազմավորումը բարձր կենտրոնականության տարածքներում կարող է արժևորել այն վարչական շրջանի համար: Նման հանգույցներում կարող են կազմավորվել քաղաքային ենթակենտրոններ, որոնցում

տեղակայված կլիներ վարչական, ժամանցային կամ այլ տեսակի տեղական նշանակության սպասարկման օբյեկտներ:

Գործող տարածական պլանավորման փաստաթղթերի և օրենսդրական մեխանիզմների անվերապահ կիրառման պարագայում հնարավոր է ապահովել քաղաքաշինական միջին արժեքի տարածքների բարենպաստ զարգացումը: Միևնույն ժամանակ նման տարածքների կառուցապատման ուսումնասիրությունը ի հայտ է բերում փոքրածավալ անկանոն և անհամադրելի գործառույթներ ունեցող օբյեկտներով կառուցապատման տարածքներ: Դրանցից են փողոցների երկայնքով տեղակայված կրպակաշարերը, բակային տարածքների անկանոն կառուցապատումը, շենքերի ճարտարապետական տեսքն աղավաղող վերակառուցումները և այլն: Նման կառուցապատման իրականացումն արժեզրկում է տարածքը և բարդացնում դրանում բնականոն կենսագործունեությունը: Ուստի դրանց կառուցապատման համար անհրաժեշտ են համալիր քաղաքաշինական ծրագրեր և փոքրածավալ ներդրումներն ուղղորդող հայեցակարգային մոդելներ:

Քաղաքաշինական ցածր արժեքավորության տարածքներ. Դրանք տեղակայված են այն հանգույցներում, որոնք զուրկ են և՛ որոշակի քաղաքաշինական արժեքի տարրերի տեղակայումից, և՛ բարձր կառուցվածքային արժեքի ենթակառուցվածքների առկայությունից: Քննարկվող տարածքների արժևորումը պահանջում է և՛ համապատասխան ենթակառուցվածքի ձևավորում, և՛ տեղային կամ քաղաքային նշանակության օբյեկտների տեղակայում: Նման տարածքներում տեղային վերլուծությունների գործարկման միջացով հնարավոր է դուրս բերել տարածքի սահմաններում բարձր պոտենցիալով հանգույցները՝ դրանց զարգացման ուղիների բացահայտման նպատակով: Այս հանգույցներում կարող են տեղակայվել առաջնային սպասարկման օբյեկտները, իսկ դրանց շուրջը ապահովել տարածքի հետագա զարգացումը: Նման տարածքները հիմնականում գերակշռում են Նոր Նորք և Դավթաշեն վարչական շրջաններում, Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների արևմտյան կողմում և քաղաքի եզրամասերում:

Քաղաքաշինական ցածր արժեքի տարածքների արժեքի բարձրացումը անհրաժեշտ է սկսել համապատասխան ենթակառուցվածքների ձևավորումով: Քաղաքի փողոցատրանսպորտային ցանցի ընդլայնման նախագծերի մշակման փուլում անհրաժեշտ է կատարել համապատասխան վերլուծություններ՝ նման տարածքների կառուցվածքային արժեքի բարձրացման նպատակով: Չաջորդ փուլով այս վայրերում, համապատասխան բարձր կարգավիճակով հասարակական սպասարկման օբյեկտների տեղակայման պարագայում, հնարավոր կլինի տարածքում ակտիվացնել հետիոտնային շարժումը, ներդրումային գրավչությունը, ինչը և կնպաստի տարածքի քաղաքաշինական արժեքի հետագա աճին:

3.2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՐ ԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության շրջանակներում տարածքի քաղաքաշինական արժեքի գնահատման անհրաժեշտությունը կրում է երկակի բնույթ՝ քաղաքաշինական արժեքի գործոնների և չափանիշների սահմանում, տարածքի քաղաքաշինական արժեքի մեկ ընդհանուր գնահատման մեթոդաբանության ներդրում, և քաղաքաշինական գործունեության կատարելագործում ըստ տարածքի քաղաքաշինական արժեքի: Դա կնպաստի քաղաքաշինական ցածրարժեք տարածքների դուրս բերմանը, դրանց հնարավոր արժևորման ուղիների բացահայտմանը և քաղաքաշինական գործունեության գործընթացում քաղաքաշինական բարձրարժեք տարածքների առանձնահատկությունները հաշվի առնելուն:

3.2.1. Ընթացակարգեր

Քաղաքաշինության բնագավառի օրենքները, որոշումները և նորմատիվատեխնիկական փաստաթղթերը հանդիսանում են քաղաքաշինական գործունեության կարգավորման հիմնական միջոցը: Դրանք սահմանում են տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության և հաստատման ընթացակարգերը, ինչպես նաև հավելյալ կարգավորման միջոցներ քաղաքի որոշակի տարածքների համար՝ դրանց քաղաքաշինական

առանձնահատկություններին էլ ներկայումս: Ուստի դրանց ոչ
 լիարժեքությունը լրացուցիչ ռիսկ է ստեղծում քաղաքաշինական
 միջավայրի աղավաղման համար: Ատենախոսության առաջին գլխում
 ՀՀ քաղաքաշինության բնագավառին առնչվող կարգավորման
 միջոցների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք
 լիարժեք չեն ապահովում երևանի տարածքների բարենպաստ
 զարգացումը: Պատճառը դրանց բովանդակային ոչ
 լիարժեքությունն է, ինչպես նաև հավելյալ կարգավորման
 միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը:

Ստորև երևանի տարածքների քաղաքաշինական արժեքի
 պահպանումը և աճն ապահովելու նպատակով առաջարկվում է
 կատարել լրացումների հետևյալ փաստաթղթերում (Յավելված 24).

30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական
 բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀԾՆ-ում.

- տարածքի քաղաքաշինական արժեքը ձևավորող գործոնների
 ցանկը լրացնել՝ պատմա-արտարապետական և մշակութային
 արժեք ներկայացնող օբյեկտներով ու տարածքներով,
 համաքաղաքային նշանակության օբյեկտներով և
 համալիրներով, կազմավորված կառուցվածքահատակագծային և
 հորինվածքային հանգույցներով, բնական համակարգերով և
 շրջակամիջավայրով,
- մանրամասնել «հասարակական նշանակության օբյեկտներով
 հագեցվածություն» հասկացությունը, սահմանել
 քաղաքաշինական արժեք ձևավորող հասարակական
 նշանակության օբյեկտների ցանկը,
- ինժեներական ենթակառուցվածքների խտությունից բացի,
 սահմանել նաև ինտեգրվածության, միջանցիկության,
 հեռացվածության չափումներով որոշվող
 «փողոցատրանսպորտային ցանցի կառուցվածքային արժեք»
 հասկացությունը՝ տարածքի քաղաքաշինական արժեքի որոշման
 նպատակով,
- վեր հանել տարածքում ներդրումային գրավչության
 առաջացման պատճառները:

Սահմանել տարածքի քաղաքաշինական արժեքի գնահատման մեթոդաբանությունը՝ ըստ ներկայացված մոդելի (Հավելված 20):

Հաշվի առնելով տարածքի պատմա-արտարապետական և մշակութային արժեքի կարևորությունը, որի մասին է վկայում արտերկրում գործող խնդրի կարգավորման մեխանիզմների լայն շրջանակը, տարածքի քաղաքաշինական արժեքի որոշման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել նաև դրանում վերոնշյալ տեսակի օբյեկտների առկայությունը: Նման օբյեկտներ են հանդիսանում հուշարձան-շենքերը և շինությունները, դրանցով կառուցապատված տարածքները, ինչպես նաև դրանց շուրջը միջավայր ձևավորող ֆունային կառուցապատումը: Տարածքների արժևորումը՝ ըստ սլյալ գործոնի, կստեղծի ճարտարապետական արժեք ներկայացնող կառուցապատման պահպանման լրացուցիչ միջոց:

Անհրաժեշտ է սահմանել տարածքի քաղաքաշինական արժեքի վրա ազդող հասարակական նշանակության օբյեկտների տեսակները: Ըստ գործող նորմի՝ հասարակական նշանակության օբյեկտների հագեցվածությունը քաղաքաշինական տեսակետից արժևորում է տարածքը, այնինչ հաշվի չի առնված օբյեկտների գործառական նշանակությունը և նրանց պոտենցիալը: Որոշակի գործառույթի հասարակական նշանակության օբյեկտների տեղակայումը նպաստում է տարածքում հետիոտնային շարժման ակտիվացմանը և դրա քաղաքաշինական դերի բարձրացմանը: Տարածքում համաքաղաքային նշանակության հասարակական սպասարկման օբյեկտների, մուլերի, կինոթատրոնների, բուհերի, մշակութային և բարձր կարգավիճակի ժամանցային օբյեկտների տեղակայումը կարող է բարձրացնել տարածքի քաղաքաշինական արժեքը, ինչպես նաև տարածքում առաջացնել ներդրումային գրավչություն:

Փողոցատրանսպորտային ցանցի գնահատման արդյունքները ի հայտ բերեցին այնպիսի որակներ, որոնց բարձր արժեքը ինքնին արժևորում է տարածքը: Ուստի միայն փողոցային ցանցի խտությունից էլ նեղվում տարածքի արժևորումը թերի է: Ստորև առաջարկվում է ինժեներական ենթակառուցվածքների խտությունից զատ հաշվի առնել նաև կենտրոնականությամբ պայմանավորված դրա

կառուցվածքային արժեքը: Բարձր կենտրոնականության հանգույցներում տեղակայված տարածքներն ունեն հետիոտնային շարժման բարձր ինտենսիվություն, որի առավելություններից է այն, որ տվյալ հանգույցներում տեղակայված սպասարկման օբյեկտները գտնվում են շահույթի ձեռքբերման տեսակետից ավելի նպաստավոր պայմաններում:

ՀՀ կառավարության «ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» որոշումը լրացնել գոտիների սահմանների հաշվարկման առաջարկվող մեթոդով: Երևանի հողերի տարածագնահատման գոտիների սահմանները անհրաժեշտ է ճշգրտել ըստ քաղաքային կենտրոնից փողոցային ցանցի հանգույցների մետրական և տոպոլոգիական հեռավորությունների: Փողոցային ցանցի վրա գործարկված վերլուծությունները թույլ կտան բոլոր ուղղություններով սահմանել հավասարաչափ բաժանումներ տարածքների համար: Առաջարկվում է պահպանել գործող ինն գոտիների քանակը դրանց սահմանված կադաստրային արժեքի փոփոխություններից զերծ մնալու նպատակով:

Հաշվի առնելով, որ բարձր կենտրոնականության հանգույցները, ինչպես նաև ատենախոսության մեջ քննարկվող քաղաքաշինական արժեք ձևավորող օբյեկտների առկայությունը տարածքում ստեղծում են ներդրումային գրավչություն՝ այն որպես քաղաքաշինական արժեք ձևավորող գործոն դիտարկելուց զատ անհրաժեշտ է դուրս բերել ներդրումային գրավչության առաջացման պատճառները: Առաջարկությունը պայմանավորված է նաև բուն ներդրումային գրավչության չափման օպտիմալ մեթոդի և չափման միավորի բացակայությամբ:

Տարածքի քաղաքաշինական արժեքի նվազմանը հանգեցնող և ճարտարապետական արժեք ներկայացնող կառուցապատումը աղավաղող մեկ այլ գործունեության տեսակ է ինքնակամ կառուցապատումը: Համաձայն ՀՀ կառավարության 29.07.2006թ. հ.912-Ն որոշման՝ առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի կառուցապատում իրականացնելու պարագայում կառուցապատողը հնարավորություն է

ու ն ն ու մ օրինակ անաց ն ել ու կ առ ու ց վ ած շ ի ն ու թ յ ու ն ը: Ը ս տ Յ Յ կ առ ա վ ար ու թ յ ան 596-Ն որ ո շ մ ան՝ կ առ ու ց ապատ ու մ ն իր ակ ան աց վ ու մ է տար ած ակ ան պլ ան ավ որ մ ան փաս տաթղ թ եր ի ն հ ա մ ած ա յ ն տր ա մ ադր վ ած ճ ար տար ապե տա շ ի ն ար ար ակ ան փաս տաթղ թ եր ի հ ի մ ան վր ա [103]: Մ ի ն ն ու յ ն ժ ա մ ան ակ, ե թ ե ի ն ք ն ակ ա մ շ ի ն ու թ յ ու ն ն եր ի ն դր ան ց ո վ զ ք աղ ե ց վ ած ու ս պաս ար կ մ ան ն պահ պ ան մ ան հ ա մ ար ան հր ած ե շ տ հ ա մ ապատաս խ ան հ ող ա մ ա ս ի՝ ս ե փակ ան ու թ յ ան իր ավ ու ն ք ո վ տր ա մ ադր ու մ ը հ ակ ս ու մ է ս ա հ մ ան վ ած կ ար գ ո վ հ ա ս տա տ վ ած գ լ խ ա վ որ հ ա տակ ա գ ծ եր ի, ք աղ ա ք ա շ ի ն ակ ան գ ո տ ն որ մ ան ն ա խ ա գ ծ եր ի, հ ող եր ի օ գ տ ա գ որ ծ մ ան ս խ ե մ ան եր ի ն ք աղ ա ք ա շ ի ն ակ ան ծր ա գր եր ի փաս տաթղ թ եր ի պահ ան ջ ն եր ի ն, ապա ի ն ք ն ակ ա մ կ առ ու յ ց ն եր ը ն դր ան ց ո վ զ ք աղ ե ց վ ած ու ս պաս ար կ մ ան ն պահ պ ան մ ան հ ա մ ար ան հր ած ե շ տ հ ա մ ապատաս խ ան հ ող ա մ ա ս ը տր ա մ ադր վ ու մ է վ ար ճ ակ ալ ու թ յ ան իր ավ ու ն ք ո վ [104]: Դր ան ի ց հ ե տ ն ու մ է, որ առ կ ա է ան հ ա մ ապատաս խ ան ու թ յ ու ն ն շ վ ած եր կ ու որ ո շ ու մ ն եր ի ք ն ն ար կ վ ող կ ե տ եր ի մ ի ջ ն: Ը ս տ վ եր ո ն շ յ ալ ի՝ ս տ ա ց վ ու մ է, որ առ կ ա է ք աղ ա ք ա շ ի ն ակ ան գ որ ծ ու ն ե ու թ յ ան իր ակ ան աց մ ան եր կ ու տար բ եր ակ՝ ճ ար տար ապե տա շ ի ն ար ար ակ ան փաս տաթղ թ եր ի հ ա մ ած ա յ ն ն առ ան ց դր ան ց՝ ի ն ք ն ակ ա մ կ առ ու ց ապատ մ ան տար բ եր ակ ո վ: Ս տ ա ց վ ու մ է, որ ո չ մ ի ա յ ն թ ու յ լ ա տր ե լ ի է իր ակ ան աց ն ել տար ած ակ ան պլ ան ավ որ մ ան փաս տաթղ թ եր ի ն հ ակ ս ող կ առ ու ց ապատ ու մ, ա յ լ ն ան ս տ ան ալ դր ա օ գ տ ա գ որ ծ մ ան իր ավ ու ն ք:

Ի ն ք ն ակ ա մ կ առ ու ց ապատ մ ան օր ի ն ակ ան աց ու մ ը հ ան գ ե ց ն ու մ է ի ն ք ն ակ ա մ կ առ ու ց ապատ մ ան տո կ ո ս ի ա վ ե լ աց մ ան ը ն տար ած ակ ան պլ ան ավ որ մ ան փաս տաթղ թ եր ի ն շ ան ակ ու թ յ ան ն վ ա գ մ ան ը, ք աղ ա ք ա յ ի ն մ ի ջ ա վ ա յ ը ի աղ ա վ աղ մ ան հ ե տ մ ե կ տ ե ղ հ ակ ս ու թ յ ու ն է առ ա ջ աց ն ու մ ք աղ ա ք ա շ ի ն ու թ յ ան մ ա ս ի ն օր ե ն ք ի հ ե տ ն ս տ ե ղ ծ ու մ է կ ոռ ու աց ի ո ն ռ ի ս կ: Յ ա շ վ ի առ ն ե լ ո վ ա յ ն հ ան գ ա մ ան ք ը, որ շ ի ն ար ար ու թ յ ու ն ը թ ու յ լ ա տր վ ու մ է իր ակ ան աց ն ել մ ի ա յ ն ն ա խ ա պ ե ս տր ա մ ադր վ ած ճ ար տար ապե տա շ ի ն ար ար ակ ան փաս տաթղ թ եր ի հ ի մ ան վր ա, ի ն ք ն ակ ա մ կ առ ու ց ապատ մ ան օր ի ն ակ ան աց մ ան իր ավ ա չ ա փ ու թ յ ու ն ը վ ի ճ ար կ ե լ ի է, որ ի ց ե լ ն ե լ ո վ առ ա ջ ար կ վ ու մ է բ ա ց առ ե լ ի ն ք ն ակ ա մ կ առ ու ց ապատ մ ան օր ի ն ակ ան աց ու մ ը:

3.2.2. Տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման և փորձաքննության գործընթացը

Երևանի ներկայիս կառուցապատման ու սուբստրուկտուրայի նկատմամբ տարածքի քաղաքաշինական արժեքի նվազման միտումը, ինչը մասամբ պայմանավորված է նաև գործող տարածական պլանավորման փաստաթղթերի ոչ լիարժեքությամբ, ինչպես նաև դրանցով ամրագրված պայմանների հաճախակի խախտումներով: Ուստի դրանց մշակման կարգերի և բովանդակային կազմի վերանայումը և կատարելագործումը քաղաքաշինության բնագավառի առաջնային հրատապության խնդիրներից է:

Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կատարելագործման առաջարկվող ուղղությունները ներառում են.

- գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծերի մշակման՝ նպատակային և գործառնական գոտիների կազմման, կառուցապատման հարկայնության և խտության տեղաբաշխման և փորձաքննության մեթոդներ,
- քաղաքի վարչական շրջանների համաչափ քաղաքաշինական զարգացման և կառուցապատման չափորոշիչների մշակման մեթոդներ,
- քաղաքաշինական նախագծման և վերլուծությունների իրականացման մեթոդաբանության և գործիքակազմի կատարելագործման առաջարկներ:

Երևանի տարածքների տարբեր քաղաքաշինական արժեքավորության գոտիների քարտեզը և դրա բաղադրիչները կարող են կիրառվել գլխավոր հատակագծերի, գոտևորման նախագծերի մշակման, բնակավայրերի պատմամշակութային հիմնավորումների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության գոտիների, բնության հատուկ պահպանվող տարածքների նախագծերի, լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն, գործառնական այլ համակարգերի տարածքային կազմակերպման, ինչպես նաև արտադրական կարողությունների, ինժեներական, տրանսպորտային, կոմունալ և սոցիալական ենթակառուցվածքների տեղաբաշխման նախագծերի մշակման գործընթացներում:

Գլխավոր հատակագծի մշակումը անհրաժեշտ է կատարել նախագծում-ըստ առաջարկվող մեթոդաբանության վերլուծության և ներքին գործարկում-արժևորում փուլերով: Գլխավոր հատակագծի մշակման փուլում արժեքի որոշման մեթոդաբանության կիրառումը կարող է նպաստել քաղաքային տարածքների առավել նպաստավոր օգտագործմանը: Թե՛ փողոցային ցանցի զարգացման և ընդլայնման, թե՛ գոտևորման նախագծերի մշակման փուլերում համապատասխան վերլուծության և ներքին գործարկումը թույլ կտա արժևորել նախագծային լուծումները: Փողոցատրանսպորտային ցանցի նախագծման փուլում, ունենալով համապատասխան տվյալներ ցանցի հանգույցների կենտրոնականության արժեքի վերաբերյալ, կարելի է կատարել ավելի նպաստավոր գործարկման գոտևորում:

Երևանի տարածքների ըստ քաղաքաշինական արժեքի դասակարգման ներկայացված մոդելը հաշվի է առնում յուրաքանչյուր հանգույցի քաղաքաշինական պոտենցիալը՝ համակարգում դրա տեղադիրքով պայմանավորված հնարավոր առավելությունները այլ տարածքների նկատմամբ: Ուստի գոտևորման նախագծերի մշակման գործընթացում տեղային բարձր կենտրոնականության տարածքները կարող են ընդունվել որպես քաղաքի ենթակենտրոնների ձևավորման վայրեր: Դրանք կհանդիսանան վարչական շրջանների կենտրոնները և կվերածվեն հասարակական սպասարկման և ժամանցի վայրերի: Այստեղ կարող են կազմակերպվել կառուցվածքահատակագծային և հորինվածքային հանգույցներ, ինչպես նաև տեղակայվել համաքաղաքային նշանակության օբյեկտներ՝ դրանց խրախուսման մեթոդների առկայության պարագայում: Քաղաքի վարչական շրջանների զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է կազմակերպել նաև կապեր՝ դուրս բերված տեղային բարձր ինտեգրվածության հանգույցների միջև: Հաշվի առնելով տարածքի հետիոտնային գրավչության բարձրացման անհրաժեշտությունը տարածքի քաղաքաշինական արժեքի բարձրացման համար՝ այդ տարածքները կարող են կապվել հետիոտնային բուլվարներով, որտեղ և կարող են տեղակայվել բարձր կարգավիճակի հասարակական նշանակության

հաստատություններ: Նշված հաստատությունների կուլտակման հանգույցների դուրսբերման նպատակով անհրաժեշտ է հաշվարկել դրանց կենտրոնացումը և հաճախել իրական վիճակագրական տվյալների ներդրման միջոցով դուրս բերել առավել բարձր կարգավիճակի օբյեկտների տարածքները:

Ըստ գործող նորմերի՝ տարածքի քաղաքաշինական արժեքը պայմանավորված է նաև հասարակական նշանակության օբյեկտների հագեցվածությամբ, ինչից հետևում է, որ խառը կառուցապատման գոտին ավելի արժեքավոր է բնակելի կառուցապատման գոտու համեմատ: Ուստի տարածքի առավել նպաստավոր օգտագործման համար անհրաժեշտ է բնակելի կառուցապատման գոտիները վերածել խառը կառուցապատման գոտիների:

Ներկայիս քաղաքաշինական վերլուծության մեթոդների զարգացումը թույլ է տալիս ոչ միայն գնահատել առկա քաղաքաշինական իրավիճակը, այլ նաև միջավայրում նախատեսվող փոփոխությունները: Դրա համար միջոց են հանդիսանում ԱՏՀ-ը: Չափի առնելով այն հանգամաքը, որ բարձր ճշգրտության ԱՏՀ տվյալների ձեռքբերումը կապված է մեծ ֆինանսների հետ, դրանց կիրառումը փոքրածավալ կառուցապատման ծրագրերի դեպքում հիմնավորված չէ, սակայն երկարաժամկետ քաղաքաշինական ծրագրերի մշակման և արժևորման նպատակով դրանց կիրառումն արդարացված է: ԱՏՀ միջոցով ձեռք բերվող բարձր ճշտության արբանյակային նկարների և եռաչափ մոդելների առկայությունը թույլ կտա կատարել քաղաքային միջավայրի տարատեսակ տարրերի դասակարգում, դրանց հաշվեկշիռների և կառուցապատված տարածքներում տեսադաշտերի կազմում, քաղաքում կենսագործունեության կազմակերպման օրինաչափությունների դուրսբերում: Այս տվյալները կարող են օգտագործվել տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման փուլում՝ քաղաքի զարգացման ուղղությունների ամրագրման, իսկ փորձաքննության փուլում՝ քաղաքաշինական վերլուծության ոլորտների գործարկման միջոցով դրանց արժևորման համար:

Քաղաքի փողոցատրանսպորտային ցանցի առանձնահատկություններից ելնելով՝ անհրաժեշտ է սահմանել

կառուցվածքային արժեքի նվազագույն չափ բոլոր նախատեսվող փողոցների համար՝ կախված դրանց նշանակությունից, ինչպես նաև գնահատել դրանց առկայությունն պայմաններում հարակից փողոցային ցանցի արժեքի փոփոխության սահմանները՝ նախատեսվող ծրագրերի արդյունավետությանն արժևորելու նպատակով:

Գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծերի փորձաքննության տեսակներն անհրաժեշտ է համալրել փողոցատրանսպորտային ցանցի կառուցվածքային փորձաքննությամբ: Նման փորձաքննությունը հիմնված է տարածքային սինտեքսի չափումների վրա: Դրա նպատակը ցանցի կառուցվածքային առանձնահատկությունների դուրսբերումն ու գնահատումն է:

3.2.3. Քաղաքային տարածքների քաղաքաշինական կանոնակարգման և րացուցիչ պայմանները

Ուսումնասիրությունն ի հայտ է բերում նաև երևանում կատարվող կառուցապատման ավելի փոքրածավալ խնդիրներ, որոնց կանոնակարգումը բխում է բարենպաստ քաղաքային միջավայրի ձևավորման անհրաժեշտությունից: Ստորև դուրս են բերվել քաղաքաշինական բարձրարժեք տարածքներում ճարտարապետաշինարարական փաստաթղթերի ձևակերպման, կառուցապատման և գովազդի կարգավորման խնդիրները, որոնք խմբավորվել են ըստ երկու տեսակի՝ կարգավորման ենթակա և արգելվող (Հավելված 24-26):

Դրանք են .

- կառուցապատման հարկայնություն,
- փոքրածավալ և անկանոն հատակագծային կառուցվածքի կառուցապատում,
- ճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի վերակառուցում,
- քաղաքում գովազդի տեղակայում:

Քաղաքի կենտրոնում բարձրահարկ կառուցապատումը դրա պատմական միջավայրի աղավաղման հիմնական պատճառներից է: Այն

առաջ անալոզ դեռևս խորհրդային ժամանակաշրջանում՝ 1950-ականներին, ներկայումս էլ կրում է շարունակական բնույթ: Գործնականում հարկայնության սահմանափակման միակ միջոցը գործող նորմատիվառեխնիկական փաստաթղթերն են, որոնց պահանջները ոչ միշտ են պահպանվում: Խնդրի կարգավորումը հնարավոր է ըստ տեղանքի կառուցապատման առանձնահատկությունների օպտիմալ հարկայնության հաշվարկման ճշգրիտ մեթոդների ներդրման պարագայում: Առաջարկվում է տարածքում կառուցապատման թույլատրելի հարկայնությունը սահմանել կառուցապատման նկատմամբ եռաչափ տեսադաշտերի կազմման միջոցով:

Առենախոսության երկրորդ գլխում երևանի ներկայիս կառուցապատման ուսումնասիրությունն ի հայտ բերեց փոքրածավալ անկանոն կառուցապատման միտումը ինչը հանգեցնում է անկանոն քաղաքային միջավայրի ձևավորմանը և չի ապահովում տվյալ տարածքի սպասարկման կազմակերպումը, ինչպես նաև գուրկ է որևէ ճարտարապետական արժեքից: Ուստի կառուցապատման համալիր ծրագրերի առկայության պայմաններում փոքրածավալ անհատական ներդրումները հնարավոր է համախմբել համալիր ծրագրերի մեջ: Ըստ ծրագրերի էլ անհրաժեշտ է մշակել նախագծման թույլտվություններ, որոնք կտրամադրվեն աճուրդային կարգով անհատկառուցապատողներին կամ կառուցապատողների խմբին:

Փոքրածավալ կառուցապատման արգելման համար անհրաժեշտ է սահմանել հողահատկացման նվազագույն մակերես, ինչպես նաև կանոնակարգված հողահատկացումների սխեմա: Ներկա իրավիճակի ուսումնասիրությունն ի հայտ է բերում անկանոն հողահատկացումների միտումը: Դա պայմանավորված է նաև դեռևս խորհրդային ժամանակներում կատարված անկանոն հողազավթումներով, որոնց սահմանները չեն ճշգրտվել հետագայում՝ օրինականացման ընթացքում: Դրա հետևանքով խախտվում է այլ հողերի դասավորությունը: Կանոնակարգված հողահատկացման սխեմայի բացակայությունը հանգեցնում է կառուցապատման փուլում անկանոն միջավայրի ձևավորմանը, հողերի վերադրմանը, ինչը քաղաքային միջավայրի աղավաղման հետ

մեկ տեղ պատճառ է դառնում նաև բազմաթիվ դատական գույքային վեճերի:

Քաղաքային միջավայրում շենքերի ճարտարապետական հորինվածքի պահպանման հիմնական նախապայմանը անկանոն վերակառուցումների բացառումն է: Ներկայիս Երևանում գրեթե առկա է շենք, որ չունենա դրա ճարտարապետական հորինվածքը աղավաղող վերակառուցումներ, վերնակառույցներ, կցակառուցումներ, բացվածքների պարփակումներ և այլ տեսակի ճարտարապետաչինարարական տեսակետից չհիմնավորված միջամտություններ: Եզակի դեպքերում դրանց իրականացումը նախապես մշակված ընդհանուր լուծմամբ մասամբ արդարացված է՝ գործող նորմերի պահպանման պարագայում, սակայն ներկայիս Երևանում դրանք իրականացվում են տեղային լուծումներով՝ առանց հաշվի առնելու շենքերի ճարտարապետական հորինվածքը:

Խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է սահմանել հատուկ պահպանության գոտիներ քաղաքի պատմական կենտրոնում և ճարտարապետական արժեք ներկայացնող կառուցապատումների տարածքներում, արգելել շենքերի ծավալային փոփոխության հանգեցնող վերակառուցումները, ինչպես նաև խտացնել վերահսկողությունը ապօրինի շինարարության նկատմամբ: Խնդրի կարգավորումը պահանջում է նաև ոչ հուշարձան շենքերի հորինվածքի գնահատման միջոցներ և դրանց արդյունքների հիման վրա հնարավորության պարագայում, վերակառուցման համալիր նախագծերի մշակում:

Քաղաքային միջավայրում շենքերի արտաքին հարդարման և դրանց առանձին տարրերի գուևային լուծումների կարգավորումը նույնպես ենթակա է կանոնակարգման: Երևանի պարագայում առկա է քաղաքային միջավայրում թույլատրելի գուևային լուծումների ցանկ, ինչը հանգեցնում է շենքերի գլխավոր ճակատների՝ տարաբնույթ հարդարման նյութերով երեսապատմանը, տարատեսակ գովազդային կրիչների և կամայական գուևային լուծմամբ լուսամուտների տեղադրմանը: Դրանք առավել ակնառու են քաղաքի կենտրոնում՝ ճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի վրա:

Հարցի լուծումը պահանջում է քաղաքաշինական բարձրարժեք տարածքներում թույլատրելի գունապնակի սահմանում՝ ըստ կառուցապատման գունային առանձնահատկությունների, փողոցների հետիոտնային շարժման ուղիներում, կանաչ գոտիներում, խաչմերուկներում գովազդային վահանակների տեղադրման արգելում և առաջին հարկերում տեղակայված հասարակական նշանակության օբյեկտների ճակատների ձևավորման մեկ ընդհանուր լուծմամբ ձևի սահմանում:

3.3. ՔԱՂԱՔԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ ԵՎ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նույնիսկ քաղաքաշինական բարձրարժեք տարածքներում գործող օրենսդրական և նորմատիվային փաստաթղթերի առաջարկվող կատարելագործման պարագայում մնում են լրացուցիչ խնդիրներ, որոնց կարգավորումը բխում է բարենպաստ քաղաքային միջավայրի կազմակերպման և քաղաքաշինության բնագավառում հասարակության շահերի լիարժեք ներկայացման անհրաժեշտությունից: Ստորև՝ ատենախոսության տվյալ բաժնում, անդրադարձ է կատարվում երևանում մարդու կողմից տեսողական ընկալման հիման վրա քաղաքային միջավայրի արժևորմանը, ինչպես նաև քաղաքաշինության բնագավառում քաղաքացիական հասարակության շահերի և կարծիքի ներկայացման մեթոդների ներդրման ուղղությունների բացահայտմանը:

3.3.1. Քաղաքացիական հասարակություն

Լիարժեք քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի և քաղաքաշինության բնագավառում գործող օրենքների հետ մեկտեղ, բնակության համար բարենպաստ քաղաքային միջավայրի կազմավորումն ապահովելու նպատակով, անհրաժեշտ է սահմանել քաղաքաշինության բնագավառում քաղաքացիական հասարակության մասնակցությունը և նրա կարծիքի արտահայտումն ապահովող միջոցներ և դրանք ամրագրել համապատասխան ընթացակարգերում: Դա թույլ կտա կառուցապատման ծրագրերի իրականացման

գործընթացում հավասարակշռել պետություն-կառուցապատող - հասարակություն շահերը:

Ըստ ավստրիացի ճարտարապետ և արվեստագետ Ֆրիդրիխ Յունգարտվասերի՝ մարդն ունի հինգ մաշկ. Էպիդերմոսը՝ իր բնական մաշկը, շորերը, տուներ, ինքնությունը և երկրային մաշկը: Նրա տեսության համաձայն՝ սոցիալական միջավայրը մարդու չորրորդ մաշկն է և կապված է շրջակա միջավայրի հետ [105]: “Սոցիալական միջավայրը տարածվում է համայնքի բոլոր խմբերի վրա, որոնք տնօրինում են դրա կյանքը” [106]: Ասվածը վերստին հավաստում է շրջակա միջավայրի ձևավորման մեջ հասարակության մասնակցության անհրաժեշտությունը:

Յարգի կարգավորման համար առաջարկվում է սահմանել «քաղաքային» և «տեղային» նշանակության կառուցապատման ծրագրեր հասկացությունները ու դրանց չափանիշները, և ապահովել հասարակության մասնակցությունը դրանց ընդունման և իրականացման ընթացակարգերում:

Քաղաքային նշանակության կառուցապատման ծրագրերի ցանկում կարող են դասվել քաղաքային արժարժեք տարածքներում նախատեսվող մեծածավալ կառուցապատումները, համաքաղաքային նշանակության օբյեկտների քանդման, վերակառուցման, նորերի կառուցման, հանրապետական և տեղական նշանակության հուշարձան-շենքերի վերակառուցման և/կամ քանդման աշխատանքները:

Տեղային նշանակության կառուցապատման ծրագրերի ցանկում կարող են դասվել բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքներում, դրանց հարող տարածքներում կառուցապատումները:

Քաղաքային կամ տեղային նշանակության կառուցապատման ծրագրերի ցանկում դասվելու պարագայում անհրաժեշտ է կազմակերպել հասարակական քննարկումներ, որին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ կողմերը և որոշումներն ընդունել վերջիններիս փոխհամաձայնության պարագայում: Մասնակիցների կողմից համապատասխան իրավական հիմնավորմամբ

առաջարկությունները և դիտողությունները կարող են հիմք հանդիսանալ ծրագրերի լրամշակման կամ չեղարկման համար:

3.3.2. Կառուցվածքային և հորինվածքային հանգույցներ

Քաղաքաշինական բարձրարժեք տարածքների պահպանման մեխանիզմների մշակման շրջանակներում ուսումնասիրվել և գնահատվել են Երևանի քաղաքաշինական դոմինանտների տեսադաշտերը: Կիրառվել է իզոլիստների մեթոդը դոմինանտի հարակից տարածքներում տարերայնորեն ձևավորված, փոքրածավալ կառուցապատման և դրաբացակայության պայմաններում տեսողական ընկալման դաշտերի կազմման և այդ դաշտերում հնարավոր խոչընդոտների բացահայտման նպատակով: Որպես իզոլիստի հատակագիծ՝ ընդունվել է դոմինանտի պարագիծը, որի ուղղությամբ տեղակայված դիտակետերից կառուցվել են իզոլիստները՝ հաշվի առնելով փոխադարձ տեսանելիության սկզբունքը: Չափարկվել են տեսադաշտերի կազմման համար օգտագործված իզոլիստների մակերեսները, պարագծերը և դրանց կոմպակտության ընդհանուր և միջին թվաքանակային արժեքները:

Քաղաքաշինական դոմինանտը ճարտարապետական առանձին կամ մի քանի օբյեկտների համախումբ է, որը շեշտադրում է քաղաքաշինական համակարգի հորինվածքային լուծումները, առանձնանում և ձևավորում է քաղաքային միջավայրի ուրվապատկերը, ունի գեղագիտական-տեսողական հատուկ կարևորություն [27]: Վերջինից ելնելով՝ կարելի է հավաստել Չայաստանի օպերայի և ֆալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի դոմինանտլիները փաստը (այսուհետ՝ դոմինանտ):

Դոմինանտը, տեղակայված լինելով քաղաքի համար առանցք հանդիսացող հյուսիս-հարավ ուղղության վրա, իր հորինվածքի և շրջակա տարածքի միջոցով համարժեք ընկալելի է գրեթե բոլոր կողմերից: Վերջին քսանամյակում դոմինանտի հարակից տարածքը կառուցապատվել է սրճարաններով և հասարակական սպասարկման ցածրահարկ, հիմնականում միահարկ և այլ շինություններով, որոնք հիմնականում տեղակայվել են դրան հարակից կանաչ գոտում: Ուսումնասիրությունը նպատակ ունի գնահատել մինչ քննարկվող կառուցապատումը և դրանից հետո դոմինանտի տեսադաշտի

փոփոխությունները և արժևորել տարածքն ըստ տեսադաշտի կառուցվածքային հատկանիշների:

AutoCAD համակարգչային ծրագրում դիտարկվող դոմինանտի տեսադաշտում տեղանշվել է դրա շուրջը գտնվող ընդհանուր օգտագործման կանաչ տարածքում տեղակայված կառուցապատումը: Կառուցապատմամբ և առանց դրա երկու գծագրերը ներբեռնվել են SYNTAX 2D տեսանելիության վերլուծման համակարգչային ծրագիր: Վերլուծությունների գործարկմամբ չափվել են երկու տարբերակներում տեսադաշտերի սահմանները, մակերեսները և պարագծերի կոմպակտությունը: Դրանց համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ կառուցապատման հետևանքով դոմինանտի տեսադաշտի մակերեսը նվազել է գրեթե 50% [107]: Կառուցապատման հետևանքով փակվել են դրա ընկալման դիտակետերը Մաշտոցի պողոտայի և Թումանյան փողոցի խաչմերուկից, ինչպես նաև նվազել է տեսադաշտը Սայաթ-Նովա և Թումանյան փողոցներից: Փոխվել է նաև դոմինանտի տեսադաշտի կոմպակտության արժեքը. փոքրածավալ կառուցապատումն առաջացնում է բեկումներ տեսադաշտի ուրվագծում, ինչը աղավաղում է դրա ընկալման պատկերը (Յավելված 27):

Տեսադաշտի նվազման պատճառ էն նաև ոչ ճիշտ տեղակայված և համապատասխան մասշտաբից զուրկ ճարտարապետական փոքր ձևերը: Չնայած այն հանգամանքին, որ ճարտարապետական փոքր ձևերը չեն նպաստում տարածքի քաղաքաշինական արժեքի ձևավորմանը, դրանց սխալ տեղակայումը հանգեցնում է տարածքի քաղաքաշինական արժեքի նվազմանը և աղավաղում է այն: Հարցը հիմնականում վերաբերվում է գովազդային և տեղեկատվական կրիչներին և վահանակներին: Տարածքի քաղաքաշինական արժեքի նվազումը կարող է առաջանալ երկու պարագայում՝ շենքերի և շինությունների տեսադաշտերում արգելքների և քաղաքի կենսագործունեության խոչընդոտման ձևերով:

Ուստի կառուցապատման հետ մեկտեղ անդրադարձ է կատարվել նաև դիտարկվող տարածքներում ճարտարապետական փոքր ձևերի տեղակայման հարցին: Ուսումնասիրված ճարտարապետական փոքր ձևերն են փողոցային լուսավորությունը, գովազդային

վահանակները, նստարանները, աղբամանները, բարեկարգման ծավալային ձևերը: Գնահատման շրջանակներում հաշվի չեն առնվել փողոցային կահավորման գունային և նյութական լուծումները:

Քաղաքային միջավայրում գովազդը, ըստ տեղակայման, բաժանվել է երկու հիմնական տեսակի.

- կառուցապատման վրատեղակայված,
- ընդհանուր օգտագործման տարածքներում:

Առաջինի պարագայում հաճախ մեծածավալ գովազդային վահանակների տեղակայումը շենքերի վրա ծածկում է դրանց արտաքին տեսքը, և շենքը վերածվում է գովազդի կրիչի, ինչպես, օրինակ, Մոսկովյան փողոցի հ.20 շենքի պարագայում: Հարցը առավել խնդրահարույց է գովազդային վահանակների ընդհանուր օգտագործման տարածքներում տեղադրման դեպքում: Այս պարագայում դրա սխալ տեղակայումը կարող է խոչընդոտել հետիոտնային հոսքերի շարժումը և արգելքներ առաջացնել վարորդների տեսադաշտում (Հավելված 26):

Վերջին շրջանում երևանում նկատվում է գովազդի կանոնակարգման որոշակի միտում: Թերևս հիմնական առաջընթացը փողոցների երկայնքով տեղադրված մեծածավալ գովազդային վահանակների ապամոնտաժումն էր: Դրանց տեղակայումը կարող էր նպատակային լինել մայրուղիների երկայնքով, սակայն քաղաքային միջավայրում դրանք ստեղծում էին ավելորդ արգելք հետիոտնի տեսադաշտում: Դրա հետ մեկտեղ դրանց փոխարինած ավելի փոքրածավալ գովազդային կրիչներն առաջացնում են նոր խնդիրներ:

Ներկայումս փողոցների մայթերին տարատեսակ գովազդային վահանակների տեղակայումը կրում է համատարած բնույթ: Դրանք տեղակայվում են մայթերի միջնամասերում, եզրերին, կանաչ գոտիներում, խաչմերուկներում՝ առանց որևէ օրինաչափության և հաշվի չառնելով որևէ բան: Դրանց տեղակայումը մայթերին՝ հետիոտնային ուղիների բավարար լայնության բացակայության պայմաններում, ստեղծում է խոչընդոտներ հետիոտնային շարժման համար: Խաչմերուկներում գովազդային վահանակների և մեծածավալ հեռուստաէկրանների տեղակայումը ստեղծում է արգելք

վարորդների տեսադաշտում, ինչպես նաև դրանց տեղակայումը հուշարձան շենք-շինությունների տեսադաշտերում խոչընդոտում է դրանց հորինվածքի ընկալմանը:

Քաղաքաշինական դոմինանտների տարածքներում գնահատվել են ճարտարապետական փոքր ձևերի ֆիզիկական չափերի հնարավոր խախտումները, տեղադիրքի նպատակահարմարությունը, տեղադրության և բացակայության պայմաններում տեսադաշտերի նվազման հնարավորությունները: Գնահատումը կատարվել է իզոպիստների մեթոդով՝ տեսանելիության վերլուծությունների գործարկման միջոցով: Չափումները ցույց են տալիս, որ առանց գովազդի՝ տեսադաշտի սահմաններն ավելանում են գրեթե 10%-ով:

Տեսանելիության գնահատում կարող է կատարվել նաև փողոցների երկայնքով ցանկացած շենքի և բնակարանի համար՝ դրա լուսային բացվածքներից բացվող տեսադաշտի կազմման, տեսադաշտի ընդարձակության և դրա բովանդակության ուսումնասիրմամբ՝ գեղագիտական հատկանիշների դուրսբերման միջոցով: Փողոցների երկայնքով տեսադաշտերի արժևորման համար չափանիշ կարող են ընդունվել համաքաղաքային նշանակության դոմինանտները:

Քաղաքային տարածքների կառուցապատման առանցքային խնդիրներից է օպտիմալ հարկայնության հաշվարկը կառուցապատված միջավայրի նկատմամբ, որը չունի հաշվարկման հստակ մեթոդ: Տեսանելիության վերլուծությունները կարող են հիմք հանդիսանալ կառուցապատման հարկայնության սահմանման համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքում տարբեր հարկայնության կառուցապատումների համադրելիության միակ միջոցը ակնադիտական արժևորումն է, որը նույնիսկ փորձագիտական գնահատման պարագայում հաճախ կրում է սուբյեկտիվ բնույթ, տեսադաշտերի կազմումը կարող է լինել հարցի օբյեկտիվ լուծում: Ուստի առաջարկվում է խնդրի կարգավորում՝ սահմանված հաշվարկային մեթոդաբանությամբ եռաչափ տեսադաշտերի կազմման միջոցով:

Երևանի կառուցապատման հարկայնության կարգավորման նպատակով որպես հենակետ առաջարկվում է ընդունել թամանյանական և մինչթամանյանական շրջանների կառուցապատումը

շեշտը դնելով քաղաքաշինական դոմինանտ կառույցների վրա: Դրանց շուրջ եռաչափ տեսադաշտերի կազմման շնորհիվ հնարավոր է պարզել դրանցում ներառված բոլոր օբյեկտների ցանկը: Նոր կառուցապատման հարկայնություները անհրաժեշտ է սահմանել այնպես, որ այն չխոչընդոտի դոմինանտ տեսանելիությունը:

Վերոնշյալ մեթոդով հարկայնության սահմանման տարբերակ է օբյեկտի շուրջը կառուցված իզոպիստի ամենահեռու գագաթներից կազմված երկրորդական իզոպիստիների հարթությունների և օբյեկտի հատման մակերևույթի դիտարկումը, որը կարող է լինել առավել ագույն բարձրություն կառուցապատման համար: Այսպիսով, ստացվում է սանդղակ, ըստ որի՝ որքան հեռանում ենք օբյեկտից, այնքան ավելանում է նախատեսվող կառուցապատման թույլատրելի հարկայնությունը:

Օբյեկտի և նախատեսվող շինության միջև ռելիեֆային մեծ անկումների դեպքում առաջարկվում է սահմանել առավել ագույն հեռավորություն, որի պարագայում մեթոդի միջոցով հարկայնության հաշվարկը կարող է անտեսվել: Օրինակ Օպերայի նկատմամբ կառուցված տեսանելիության հարթության առավել ագույն հարկայնության սահմանները կարող են անտեսվել Սարալ անջիբլրին տեղակայված կառուցապատման նկատմամբ՝ հաշվի առնելով տարածքի բազմապատիկ անգամ բարձրադիր դիրքը և դրա հեռացվածությունը օբյեկտից:

3.3.3. Համալիր համապարփակ մոդել

Սահմանվել են ուսումնասիրության արդյունքների գործնական կիրառման հանձնարարականներ և առաջարկություններ՝ քաղաքաշինական բարձրարժեք տարածքների կանոնակարգման ուղղությամբ: Դրանք կարող են ամրագրվել բնագավառի նորմատիվատեխնիկական և տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման գործընթացներում և ընթացակարգերում:

Կազմվել է քաղաքաշինական նախագծման տարբեր մակարդակներում երևանի տարածքների տարբեր քաղաքաշինական արժեքավորության գոտիների քարտեզի կիրառման մոդել: Քարտեզը դիտարկվել է ըստ դրա հիմնական բաղադրիչների՝ տարրերի և

կապերի արժեքային քարտեզների, քաղաքաշինական նախագծման փուլերում դրանցից յուրաքանչյուրի օգտագործման նպատակով (Յավելված 28):

Քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի կազմում՝ կապերի արժեքային քարտեզի հիման վրա առաջարկվում է մշակել՝

- համայնքի տարածքային զարգացման հատակագիծը,
- հողերի օգտագործման սխեման:

Գոտնորման նախագծի կազմում՝ տարրերի արժեքային քարտեզի հիման վրա առաջարկվում է մշակել՝

- բնակավայրի զարգացման համար անհրաժեշտ հողատարածքներն ու դրանց կառուցապատման հերթականությունը,
- տարածքի գործառնական գոտնորումը՝ ըստ օգտագործման տեսակների,
- ճանապարհային հաղորդակցուղիների ցանցը, դասակարգումը, տրանսպորտային կառույցները,
- մշակութային, կենցաղային և կոմունալ սպասարկման ենթակառուցվածքը՝ սպասարկման գոտիների սահմաններով առաջարկվում է մշակել կապերի արժեքային քարտեզի հիման վրա,
- տարածքի ծավալատարածական գոտնորումը՝ ըստ կառուցապատման չափորոշիչների տեսակների,
- բնակավայրի կազմավորված քաղաքաշինական միջավայրի վերակառուցման, արդիականացման, կառուցապատման առկա ռեզերվների օգտագործման հնարավորությունները,
- տարածքի կառուցապատումը կարգավորող նախագծային կարմիր, կառուցապատման և այլ գծերը, պատմամշակութային հուշարձանների, ինչպես նաև բնություն հատուկ պահպանվող տարածքների պահպանության գոտիները,
- պատմամշակութային հուշարձանների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության գոտիները,
- քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների սահմանները, դրա առկայություն դեպքում:

Պատմամշակույթային արժեք ներկայացնող և/կամ համաքաղաքային նշանակության օբյեկտների և տարածքների հանգույցներում գոտևորման նախագծի վերոնշյալ կետերի մշակման փուլում առաջարկվում է լրացուցիչ կատարել տեսանելիության վերլուծությունների գործարկում:

Ճարտարապետաշինարարական փաստաթղթերի մշակման և տրամադրման փուլում քաղաքաշինական բարձրարժեք տարածքներում առանձին շինությունների կամ համալիրների ծավալատարածական չափերը և տեղակայումը, քաղաքաշինական արժեք ներկայացնող կառուցապատման նկատմամբ, առաջարկվում է մշակել տեսանելիության վերլուծությունների միջոցով: Վերլուծությունների գործընթացում առաջարկվում է հաշվի առնել նաև փոքր ճարտարապետական ձևերը՝ դրանց տեղակայումը պատմաճարտարապետական և մշակույթային արժեք ներկայացնող օբյեկտների և տարածքների հանգույցներում կարգավորելու նպատակով:

Առաջարկվում է ապահովել քաղաքացիական հասարակության մասնակցությունը քաղաքաշինական բարձրարժեք տարածքներում համաքաղաքային նշանակության քաղաքաշինական ծրագրերի մշակման փուլում:

Վերոնշյալ կարգավորումների հիման վրա կատարվել են համապատասխան դիտարկումներ, և սահմանվել են տեղային նշանակության հանձնարարականներ և առաջարկություններ: Քաղաքի Կենտրոնի պարագայում, ունենալով նախապես մշակված գլխավոր հատակագծերի հիման վրա կազմավորված տարածքներ և դրանց ձևավորման օրինաչափություններ, առկա է հենք՝ քաղաքի հետագա զարգացման համար, միևնույն ժամանակ առկա են նաև դրանով պայմանավորված լրացուցիչ սահմանափակումներ:

Երևանի Կենտրոնի տարածքների քաղաքաշինական արժեքի պահպանումը և աճը ապահովելու նպատակով առաջարկվում է.

Ըստ առաջարկվող հայեցակարգի՝

- տարածքի քաղաքաշինական արժեքի համալիր գնահատման մեթոդաբանության և տարածքների տարբեր քաղաքաշինական արժեքավորության գոտիների քարտեզի ներդրում,

- քաղաքի կենտրոնում կառուցապատման հարկայնության հաշվարկում՝ եռաչափ տեսադաշտերի կազմման միջոցով,
- պատմաճարտարապետական և մշակութային արժեքներ կայացնող օբյեկտների և տարածքների հանգույցներում, տեսադաշտերում և քաղաքաշինական բարձրարժեք տարածքներում փոքրածավալ կառուցապատման արգելում,
- գովազդի տեղադրման կարգավորում,
- կենտրոն վարչական շրջանում թամանյանական շրջանի շենքերի ծավալատարածական կառուցվածքի փոփոխությանը հանգեցնող վերականգնման բացառում, կցական շենքերի, վերնական շենքերի, բացվածքների պարփակման, երեսպատման աշխատանքների արգելում,
- մայթերի և դրանց կանաչ տարածքներում կառուցապատման արգելում,
- կենտրոն վարչական շրջանում քաղաքային և տեղային նշանակության կառուցապատման ծրագրերի շուրջ հասարակական քննարկումների կազմակերպում,
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրավչության շարժման հանգույցների կազմակերպում:

Վարչական շրջանների բարձր ինտեգրվածության հանգույցներում ենթակենտրոնների ձևավորում: Կենտրոնի և ենթակենտրոնների միջև մատչելի կապերի ստեղծում: Ենթակենտրոններում բարձր կարգավիճակի հասարակական նշանակության օբյեկտների և համաքաղաքային նշանակության օբյեկտների, օրինակ, վարչական շենքերի, տեղակայում:

Կենտրոնի և ենթակենտրոնների միջև կապերի կազմակերպման օրինակ կարող է լինել քաղաքի հյուսիս-հարավ առանցքի ուղղությամբ հանգստի գոտու կազմակերպումը՝ և առանցքի միացումը Արաբկիրի այգուն: Դա կնպաստի հետիոտնային շարժման ակտիվացմանը, վարչական շրջանի զարգացմանը: Յառաջի առնելով առանցքի դոմինանտ կարգավիճակը քաղաքի հատակագծային կառուցվածքում՝ դրա շարունակումը Կենտրոնից դուրս և դրա ուղղությամբ հետիոտնային բուլվարի կազմակերպումը կարող է բարձրացնել տարածքի քաղաքաշինական արժեքը:

Վարչակազմի շրջանների գարգացման նպատակով առաջարկվում է համաքաղաքային նշանակության օբյեկտների տեղաբաշխում կենտրոնից դուրս: Վարչակազմի շրջանները կարող են լինել ուսանողական թաղամասերի ձևավորման, վարչակազմի կենտրոնների կազմակերպման, համաքաղաքային հասարակական նշանակության օբյեկտների տեղակայման հանգույցներ: Դակնպատի Կենտրոնի և այլ վարչակազմի շրջանների միջև ներդրումային գրավչության մակարդակի հավասարակշռմանը:

Կենտրոնի հիմնական խնդիրներից է բարձր ներդրումային գրավչությունը, ինչը առաջացնում է կառուցապատման բարձր տոկոսի պահանջարկ՝ հանգեցնելով պատմականորեն ձևավորված տարածքների աղավաղմանը և քաղաքայինական անկանոն միջավայրի ձևավորմանը: Ուստի վարչակազմի շրջաններում քաղաքային ենթակառուցվածքի կազմակերպումը, վերոնշյալ մեխանիզմների միջոցով, կնպաստի Կենտրոնում կառուցապատման տոկոսի և հարկայնության կարգավորմանը, ինչպես նաև վարչակազմի շրջանների քաղաքայինական արժեքի աճին:

Առաջարկվող ուղղությունները անհրաժեշտ է ամրագրել տարածական պլանավորման փաստաթղթերում, դրանց մշակման ընթացակարգերում և օրենսդրական կարգավորման միջոցներում՝ դրանց պարտադիր կիրառման ապահովելու նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՍՏ ԵՐՐՈՐԴ ԳԼԽԻ

1. Երևանի տարածքները դասակարգվել են ըստ քաղաքայինական տարբեր արժեքավորության, իսկ քաղաքայինական բարձրարժեք տարածքները՝ ըստ կենտրոնացման: Սահմանվել են քաղաքի տարածքների պահպանման և գարգացման մեթոդներ և ընթացակարգեր՝ ելնելով դրանց քաղաքայինական արժեքից:
2. Տարածքների քաղաքայինական արժեքից բխող առանձնահատկությունների ուսումնասիրության արդյունքում ձևակերպվել են առաջարկներ գործող տարածական պլանավորման փաստաթղթերի և կարգավորման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ:

3. Մշակվել է քաղաքային տարածքների գնահատման հաշվարկային համալիր մեթոդաբանություն, որը հնարավորություն է ընձեռում ընդհանուր սանդղակի միջոցով գնահատել տարածքի քաղաքաշինական արժեքը:
4. Կարևորվել է քաղաքաշինական բարձրարժեք տարածքներում տեսանելիության հարցը, և առաջարկվել է դրավերահսկման և գնահատման համապատասխան մեթոդաբանություն: Տեսանելիության վերլուծությունների գործարկման միջոցով կազմվել են տեսադաշտեր, որոնք կարող են օգտագործվել քաղաքի ծավալատարածական կառուցվածքի կանոնակարգման նպատակով:
5. Սահմանվել են միջոցներ քաղաքաշինության բնագավառում քաղաքացիական հասարակության դերի բարձրացման ուղղությամբ՝ «քաղաքային» և «տեղային» նշանակության կառուցապատման ծրագրերի սահմանման և դրանց ընդունման ընթացակարգերում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովման միջոցով:

ԵԶՐԱԿԱՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետազոտությունը ամբողջությամբ հիմնավորվել է տարածքի քաղաքաշինական արժեքի՝ ներկայումս ընդունված փորձագիտական գնահատման մոտեցումներից բացի, համակարգային, հաշվարկային մեթոդների կիրառման անհրաժեշտությունը: Դուրս են բերվել քաղաքաշինական բարձրարժեք տարածքների կարգավորման գործող ծրագրային և նորմատիվային փաստաթղթերի կատարելագործման ուղղությունները:
2. Քաղաքաշինական գործունեության տեղական և արտերկրի փորձի, արդի միտումների և վերլուծության մեթոդների հիման վրա բացահայտվել և լրացվել են արժեք ձևավորող գործոնները և բաղադրիչ տարրերը: Մասնավորապես՝ հողի արժեքի գնահատականների, ինժեներական և տրանսպորտային մայրուղային ցանցերի խտության, հասարակական նշանակության օբյեկտներով հագեցվածության, տարածքի ինժեներական նախապատրաստման, ներդրումային գրավչության հետ մեկտեղ առաջարկվել է լրացուցիչ հաշվի առնել պատմա-արտարապետական և մշակութային արժեք ներկայացնող տարածքներն ու օբյեկտները, համաքաղաքային նշանակության օբյեկտները և համալիրները, կազմավորված կառուցվածքահատակագծային և հորինվածքային հանգույցները, բնական համակարգերը և շրջակամիջավայրը:
3. Երևանի պատմական զարգացման հիմնական փուլերի վերլուծության հիման վրա բացահայտվել են անցյալի և ներկայիս քաղաքաշինական բարձրարժեք տարածքների դերը, դրանց փոխակերպման օրինաչափությունները, արժեքի կազմավորման հիմնական գործոնները և չափանիշները: Տարբեր փուլերի համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ քաղաքի աճի համեմատ կտրուկ պակասել է բարձր քաղաքաշինական արժեքի տարածքների տեսակարար կշիռը՝ 1856-1924թթ.՝ 5.9%, 1924-1951թթ. 12.25%, 1951-1971թթ. 60.4%, 1971-2005թթ. 36%, 2005-2015թթ. 12.7%:
4. Մշակվել և առաջարկվել է տարածքի քաղաքաշինական արժեքի համալիր գնահատման մեթոդաբանություն, որը նախատեսում է

քաղաքաշինական արժեք ձևավորող տարրերի դուրսբերում, որակական և քանակական բնութագրում, գնահատում, արդյունքների համադրում և արժեքային գոտիների սահմանում:

5. Կազմվել են երևանի տարածքների տարբեր քաղաքաշինական արժեքավորության գոտիների, քաղաքաշինական բարձրարժեք տարածքների կենտրոնացման և քաղաքի կենտրոնից մետոքական և տոպոլոգիական հեռացվածությունների քարտեզներ՝ տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման բոլոր մակարդակներում օգտագործման և քաղաքի հողերի տարածազննատման քարտեզի ճշգրտման նպատակով:
6. Բացահայտված քաղաքաշինական բարձրարժեք տարածքներում գնահատվել են քաղաքաշինական դոմինանտների դերը և դրանց տեսադաշտերի սահմանների ձևավորման ռեժիմները շրջակա փոքրածավալ կառուցապատման և դրա բացակայության պայմաններում: Երևանի օպերայի շենքի օրինակով կատարված վերլուծությունը ցույց է տվել, որ դրա տեսադաշտը նվազել է մինչև 50%՝ ցածրացնելով տարածքի գեղագիտական արժեքը:
7. Ներկայիս ճարտարապետաշինարարական միտումների հետազոտության արդյունքում ձևակերպվել և խմբավորվել են քաղաքաշինական բարձրարժեք տարածքներում գոյություն ունեցող շենքերի վերակառուցման, նոր շինարարության, գովազդի տեղադրման խնդիրները և սահմանվել են կարգավորման և արգելման ռեժիմներ:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ պետք է արձանագրել տարածքի քաղաքաշինական արժեքի հասկացության բազմակողմանի կիրառման հնարավորությունները և անհրաժեշտությունը հայրենական պրակտիկայում: Առաջարկվող տարածքի քաղաքաշինական արժեքի համալիր գնահատման մեթոդաբանության ներդրումը երևանի և այլ քաղաքների նախագծման գործընթացում կնպաստի քաղաքաշինական գործունեության կանոնակարգմանը և արդի չափանիշներին բավարարող նոր քաղաքային որակների ձևավորմանը: Մշակված մեթոդաբանությունը կարող է կիրառվել տարածքի քաղաքաշինական

արժեքի մշտական մոնիթորինգի և քաղաքաշինական նախագծման բոլոր մակարդակներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ

- [1] Ա.Նիկոյան, “Պատմամշակութային հուշարձանների պահպանության խնդիրները Հայաստանի Հանրապետության պատմականորեն ձևավորված քաղաքների վերակառուցման գործընթացում” Գ.թ. աստեղագիտության, ճարտարապետության և երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, Երևան, 2007. 145 էջ:
- [2] А.Алоян, “Развитие планировочно-коммуникационной структуры центра крупного города,” автореферат диссертации К.а., Градостроительство, Центральный научно-исследовательский и проектный институт по градостроительству, Москва, 1983. 20 стр.
- [3] З.Мамян, “Совершенствование системы зонирования центра города Еревана в современных условиях,” диссертация К.а., Градостроительство, Ереванский государственный университет архитектуры и строительства, Ереван, 2004. 151 стр.
- [4] Ю. Сафарян, Архитектура зданий и сооружений возводимых методом подъема. Ереван: издательство Айастан, 1988. 289 стр.
- [5] Г. Рашидян. Центр Еревана - каким ему быть в будущем. Бюллетень строителей Армении. Ереван. 1999. № 3 (32). С. 13-15
- [6] Ս.Օհանյան, “Երևան քաղաքի կենտրոնի վերակառուցման արդի առանձնահատկությունները,” Գ.թ. աստեղագիտության, Քաղաքաշինության, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, Երևան, 2005. 121 էջ:
- [7] Կ.Բերբերյան, “Երևանի նորագույն ճարտարապետությանը քաղաքային միջավայրում,” Գ.թ. աստեղագիտության, Քաղաքաշինության, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, Երևան, 2012. 164 էջ:
- [8] ՀՀ կառավարություն, «ՀՀ պետական քաղաքաշինական կադաստր», ՀՀԾՆ I-2.03-03, 2003:
- [9] ՀՀ կառավարություն, «Քաղաքաշինության. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում», ՀՀԾՆ 30-01-2014, 2014:
- [10] ՀՀ կառավարություն, որոշում «ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման

- (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին»։ 2003:
- [11] Կ.Ազատյան, «Երևանի առևտրական հիմնարկների և տարածքների ճարտարապետական կազմավորումն արդի պայմաններում», Ճ.թ. ատենախոսություն, Ճարտարապետություն, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, Երևան, 2003. 114 էջ :
- [12] European Community development co-operation, “Consultative Guidelines for Sustainable Urban Development Co-Operation Towards Sustainable Urban Development a Strategic Approach,” 2002. [Առցանց]. Հասանելի: http://www.ucl.ac.uk/dpu-projects/21st_Century/resources/institutional/Pdf/files/Tow_Sust_Urb_EU_Guidelines.pdf. [Մուտք: 05-Հունիս-2015].
- [13] K. Spiekermann, M. Wegener, “Evaluating Urban Sustainability Using Land-Use Transport Interaction Models,” European Journal of Transport and Infrastructure Research, vol. 4, pp. 251–272, 2004.
- [14] H. Kaji, H. Kanegae, K. Ishibashi, N. Hara, “Is Compact City Approach Appropriate as an Urban Development Policy for Cities in Developing Countries?,” 2003. [Առցանց]. Հասանելի: <http://sedac.ciesin.columbia.edu/openmtg/docs/kaji.pdf>. [Մուտք: 17-մայիս-2015].
- [15] M. Neuman, “The Compact City Fallacy,” Journal of Planning Education and Research, 2005. [Առցանց]. Հասանելի: <http://understandtheplan.info/wp-content/uploads/2014/08/The-Compact-City-Fallacy.pdf>. [Մուտք: 16-մայիս-2015].
- [16] Smart Growth Network, International City/County Management Association, and U.S. Environmental Protection Agency, “Getting to Smart Growth: 100 Policies for Implementation,” Development, 2002. [Առցանց]. Հասանելի: <http://www.smartgrowth.org/pdf/gettosg.pdf>. [Մուտք: 18-մայիս-2015].
- [17] G. Knaap, “New Urbanism and Smart Growth: A Few Words from the Academy,” International Regional Science Review, 2005. [Առցանց]. Հասանելի: <http://pdfwww.china-up.com:8080/international/case/case/1570.pdf>. [Մուտք: 16-մայիս-2015].
- [18] Congress for the New urbanism, “Charter of the New Urbanism,” 2000. [Առցանց]. Հասանելի: http://www.cnu.org/sites/files/charter_book.pdf. [Մուտք: 18-May-2015].

- [19] “The principles of new urbanism.” [Առցանց]. Հասանելի: http://www.pinelandsalliance.org/downloads/pinelandsalliance_84.pdf. [Մուտք: 16-մայիս-2015].
- [20] R. Ewing, O. Clemente, S. Handy, Ross C. Brownson, Emily Winston “Identifying and Measuring Urban Design Qualities Related to Walkability,” 2005. [Առցանց]. Հասանելի: http://activelivingresearch.org/files/FinalReport_071605.pdf. [Մուտք: 16-փետրվար-2015].
- [21] T. Elkin, D. McLaren, M. Hillman, Reviving the City: Towards Sustainable Urban Development. London: Friends of the Earth with Policy Studies Institute press, 1991. 278 pp.
- [22] ՀՀ ԱԺ, օրենք «Քաղաքաշինության մասին». 2014:
- [23] ՀՀ կառավարության, որոշում «Հայաստանի Հանրապետության համայնքների (քնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2ի 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին». 2011:
- [24] ՀՀ կառավարության, որոշում «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին». 2001:
- [25] ՀՀ ԱԺ, օրենք «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանման և օգտագործման մասին». 1998:
